ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ**

# Տարեկան Հաշվետվություն

2015

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



# ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

# Ուղերձ

Հարգելի ընթերցող

2015 թվականին Կենտրոնական բանկը իր առջև դրված խնդիրներն իրականացրել է համաշխարհային տնտեսությունից եկող բազմաբնույթ մարտահրավերների պայմաններում: Կենտրոնական բանկին հաջողվել է նվազեցնել գնաճային սպասումները, ինչին նպաստել են նաև արտաքին աշխարհից գնաճային ճնշումների բացակայությունը և բարենպաստ բնակլիմայական պայմաններում գյուղատնտեսական ապրանքների գների անկումը: 12-ամսյա գնաճը ցուցաբերել է սպասվածից ավելի նվազողական վարքագիծ, ինչի հետևանքով տարին ավարտվել է 0.1% գնանկման ցուցանիշով:

Տարվա ընթացքում 1.75 տոկոսային կետով նվազեցվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, և տարեվերջին 1 տոկոսով դրամավարկային պայմանների թուլացմամբ վերադարձ է կատարվել 2014 թվականի մինչև նոյեմբերի դրությամբ առկա բնականոն վիճակին:

2015 թվականի արտաքին ցնցումները մարտահրավեր էին նաև ֆինանսական համակարգի համար: Տարվա ընթացքում թեև արձանագրվել է վարկային պորտֆելի որոշակի վատացում, այդուհանդերձ ֆինանսական կայունությունը վտանգող զարգացումներ չեն դիտվել: Միևնույն ժամանակ, արձանագրվել է ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների, մասնավորապես՝ բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության աճ: 2015 թվականին Հայաստանում առաջին անգամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության՝ կապիտալի զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվել է ակտիվներով ապահովված պարտատոմսերի թողարկում:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը շարունակել է գործընկեր ֆինանսական կառույցների հետ բազմակողմանի համագործակցության խորա-

ցումը: Տնտեսության մի շարք թիրախային ոլորտների վարկավորման ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը Համաշխարհային բանկի, գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային կառույցների հետ: 2015 թվականին մեկնարկել է Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող գյուղատնտեսության, գյուղատնտեսության վերամշակման և զբոսաշրջության ոլորտներում ՓՄՁ վարկավորման ծրագիրը: Կարևոր է նաև Կենտրոնական բանկի և Չինաստանի ժողովրդական բանկի միջև «Հայկական դրամ/չինական յուան երկկողմանի սվոփ կարգավորումների մասին» համաձայնագրի ստորագրումը:

2015 թվականին Կենտրոնական բանկը, ներգրավված լինելով հանրության ֆինանսական կրթման մակարդակի բարձրացման ծրագրերում, ակտիվորեն շարունակել է իրականացնել ֆինանսական հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումներ՝ ուշադրության կենտրոնում պահելով մարզային բնակչությանը:

Հաշվետու տարում Կենտրոնական բանկն իր գործունեությունն իրականացրել է որդեգրած արժեքներին ու ռազմավարությանը համապատասխան, և բոլոր ձեռքբերումները Կենտրոնական բանկի անձնակազմի միասնական՝ թիմային աշխատանքի արդյունք են:

Կենտրոնական բանկի 2015 թվականի գործունեության ամբողջական պատկերն ամփոփված է տարեկան հաշվետվությունում, որն էլ ներկայացնում ենք Ձեր ուշադրությանը:

# Կառուցվածքը



# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
# Խորհուրդ





**Արթուր ՋԱՎԱԴՅԱՆ**
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



**Ներսես ԵՐԻՑՅԱՆ**
Նախագահի տեղակալ



**Վախթանգ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
Նախագահի տեղակալ



**Օլեգ ԱՂԱՍՅԱՆ**



**Ածոս ՄԿՐՏՉՅԱՆ**



**Արմենակ ԴԱՐԲԻՆՅԱՆ**



**Արթուր ՍՏԵՓԱՆՅԱՆ**



**Արկադի ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

# Բովանդակություն



10 **Կենտրոնական բանկ**

11 Կենտրոնական բանկի մասին

14 Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղությունների ամփոփում

17 **Գների կայունության ապահովում**

18 Դրամավարկային քաղաքականություն

24 **Ֆինանսական կայունության ապահովում**

25 Ֆինանսական համակարգի կայունություն, կարգավորում և վերահսկողություն

28 Վճարահաշվարկային համակարգ

31 Արժեթղթերի շուկա

32 **ՀՀ կենտրոնական բանկի այլ խնդիրներ**

33 Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում

38 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում

41 Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

44 Միջազգային պահուստների կառավարում

47 **Ինստիտուցիոնալ զարգացում**

48 Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ զարգացում

64 Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն

67 **ՀՀ կենտրոնական բանկի տարեկան ֆինանսական հաշվետվություն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ





# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը գների կայունության ապահովմանն ուղղված միջոցներ է ձեռնարկում, մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

## Կենտրոնական բանկի առաքելությունն է՝

- լինել միջազգայնորեն ճանաչված՝ որպես անկախ, դինամիկ զարգացող, հեղինակավոր, թափանցիկ, գիտելիքին միտված, միջազգային ֆինանսական համակարգի զարգացման միտումներին հետևող արդյունավետ կառույց,
- պահպանել տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդելու ինստիտուցիոնալ կարողությունները,
- մշտապես աջակցել երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը՝ լինելով տնտեսական մարտահրավերներին դիմակայելու գործում ՀՀ Կառավարության կարևոր գործընկերը:

## Կենտրոնական բանկի խնդիրներն են՝


- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը,
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը,
- հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը,
- արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

## Ռազմավարական ուղղություններ




## Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

- իրականացնում է դրամային շուկայում տոկոսադրույքների և դրամային իրացվելիության կառավարման գործառույթները, հանդիսանում է վերջին ատյանի վարկատու,
- իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը, ինչպես նաև հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- իրականացնում է բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների և ֆինանսական համակարգի այլ մասնակիցների լիցենզավորումը, դրանց գործունեության կարգավորումն ու վերահսկումը՝ որպես միասնական վերահսկողություն իրականացնող մարմին,
- կառավարում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները,
- իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը,
- իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին,
- իրականացնում է շուկայական վարվելակերպի կարգավորման և վերահսկողության, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:



# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ



2015 թվականին Կենտրոնական բանկն անցում է կատարել 2015-2017 թվականների ռազմավարությանը: Այդ փաստաթղթում ամրագրված է Կենտրոնական բանկի տեսլականը, համաձայն որի՝ Կենտրոնական բանկն իր հիմնական նպատակն իրականացնելիս ձգտում է բարձր պահել իր՝ որպես անկախ կառույցի և Հայաստանի Հանրապետությունում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում գների և ֆինանսական կայունության երաշխավորի հեղինակությունը՝ առաջնորդվելով տնտեսության կայուն զարգացման ապահովման և միջազգային շուկաներին ինտեգրվելու հեռանկարով, ձգտելով ունենալ ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարում:

2015 թվականին Կենտրոնական բանկի ջանքերն ուղղվել են իր առջև դրված խնդիրների լուծման ապահովման համար միջազգային լավագույն փորձի ներդրմանն ու կիրառմանը ֆինանսական հատվածում՝ ապահովելով վերջինիս բազմազանեցումը (դիվերսիֆիկացում) և համաչափ զարգացումը:

Կենտրոնական բանկի համար 2015 թվականին առաջնային են համարվել որոշակի խնդիրներ:

## Գների կայունության ապահովում

2015 թվականին դրամավարկային քաղաքականությունը նպատակաուղղվել է գների կայունության ապահովմանը և գնաճի նպատակային թիրախի շրջանակներում հասարակության գնաճային սպասումների խարսխմանը՝ նախադրյալներ ստեղծելով երկարատև հատվածում կայուն տնտեսական աճի ապահովման համար: 2015 թվականի սկզբին ձևավորվել են համեմատաբար բարձր գնաճային միջավայր և գնաճային բարձր սպասումներ՝ պայմանավորված արտաքին գործոնների ազդեցության պարագայում ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում ստեղծված լարվածությամբ: Լողացող արժութային քաղաքականության սկզբունքների ու դրամավարկային քաղաքականության թափանցիկության բարձր մակարդակի ապահովման պայմաններում իրականացված դրամավարկային քաղաքականությունը նպաստել է ինչպես վերոնշյալ լարվածության չեզոքացմանը, այնպես էլ բարձր գնաճային սպասումների աստիճանական մեղմմանը: Տարեվերջին, արտաքին հատվածում ձևավորված գնանկումային միջավայրի և ՀՀ տնտեսությունում գյուղատնտեսության դրական զարգացումների ազդեցությամբ պայմանավորված, դիտվել է գնաճի՝ առավել արագ տեմպերով նվազում, որից ելնելով, Կենտրոնական բանկը կտրուկ թուլացրել է դրամավարկային պայմանները՝ հետագայում գնաճային միջավայրի ընդլայնմանը և կանխատեսվող 3 տարվա հորիզոնում գնաճի նպատակի իրագործմանը նպաստելու նկատառումով:

## Ֆինանսական կայունության ապահովում

Ֆինանսական կայունության ապահովման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը 2015 թվականին շարունակել է ֆինանսական կայունության ամրապնդմանն ուղղված աշխատանքները, իրականացրել է կարգավորման դաշտի կատարելագործման և վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցառումներ: Ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի բարձրացման պահանջի պարագայում բանկերը սկսել են աշխատանքներ իրականացնել կապիտալի համալրման ուղղությամբ: Կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի մակարդակի բարձրացման նպատակը երկարաժամկետում ֆինանսական համակարգի կայունության ապահովումն է, որը բանկերին հնարավորություն կտա սթրեսային իրավիճակներում կլանելու ռիսկերի ավելի բարձր մակարդակ:

Արժեթղթերի շուկայի զարգացման տեսանկյունից կարևոր է ընդգծել ՀՀ կապիտալի շուկայի նոր գործիքի՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումը:

## ՀՀ կենտրոնական բանկի այլ խնդիրներ

**Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում:** 2015 թվականին կանխիկ դրամաշրջանառության արդյունավետ կազմակերպման նպատակով շարունակվել են ՏԴԿ-ների ցանցի օպտիմալացման աշխատանքները, որի արդյունքում դադարեցվել է Հրազդանի ՏԴԿ-ի աշխատանքը:

2015 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է հուշադրամ և հուշամեդալներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Մոսկվայում կայացած «Դրամների համաստեղություն-2015» միջազգային մրցույթում Կենտրոնական բանկը 4 արծաթե հուշադրամներից բաղկացած «Աշխարհի ամենահին ծառերը» հավաքածուով արժանացել է պատվավոր մրցանակի՝ «Տարվա հավաքածու» անվանակարգում:

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում:** 2015 թվականը նշանավորվեց նրանով, որ Եվրոպայի խորհրդի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունն առաջին երկիրն է, որի՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ/ՋՈՋ) ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը գնահատվել է 2012 թվականին վերանայված ՖԱԹՖ 40 հանձնարարականների համաձայն: 2015 թվականին հաստատվել է ««ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ վեր հանված խնդիրների լուծման» եռամյա գործողությունների ծրագիրը, որն ուղղված է «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ վեր հանված խոցելի կողմերի վերացմանը և ՓԼ/ԱՖ սպառնալիքներին դիմակայելու արդյունավետության բարձրացմանը:

**Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:** 2015 թվականի ընթացքում Կենտրոնական բանկն իրականացրել է բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Միջոցառումներն իրականացվել են ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում՝ նախապես ընտրված տարբեր թիրախային խմբերի համար:

**Միջազգային պահուստների կառավարում:** 2015 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել միջազգային պրակտիկայում արտարժութային պահուստներին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ միջազգային պահուստների կառավարումն իրականացվել է միջազգային, ֆինանսական, տնտեսական և քաղաքական զարգացումների ներքո:



## Ինստիտուցիոնալ զարգացում

2015 թվականին, Կենտրոնական բանկի կառավարման կառուցվածքի բարելավման նպատակով, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն է կատարվել, ըստ որի սահմանվել են Կենտրոնական բանկի նախագահի երկու տեղակալներ:

Կարևորելով տեղեկատվական անվտանգության ոլորտի զարգացումը՝ Կենտրոնական բանկը շարունակել է բարելավել Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգը: 2015 թվականի առաջին եռամսյակում Կենտրոնական բանկն անցել է վերավկայագրում ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտով (նոր խմբագրություն): Բացի այդ, բանկերի զգալի մասը վկայագրվել է ISO/IEC 27001 «Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր» ստանդարտին: Վերջինիս ներդրումը սկսվել է նաև ֆինանսական համակարգի այլ կազմակերպություններում:

Խորացվել են երկկողմ և բազմակողմ համագործակցությունները Կենտրոնական բանկի գործընկեր կառույցների, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Շարունակել է զարգանալ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Դիլիջանի կենտրոն): 2015 թվականին կազմակերպվել են ինչպես խորացված, այնպես էլ Կենտրոնական բանկի անձնակազմի կառավարչական հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք դասընթացներ, որոնք վարել են աշխարհի լավագույն բուհերից հրավիրված հեղինակավոր մասնագետներ: Կենտրոնում իր գործունեությունն իրականացնող տնտեսական հետազոտությունների վարչությունը շարունակել է մակրոտնտեսական և միկրոտնտեսագիտական հետազոտությունները՝ նպատակաուղղված դրամավարկային, ֆինանսական քաղաքականությունների արդյունավետ իրականացմանը: Տնտեսական հետազոտությունների վարչության աշխատակիցների համար ընտրվել են գիտահետազոտական աշխատանքի թեմաներ. նրանց հոդվածները նախատեսվում է հրատարակել աշխարհի լավագույն պարբերականներում, հանդեսներում: Դիլիջանի կենտրոնում ամառային աշխատանքային պրակտիկա են անցել Հարվարդի համալսարանի մի շարք ուսանողներ:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների մոտ 20%-ը (144 աշխատակից) աշխատում է Դիլիջանի կենտրոնում:

# ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ





# ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը



Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ **Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է**, որով Կենտրոնական բանկը նպաստում է երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացմանը: Գների կայունությունը ենթադրում է գնաճի որոշակի մակարդակ, որը Կենտրոնական բանկի կողմից ընդունվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախը ամրագրվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և կայուն զարգացման ծրագրերում (ներկայումս՝ «Երկարաձգվող ֆինանսավորման եռամյա ռազմավարական ծրագիր»): Կենտրոնական բանկն ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները:

Կենտրոնական բանկում, գնաճի նպատակադրման ռազմավարության համատեքստում, որպես միջանկյալ նպատակ գնաճի կանխատեսված մակարդակն է, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը Հայաստանի Հանրապետությունում ռեպո տոկոսադրույքն է (վերաֆինանսավորման տոկոսադրույք), որը սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներն ուժի մեջ են մտնում սահմանմանը հաջորդող օրվանից:

Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո էապես կարևորվում է Կենտրոնական բանկի հաղորդակցությունը հասարակության հետ, որի հիմնա-

կան ուղիներից մեկը Գնաճի եռամսյակային հաշվետվությունների հրապարակումն է[1]: Գնաճի հաշվետվության առաջին բաժինը ներառում է հաջորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը, իսկ երկրորդ բաժինը՝ նախորդ եռամսյակի գնաճի ծրագրի իրագործմանն ուղղված դրամավարկային քաղաքականության կատարման հաշվետվությունը:





## Հիմնական խնդրի իրագործումը

2015 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրի համաձայն, որում հաշվի էին առնված նախորդ տարեվերջին աշխարհում և տարածաշրջանում ընթացող զարգացումների ազդեցությունները, կանխատեսվում էր, որ **12-ամսյա գնաճը տարեսկզբին փոքր-ինչ ավելանալու էր**: Այնուհետև, նախորդ տարեվերջից Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային պայմանների զգալիորեն խստացման արդյունքում, ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում առկա լարվածության մեղմման, ինչպես նաև արտաքին և ներքին տնտեսություններում սպասվող թույլ պահանջարկի պայմաններում **գնաճն աստիճանաբար նվազելու էր**:

2014 թվականի վերջին Կենտրոնական բանկի իրականացրած զսպողական դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ **2015 թվականի առաջին եռամսյակում** գնաճային բարձր սպասումները որոշ չափով մեղմվել էին, ինչով պայմանավորված՝ ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում ստեղծված լարվածությունը հիմնականում չեզոքացել էր: Ելնելով դրանից՝ **Կենտրոնական բանկը 2015 թվականի առաջին եռամսյակում զգալիորեն թուլացրել է դրամավարկային պայմանները՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը տարեսկզբի 20%-ից աստիճանաբար իջեցնելով 12%-ի**: Միաժամանակ, զարգացող երկրներում ներդրումների ռիսկերի և տոկոսադրույքների աճի միտումների պայմաններում երկարաժամկետ հատվածում, ՀՀ դրամավարկային դիրքը պահպանելու նպատակով, 2015 թվականի առաջին եռամսյակում **Կենտրոնական բանկը ճշգրտել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 10.5%**: Նշված քայլերի արդյունքում, 2015 թվականի առաջին եռամսյակի վերջում, Կենտրոնական բանկը վերականգնել է վերաֆինանսավորման տոկոսադրույքից լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքի բնականոն՝ 1.5 տոկոսային կետով հեռացվածությունը և նվազեցրել շուկայական կարճաժամկետ դրամային տոկոսադրույքները: Տոկոսադրույքի փոփոխությանը զուգընթաց՝ 2015 թվականի առաջին եռամսյակում կիրառվել են նաև մի շարք մակրոպրուդենցիալ միջոցառումներ. մասնավորապես՝ բանկերի կողմից ներգրավված երկարաժամկետ միջոցների դիմաց **պարտադիր պահուստավորման զրոյական կամ թույլ մեխանիզմ,** արտաքին վարկանիշերի առկայության դեպքում ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների և արտահանմամբ զբաղվող վարկառուների արտարժութային վարկերի համար սահմանվող ռիսկի կշիռների մեղմացում:

Նշված ժամանակահատվածում, դեռևս պահպանվող բարձր գնաճային սպասումների ներքո **12-ամսյա գնաճն ավելացել է՝ տարեվերջի 4.6%-ից մարտի վերջին հասնելով 5.8%-ի**:


**2015 թվականի երկրորդ** և **երրորդ եռամսյակներում** պահպանվել է համեմատաբար կայուն գնաճային միջավայր՝ աստիճանաբար նվազող վարքագծով. նշված ժամանակահատվածում արձանագրվել է 4.2% գնանկում՝ պայմանավորված հիմնականում գյուղատնտեսության ճյուղի դրական զարգացումներով, ինչի պարագայում **12-ամսյա գնաճը սեպտեմբերի վերջին իջել է 3.3%:**

1 Մանրամասն տե՛ս Կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն» պարբերականում (www.cba.am):

Հաշվի առնելով դեռևս առկա բարձր գնաճային սպասումները, ինչի մասին էր վկայում սեզոնային ապրանքներից զտված 12-ամսյա գնաճի համեմատաբար բարձր մակարդակը (սեպտեմբերի վերջին՝ 4.4%), ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի հնարավոր բարձրացումը՝ նշված ժամանակահատվածում **Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցրել է ընդամենը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 10.25%**:


Չնայած տարվա ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականության խթանող ազդեցությանը՝ **չորրորդ եռամսյակում** ներքին պահանջարկը շարունակել է պահպանվել ցածր մակարդակում, ինչը, արտաքին գնանկումային միտումների ազդեցության, գյուղատնտեսության ճյուղի արտադրանքի մեծ առաջարկի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման՝ անորոշ ժամանակով հետաձգման հետ մեկտեղ, հանգեցրել է 12-ամսյա գնաճի՝ սպասվածից ավելի արագ տեմպերով նվազմանը: **Չորրորդ եռամսյակի արդյունքներով գրանցվել է 1.9% գնաճ**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5.4%-ի փոխարեն, որի պարագայում 12-ամսյա գնաճը դեկտեմբերի վերջին իջել է մինչև -0.1% *(տե՛ս գծապատկեր 1)*: Այս իրավիճակում Կենտրոնական բանկը նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում զգալիորեն թուլացրել է դրամավարկային պայմանները՝ **նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.5 տոկոսային կետով և դեկտեմբերի վերջին սահմանելով 8.75%** *(տե՛ս գծապատկեր 2)*: Գնահատվում է, որ հիմնականում հաղթահարված էին նախորդ տարեվերջից առաջացած գնաճային ռիսկերը, և դրամավարկային պայմանների նման կտրուկ թուլացման արդյունքում վերադարձ էր կատարվում 2014 թվականի մինչև նոյեմբերին առկա բնականոն իրավիճակին: Տարեվերջին դրամավարկային պայմանների զգալի թուլացումը հետագայում կնպաստի գնաճային միջավայրի աստիճանաբար ընդլայնմանը և գնաճի նպատակի իրագործմանը կանխատեսվող հորիզոնում:

**Գծապատկեր 1.** 2015 թվականին 12-ամսյա գնաճը ցուցաբերել է սպասվածից ավելի նվազողական վարքագիծ, ինչի հետևանքով տարին ավարտվել է 0.1% գնանկման ցուցանիշով



**Ֆինանսական շուկայում տոկոսադրույքները** տարվա ընթացքում հիմնականում դրսևորել են Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխություններին համահունչ վարքագիծ: Շուկայական տոկոսադրույքներն առավել արագ տեմպերով նվազել են տարվա առաջին կեսին, իսկ այնուհետև կայունացել և տատանվել վերաֆինանսավորման տոկոսադրույքի շրջակայքում *(տե՛ս գծապատկեր 2)*:

**Գծապատկեր 2.** 2015 թվականին կարճաժամկետ տոկոսադրույքների վարքագիծը համահունչ է եղել Կենտրոնական բանկի հիմնական գործիքի տոկոսադրույքի փոփոխություններին




## Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացի բարելավում և կատարելագործում

Կենտրոնական բանկի **կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի (ԿՔՎՀ)** զարգացման ու կատարելագործման արդյունքում բարելավվում են կանխատեսումների քանակական և որակական հատկանիշները: Դրանք օգնում են Կենտրոնական բանկի խորհրդին ճիշտ պատկերացում կազմելու առկա մակրոտնտեսական իրավիճակի մասին և կայացնելու հիմնավոր որոշումներ դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ: Մասնավորապես՝ 2015 թվականին վերամշակվել է **Կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը (ԿՔՎՀ)** ներկայացնող փաստաթուղթը, որում նկարագրված են ինչպես Կենտրոնական բանկում կանխատեսումների իրականացման և որոշումների ընդունման ընթացակարգերը, այնպես էլ վերջիններիս հիմքում ընկած մոդելային ողջ գործիքակազմն ու դրա կիրառական նշանակությունը:

2015 թվականին շարունակվել են տնտեսության տարբեր հատվածների **կարճաժամկետ կանխատեսման, աջակցող և արբանյակային մոդելների** մշակման և կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես՝ գնաճի կանխատեսումների որակի բարելավման նպատակով **ընդլայնվել է սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի վրա հիմնված գնաճի կարճաժամկետ կանխատեսման մոդելը**՝ տարանջատելով ապրանքախմբերն ըստ ծագման (ներմուծված և տեղական), սեզոնայնության և գների կարգավորման մեխանիզմների (կարգավորվող ու չկարգավորվող ծառայություններ):

2015 թվականին լրամշակվել և կատարելագործվել է **համաշխարհային տնտեսության կանխատեսման մոդելային համակարգը**, այդ թվում՝ վերանայվել են Ռուսաստանի տնտեսության, միջազգային ապրանքային շուկաների կանխատեսումային հատվածները, ներդրվել են պարենային և հումքային ապրանքների շուկաների դետալացված կանխատեսումների արբանյակային մոդելներ, ինչպես նաև կառուցվել է կանխատեսումների իրականացման և մուտքային ու ելքային արդյունքների պահպանման միասնական համակարգ:

Տարվա ընթացքում մշակվել և գործարկվել է **աշխատանքի շուկան բնութագրող Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ կամ DSGE) դասի մոդելը**, որտեղ ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն միգրացիան: Մոդելի օգնությամբ հնարավոր է առավել հստակ պատկերացնել աշխատանքի շուկայում տեղի ունեցող զարգացումները՝ հաշվի առնելով աշխատուժի առաջարկի փոփոխությունը միգրացիայի տեսանկյունից, ինչպես նաև վերլուծել և կանխատեսել ՌԴ-ից ՀՀ դրամական փոխանցումների վարքագիծը՝ հաշվի առնելով ռուբլի/դրամ փոխարժեքի, ՌԴ տնտեսական աճի և դեպի ՌԴ միգրացիայի գործոնների ազդեցությունը:

2015 թվականին շարունակվել են աշխատանքները **ԿՔՎՀ մոդելային համակարգի տվյալների բազայի նոր տարբերակի մշակման ուղղությամբ**, ինչը հնարավորություն կտա ագրեգացնել ամբողջ գործընթացի տվյալները մեկ բազայում և բարձրացնել դրա կառավարման արդյունավետությունը:

## Վիճակագրություն

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում և հրապարակում է դրամավարկային, ֆինանսական հատվածի և արտաքին հաշիվների վիճակագրությունը, որն օգտագործվում է Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության մշակման, ֆինանսական կայունության ապահովման, վճարահաշվարկային համակարգի զարգացման, ֆինանսական վերահսկողության և այլ գործառույթների իրականացման ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից հավաքագրվող և հրապարակվող վիճակագրությունն օգտագործվում է նաև պետական գերատեսչությունների, ֆինանսական շուկայի մասնակիցների, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և հանրության կողմից:

2015 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ժամանակին հանրությանը ներկայացնել արժանահավատ վիճակագրական տվյալներ: Իրականացվել են հրապարակվող վիճակագրական տվյալների շրջանակների ընդլայնման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման աշխատանքներ[2]:

2 ՀՀ կենտրոնական բանկի կողմից վիճակագրությունը հրապարակվում է՝ «ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագրում» (ամսական պարբերական) (https://www.cba.am/am/SitePages/statspmonthlybulletin.aspx), «Կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագրում» (տարեկան պարբերական) (https://www.cba.am/am/SitePages/statspmonthlybulletin.aspx), և Կենտրոնական բանկի տնային էջի «Վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statdatabank1.aspx):


## Նոր տվյալների հավաքագրում և հաշվարկ

2015 թվականից Կենտրոնական բանկը եռամսյակային պարբերականությամբ «ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր» ամենամսյա պարբերականում և Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակում է պարտադիր կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ֆինանսական և հանրային իրազեկման բնույթի տեղեկատվություն: Հրապարակվող տեղեկատվությունը ներառում է տվյալներ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, այն է՝ զուտ ակտիվների արժեքի (ԶԱԱ) և դրա հիմնական բաղադրիչների, կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների, թողարկված և մարված փայերի քանակների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրության բարելավման նպատակով նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների օտարերկրյա ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տվյալների ստացման վերաբերյալ:

Շարունակվել են ընտրանքային հետազոտությունների մեթոդաբանության կատարելագործման և հարցումների միջոցով ՀՀ տնտեսության վերաբերյալ նոր տվյալների հավաքագրման աշխատանքները: Իրականացվել են մի շարք թեմատիկ և նպատակային հարցումներ, որոնց արդյունքներն օգտագործվել են հիմնականում Կենտրոնական բանկում՝ դրամավարկային քաղաքականության իրականացման շրջանակներում:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ





# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ



2015 **թվականին աշխարհաքաղաքական և տնտեսական անորոշությունների խորացման պայմաններում ֆինանսական համակարգը վարել է պահպանողական վարկային և ներդրումային քաղաքականություն[3]:** Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 89.2%-ը *(տե՛ս գծապատկեր 3):*


Աշխարհաքաղաքական խնդիրներից բխող անորոշությունների խորացման պայմաններում բանկային համակարգը 2015 թվականին վարել է պահպանողական վարկային քաղաքականություն: Բանկային համակարգի ակտիվներն աճել են 1.4%-ով, ընդհանուր կապիտալը՝ 9.6%-ով, իսկ պարտավորությունները գրեթե չեն փոփոխվել: Արդյունքում՝ բանկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշների նկատմամբ անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճի պայմաններում արձանագրվել է ֆինանսական միջնորդության որոշակի նվազում[4]: Բանկային համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 6.0 և 5.5 տոկոսային կետով՝ կազմելով 68.5% և 39.8% *(տե՛ս գծապատկեր 4)*: Ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի բարձրացման պահանջի պայմաններում բանկերը համալրել են ընդհանուր կապիտալը (ընդհանուր 74 մլրդ դրամով), ինչը շարունակվելու է նաև հաջորդ տարում:

Համապատասխան կողմերին արտակարգ իրավիճակների ժամանակ արագ արձագանքման պատրաստ լինելու նպատակով 2015 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է կազմակերպել ֆինանսական ճգնաժամի կառավարման սիմուլյացիոն վարժանքներ՝ ներգրավելով Ֆինանսների նախարարության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ղեկավար անձանց: Բանկերում ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվել են Բազել 3-ի ներդրման հետ կապված աշխատանքները,


3 Մանրամասն տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի «Ֆինանսական կայունության հաշվետվություն»:

4 Ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշների նվազումը մասամբ պայմանավորված է անվանական համախառն ներքին արդյունքների հաշվարկի մեթոդական փոփոխություններով:

**Գծապատկեր 3.** Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը ըստ ֆինանսական հաստատությունների




**Գծապատկեր 4.** Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը



մասնավորապես՝ իրացվելիության ռիսկի կառավարման բազելյան նոր մոտեցումների՝ իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման գործակցի (NSFR) ներդրման ուղղությամբ: Այդ նպատակով, սկսած 2015 թվականի օգոստոսից, բանկերն ամսական պարբերականությամբ հաշվետվություններ են ներկայացնում Կենտրոնական բանկ: Դրանք հնարավորություն են տալիս Կենտրոնական բանկին գնահատելու նորմատիվների ներդրման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտելու ՀՀ բանկային համակարգին բնորոշ խնդիրները և տալու համապատասխան լուծումներ:

Ավանդատուների շահերի պաշտպանության, ինչպես նաև բանկային համակարգի նկատմամբ սպառողների վստահության բարձրացման նպատակով, ի լրումն մի շարք այլ միջոցառումների, 2015 թվականին իրականացվել է ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման սահմանաչափերի բարձրացում 4-ից մինչև 10 մլն և 2-ից մինչև 5 մլն դրամ՝ համապատասխանաբար դրամով և արտարժույթով ներգրավված ավանդների համար:

2015 թվականին ՀՀ կենսաթոշակային համակարգի զարգացումների պարագայում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարիչներն իրականացրել են ներդրումներ բաժնային արժեթղթերում, պետական և ոչ պետական պարտատոմսերում՝ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվները դարձնելով առավել բազմազանեցված: 2015 թվականին կենսաթոշակային համակարգի մասնակիցների թիվն ավելացել է 30 հազարով և տարեվերջին կազմել 140 հազար մարդ:

2015 թվականին շարունակվել են ավտոապահովագրության միասնական պատուհանի (ԱԱՄՊ) ներդրման աշխատանքները: ԱԱՄՊ-ն ընդհանուր էլեկտրոնային միջավայր է, որը և՛ համակարգի օգտագործողներին, և՛ ապահովագրական ընկերություններին հնարավորություն է տալու կառավարելու ԱՊՊԱ պայմանագրերի կնքման, վնասների գնահատման, պատահարների և հատուցման կառավարման ողջ գործընթացները մեկ ընդհանուր հարթակում: ԱԱՄՊ-ի ներդրումն իրականացվում է Բյուրո Վերիտաս կազմակերպության հետ համատեղ:

**Ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական հաստատությունների գործունեության ռիսկայնության մակարդակի գնահատման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2015 թվականին Կենտրոնական բանկը վերջիններիս նկատմամբ շարունակել է իրականացնել վերահսկողություն (փաստաթղթային և տեղերում):**

Փաստաթղթային վերահսկողության միջոցով ֆինանսական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների, ֆինանսական կազմակերպությունների վերաբերյալ շրջանառվող տեղեկությունների, սպառողներից ստացված բողոքների և այլ տեղեկատվության հիման վրա Կենտրոնական բանկն իրականացնում է վերջիններիս ֆինանսական գործունեության ամենօրյա մշտադիտարկում, ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություններ, բացահայտում է ռիսկերը, գնահատում գործունեության համապատասխանությունն իրավական դաշտին և անհրաժեշտության դեպքում՝ արագ արձագանքում:


Տեղերում ստուգումներն իրականացվում են ինչպես բոլոր ուղղություններով (համալիր ստուգումներ), այնպես և նպատակային (կոնկրետ գործունեության ստուգում): 2015 թվականին շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի բացահայտման, գործարար վարվելակերպի, հրապարակ-

վող տեղեկատվության արժանահավատության և այլնի նկատմամբ վերահսկողական ստուգումները: 2015 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է 129 «տեղերում ստուգումներ», մասնավորապես՝

- բանկերում բոլոր ուղղություններով՝ 3 և նպատակային՝ 13 ստուգում,
- վարկային կազմակերպություններում բոլոր ուղղություններով՝ 4 ստուգում և նպատակային՝ 2 ստուգում,
- ապահովագրական ընկերություններում բոլոր ուղղություններով 3 ստուգում,
- ներդրումային ընկերություններում բոլոր ուղղություններով 3 ստուգում,
- ֆինանսական շուկայի այլ մասնակիցների 101 ստուգում (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն):

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները վերացվել են, և ձեռնարկվել են միջոցառումներ՝ հետագայում նման խախտումները կանխելու նպատակով:

# ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Կենտրոնական բանկը 2015 թվականին շարունակել է աշխատանքները վճարահաշվարկային համակարգերի ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման, անկանխիկ վճարումների ծավալի ընդլայնման ուղղությամբ:

## Էլեկտրոնային վճարումների համակարգ

Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ ԷՎՀ) իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 44%-ով՝ կազմելով 63.0 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 4%-ով՝ կազմելով 14 հազար: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալի աճը հիմնականում պայմանավորվել է առաջին կիսամյակում Կենտրոնական բանկի հետ իրականացված գործառնությունների աճով: Արդյունքում՝ մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը կազմել է մոտ 4.4 մլն դրամ՝ ավելանալով մոտ 39%-ով:

## Արժեթղթերի հաշվարկային համակարգեր

2015 թվականին Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով (այսուհետ՝ ՊԱՀՀՀ) կատարվել է մոտ 145 մլրդ դրամ անվանական արժեքով արժեթղթերի առաջնային տեղաբաշխում, ինչը գրեթե երկու անգամ ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

ՊԱՀՀՀ-ով երկրորդային շուկայի արտաբորսայական գործարքների (առուվաճառք, գրավադրում, գրավից հանում, ռեպո, հակադարձ ռեպո) հետ կապված՝ իրականացվել են մոտ 6305 մլրդ դրամ անվանական արժեքով 32374 գործառնություններ և բորսայական դեպոնացումների հետ կապված՝ 709 մլրդ դրամ անվանական արժեքով 10551 գործառնություններ:

## Դրամական փոխանցումների իրականացման համակարգեր

2015 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն են ունեցել երկու հայաստանյան համակարգ: Միջազգային դրամական փոխանցումների ոլորտում շարունակում են կարևոր դեր խաղալ արտասահմանյան վճարային համակարգերը: 2015 թվականի վերջի դրությամբ ՀՀ բանկերն ու վճարահաշվարկային կազմակերպությունները անդամակցել են 12 արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգերի:

2015 թվականին շարունակվել են դրամական փոխանցումների հայաստանյան միասնական համակարգի՝ ԱՐՈՒՍ-ի նախագծման աշխատանքները, որի նպատակը դրամական փոխանցումների ոլորտի բարելավումն է և ֆինանսական կայունության ամրապնդումը: 2015 թվականին միջազգային փորձագետների կողմից նաև իրականացվել է նպատակահարմարության վերլուծություն (feasibility study), որի արդյունքում նույնպես նպատակահարմար է գտնվել ԱՐՈՒՍ-ի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում: Տվյալ համակարգի գործարկման արդյունքում հնարավոր կլինի բարելավել վճարային ռիսկերի կառավարումը և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը, արդյունավետ լուծել վճարային համակարգերի ինտեգրման գործընթացում առաջացող խնդիրները:


## Վճարային գործիքներ

2015 թվականի տարեվերջին հաճախորդներին վճարային քարտեր են տրամադրել և սպասարկել ՀՀ տարածքում գործող 19 առևտրային բանկեր: Ընդ որում՝ ՀՀ բանկերից 18-ը անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:


Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 5.6%-ով և կազմել 1.7 մլն *(տե՛ս գծապատկեր 5):*

2015 թվականին ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 1 տրլն 358.1 մլրդ դրամի գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 14%-ով և կազմել 160.3 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 47.6 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 12.4 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 32.2 մլրդ դրամ): Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների (այդ թվում՝ ինտերնետ գործառնություններ) տեսակարար կշիռն ընդհանուր քարտային գործառնություններում 2014 թվականի համեմատ աճել է 1.5 տոկոսային կետով և կազմել 11.8% *(տե՛ս գծապատկեր 6)*:

**Գծապատկեր 5.** ՀՀ բանկերի տրամադրած վճարային քարտերը 2007–2015 թթ.




**Գծապատկեր 6.** Վճարային քարտերով իրականացրած գործառնություններ[5]




5 2014 թվականի տվյալները ճշգրտվել են «ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն 2014» պարբերականի հրապարակումից հետո:

2015 թվականին բարելավվել է վճարային գործիքների իրավական դաշտը: Մասնավորապես՝ վճարային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ քարտապանների վստահությունը բարձրացնելու նպատակով սահմանվել են քարտերով կատարվող զեղծարարությունների կանխարգելմանն ուղղված մի շարք պահանջներ, ինչպես նաև քարտով կատարված զեղծարարության դեպքում քարտապանի շահերը պաշտպանող դրույթներ:

Փոփոխություններ են իրականացվել նաև էլեկտրոնային փողերի սպասարկումը կարգավորող իրավական ակտերում՝ առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողերով վճարումների կատարման և զարգացման համար:

Նպատակ ունենալով վճարումների և փոխանցումների իրականացման ժամանակ կիրառել միասնական մոտեցում՝ Կենտրոնական բանկը սահմանել է Հայաստանի Հանրապետության տարածքում վճարումների և փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ ոչ միայն բանկերի, այլև վճարահաշվարկային կազմակերպությունների համար:

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ



Կենտրոնական բանկը ակտիվ աշխատանքներ է իրականացնում նաև արժեթղթավորման մեխանիզմի գործարկման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման ուղղությամբ: 2015 թվականին ՀՀ-ում առաջին անգամ թողարկվել են ակտիվներով ապահովված արժեթղթեր: Թողարկված պարտատոմսերի համար որպես ապահովություն հիմք են ծառայել 5 վարկային կազմակերպություններից ձեռք բերված ՓՄՁ, գյուղատնտեսական և սպառողական մոտ 600 վարկերը՝ 1.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Թողարկումն իրականացվել է 2015 թվականի դեկտեմբերին: 2015 թվականի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացվել է 1 թողարկողի բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխում (IPO):


Կենտրոնական բանկը շարունակում է օժանդակել կորպորատիվ պարտատոմսերի շուկային: 2015 թվականի ընթացքում միջազգային կազմակերպությունները և ՀՀ ֆինանսական կազմակերպությունները (բանկեր և վարկային կազմակերպություններ) տեղաբաշխել են 15 մլն ԱՄՆ դոլար և 6 մլրդ ՀՀ դրամ ծավալով կարճաժամկետ և միջնաժամկետ կորպորատիվ պարտատոմսեր:

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ





# ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ



Ազգային արժույթի շրջանառության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կազմակերպում, կարգավորում և վերահսկում է կանխիկ դրամի շրջանառությունը՝ պահպանելով անընդհատության և հուսալիության սկզբունքները:


Կենտրոնական բանկն իր հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնում է Երևան քաղաքում գտնվող գլխավոր գրասենյակի դրամարկղի և տարածքային դրամարկղային կենտրոնների (այսուհետ՝ ՏԴԿ) միջոցով: 2015 թվականին կանխիկ դրամաշրջանառության արդյունավետ կազմակերպման նպատակով շարունակվել են ՏԴԿ-ների ցանցի օպտիմալացման աշխատանքները: Տարվա ընթացքում դադարեցվել է Հրազդանի տարածքային դրամարկղային կենտրոնի աշխատանքը:

2015 թվականին Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը կազմել է 1926.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 8.6%-ով: Դրամարկղային շրջանառության ընդհանուր ծավալի 20.4%-ն ապահովվել է ՏԴԿ-ների միջոցով՝ առավելապես իրականացնելով կանխիկի ելքագրման գործառնություններ. դրամարկղային ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության ընդհանուր ծավալի 78.8%-ը *(տե՛ս գծապատկեր 7):*


2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի ծավալը կազմել է 413.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 0.3%-ով: Շրջանառության մեջ առավել մեծ չափով նվազել են 50 000 և 100 000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների ծավալները, առավել բարձր տեմպերով աճել են 100 և 200 դրամ անվանական արժեքներով մետաղադրամների ծավալները:

Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ 1000 դրամանոց թղթադրամների պահանջը բավարարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի դրամական պահուստները համալրվել են 1000 դրամ անվանական արժեքով 2015 թվականի նմուշի թղթադրամով, որը շրջանառության մեջ է դրվել 2015 թվականի դեկտեմբերի 21-ին:

**Գծապատկեր 7.** Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2015 թվականին




**Գծապատկեր 8.** Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 31.12. 2015 թվականի դրությամբ



Կենտրոնական բանկի ռազմավարական զարգացման հիմնական խնդիրներից են կանխիկ դրամով իրականացվող գործառնությունների, դրանց հետ կապված տեղեկատվության հոսքերի ավտոմատացումը և դրամանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը: 2015 թվականի ընթացքում շարունակվել են կեղծ դրամանիշերի վերաբերյալ տեղեկատվական բազայի ընդլայնման և բարելավման, ինչպես նաև փորձաքննություն անցած վճարունակ և անվճարունակ դրամանիշերի վերաբերյալ տեղեկատվության գրանցման ու ամփոփման միասնական տվյալների բազայի ստեղծման աշխատանքները: Դրամանենգության դեմ պայքարի կազմակերպման նպատակով շարունակվել է համագործակցությունը ՀՀ իրավապահ մարմինների հետ, որի շրջանակներում իրականացվել են վերլուծական աշխատանքներ Կենտրոնական բանկի կողմից հայտնաբերված կեղծ դրամանիշերի պատրաստման եղանակների, կատարման ձևերի և խմբավորման վերաբերյալ:

Կենտրոնական բանկը վերազինվել է դրամանիշերի փորձաքննության համար անհրաժեշտ նորագույն տեխնիկայով, ինչը հնարավորություն է տալիս իրականացնելու կեղծ դրամանիշերի պատրաստման եղանակների մանրազնին հետազոտություններ, ինչպես նաև ՀՀ դրամանիշերի նմուշների տեխնիկական չափանիշների ճշգրիտ որոշում: Իրականացվել են ՀՀ դրամանիշերի հեռավար փորձաքննության համակարգի ներդրման և շահագործման աշխատանքներ: ՀՀ թղթադրամների պաշտպանական հատկանիշների վերաբերյալ մշակվել է տեղեկատվական բրոշյուր և տրամադրվել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերին:









2015 թվականին նշվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Այդ կապակցությամբ, Կենտրոնական բանկը 1000 տպաքանակով թողարկել է 67.2 գ քաշով և հնաոճ ձևավորված արծաթե հուշադրամ, որի վրա պատկերված են աշխարհի տարբեր երկրներում տեղադրված՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողների դրվագներ:

Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հետ համատեղ թեմատիկ քննարկումների արդյունքում թողարկել է հուշամեդալների «Նահատակված հայ մտավորականներ» և «Կորստի և պայքարի կոթողներ» հավաքածուները, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած 8 արծաթե հուշամեդալից:

«Նահատակված հայ մտավորականներ» հավաքածուն ներկայացնում է 1915 թվականի ապրիլի 24-ին և հաջորդ օրերին թուրքական իշխանությունների հրահանգով ձերբակալված և աքսորված հայ մտավորականների՝ գրողների, մանկավարժների, լրագրողների, բժիշկների, թուրքական խորհրդարանի անդամների ու հասարակական գործիչների, որոնց մեծ մասը դաժանորեն սպանվեց: Հավաքածուն ներառում է «Նազարեթ Տաղավարյան», «Ռուբեն Սևակ», «Դանիել Վարուժան», «Թլկատինցի», «Սիամանթո», «Գրիգոր Զոհրապ», «Ռուբեն Զարդարյան» հուշամեդալները:




Հայոց ցեղասպանության տարիներին հայերի զանգվածային կոտորածներն ուղեկցվել են հայկական մշակութային հարուստ ժառանգության ոչնչացմամբ. կողոպտվել են մշակութային կոթողներ՝ վանքեր, եկեղեցիներ, կրթական հաստատություններ, ոչնչացվել հարյուրավոր գրքեր ու ձեռագրեր: Որոշ վայրերում կազմակերպվել են հայերի ինքնապաշտպանական մարտեր, որոնք վերածվել են ազգային պայքարի ու վերապրումի խորհրդանիշների: Այս պատմական իրադարձություններին է նվիրված «Կորստի և պայքարի կոթողներ» հավաքածուն՝ բաղկացած «Վարագավանք», «Նարեկավանք», «Գլակավանք», «Սբ Առաքելոց վանք», «Սսի կաթողիկոսարան», «Վանի բերդ», «Փա՛ռք հերոսներին» հուշամեդալներից:




Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցի խորհրդանիշ Անմոռուկ ծաղկին նվիրված արծաթե հուշամեդալը ներկայացվել է ինչպես առանձին թողարկումով, այնպես էլ ներառվել է վերը նշված երկու հավաքածուների կազմում:





2015 թվականին Հայաստանում նշվել են անվանի նկարիչ Փանոս Թերլեմեզյանի և հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ և զորավար Անդրանիկ Օզանյանի 150-ամյա հոբելյանները, Մոսկվայի հայագիտական և արևելագիտական խոշոր կենտրոն Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակը և ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակը: Կենտրոնական բանկը թողարկել է այդ տարեդարձերին նվիրված համանուն արծաթե հուշադրամներ: Թողարկվել է նաև Եվրասիական տնտեսական միության հիմնադրմանը նվիրված արծաթե հուշադրամ:

2015 թվականին շարունակվել է «Նոյյան Տապան» արծաթե ներդրումային դրամների թողարկումը՝ $^{1}/_{4}$, $^{1}/_{2}$, 1, 5, 10 տրոյան ունցիա, 1 և 5 կգ քաշերով: 2015 թվականին իրացվել է 1,293,897 հատ ներդրումային դրամ՝ 66.1%-ով ավելի նախորդ տարվա ցուցանիշից: Նախորդ տարվա համեմատ զգալիորեն ավելացել է նաև դրամագիտական արժեքների վաճառքը «Դրամագետ» վաճառասրահի միջոցով:




2015 թվականին, Կենտրոնական բանկն իր դրամագիտական թողարկումներով մասնակցել է «Դրամների համաստեղություն 2015» հեղինակավոր միջազգային մրցույթին, որտեղ «Աշխարհի ամենահին ծառերը» հավաքածուն՝ բաղկացած 4 արծաթե հուշադրամներից, «Տարվա հավաքածու» անվանակարգում արժանացել է պատվավոր մրցանակի:

# ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱԽԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ



2015 թվականին շարունակվել են Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի իրագործմանն ուղղված աշխատանքները՝ ելնելով 2013-2015 թվականների ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակներից: Մասնավորապես՝ իրականացվել են ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) հանձնարարականներին համապատասխանող օրենսդրության ներդրման աշխատանքներ, հնարավոր ՓԼ/ԱՖ կասկածներ պարունակող ազդակների վերլուծություններ, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդմանը, ինչպես հաշվետվություն տրամադրող անձանց, այնպես էլ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

2015 թվականին ՖԴԿ-ն համակարգել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ ազգային համակարգի 5-րդ փուլի գնահատման աշխատանքները, որը իրականացվել է Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի (այսուհետ՝ ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ) կողմից: Հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի շրջանակներում ՀՀ-ն առաջին երկիրն է, որի՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ/ՋՈՋ) ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը գնահատվել է 2012 թվականին վերանայված ՖԱԹՖ 40 հանձնարարականների համաձայն:

Գնահատման հաշվետվությունը հաստատվել է ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 49-րդ լիագումար նիստի ընթացքում: Հաշվետվությամբ ՀՀ ՓԼ/ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը «համապատասխանող» է գնահատվել ՖԱԹՖ 40 հանձնարարականներից 18, «հիմնականում համապատասխանող»՝ 17 և «մասամբ համապատասխանող»՝ 5 հանձնարարականի մասով: Համակարգի արդյունավետության բարձր մակարդակ է արձանագրվել ՓԼ/ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների, իրավաբանական անձանց և կազմավորումների թափանցիկության, ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ ուղղված ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև միջազգային համագործակցության մասերով[6]:

6 Մանրամասն տե՛ս «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2015 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն»:



## ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՖԴԿ կողմից իրականացված ուսուցում և խորհրդատվություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավասու կառույցների, հաշվետվություն տրամադրող անձանց, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների գիտելիքների խորացման և կարողությունների զարգացման նպատակով 2015 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ:

Մասնավորապես՝ 2015 թվականի հունվարի 29-ից մինչև մայիսի 8-ը ՖԴԿ-ն անցկացրել է մի շարք սեմինար-քննարկումներ ֆինանսական և ոչ ֆինանսական ոլորտներում գործունեություն ծավալող՝ հաշվետվություն տրամադրող անձանց և վերջիններիս նկատմամբ վերահսկողություն իրականացնող գերատեսչությունների ներկայացուցիչների համար: Միջոցառումներին մասնակցել են ֆինանսական հաստատությունների շուրջ 100, ոչ ֆինանսական հաստատությունների 80, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող գերատեսչությունների 20 աշխատակիցներ: Սեմինար-քննարկումներին ներկայացվել են 2014 թվականի «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվության արդյունքները, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված հաշվետու անձանց պարտականությունները:





## Օրենսդրական զարգացումներ

2015 թվականին մշակվել և հաստատվել է ««ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ առաջ քաշված խնդիրների լուծման» եռամյա գործողությունների ծրագիրը, որն ուղղված է «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ վեր հանված խոցելիությունների վերացմանը և ՓԼ/ԱՖ սպառնալիքներին դիմագրավելու արդյունավետության բարձրացմանը:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրության մշակման նպատակով 2015 թվականին շարունակվել են իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված իրավական ակտերի ընդունման, դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների հրապարակման աշխատանքները:

Կենտրոնական բանկի նախագահի 2015 թվականի ապրիլի 22-ի թիվ 1/324Ա և 1/325Ա որոշումներով համապատասխանաբար հաստատվել են «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում անձանց ներառելու առաջարկի ներկայացման, Լիազոր մարմնի կողմից հրապարակվող՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում անձանց ներառելու» կարգը և «Ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների գույքի սառեցման, սառեցված գույքին հասանելիության ապահովման և հարակից գործողությունների վերաբերյալ» ուղեցույցը:

2015 թվականի դեկտեմբերին սկսվել են մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտերի մշակմանն

ուղղված աշխատանքները, որոնք պայմանավորված են ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 49-րդ լիագումար նիստում հաստատված՝ ՀՀ ՓԼ/ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի գնահատման հաշվետվությամբ ներկայացված առաջարկություններով:

## Կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները

2015 թվականին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում ՖԴԿ-ն իրականացրել է համակողմանի վերլուծություններ՝ ստացված ՓԼ/ԱՖ հնարավոր տարրեր պարունակող ազդակների, կասկածելի գործարքների հաշվետվությունների հիման վրա: Կատարված վերլուծությունների արդյունքներով՝ համապատասխան ՓԼ/ԱՖ վարկածների առաջադրմամբ տեղեկացումներ են ուղարկվել ինչպես իրավապահ մարմիններին, այնպես էլ օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին: Ստացված և վերլուծված ազդակներում նկարագրված սխեմաները տարաբնույթ և բազմազան են եղել, սակայն ինչպես և նախորդ տարիներին, դրանցում հաճախակի հանդիպել են հետևյալ տիպային օրինակները.

- Խարդախության տարատեսակ սխեմաներ՝ կապված կեղծ քարտերի, արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի գողացված տվյալների, համակարգչային տեխնիկայի, ինչպես նաև զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման փորձերի հետ:
- Հնարավոր հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ:
- Կենտրոնական բանկի հրապարակած տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ դեպքեր:

ՖԴԿ-ն ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերի զսպման ուղղությամբ միջոցառումներ է իրականացրել նաև ՀՀ բանկային համակարգի հնարավոր օգտագործման միջոցով անհայտ ծագում ունեցող գումարների՝ մի երկրից մյուսը տեղաշարժման փորձերը կանխելու ուղղությամբ:

ՖԴԿ-ն շարունակել է օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցությունը, որի շրջանակներում 2015 թվականին ստացել է 26 և ուղարկել 28 հարցում:

ՖԴԿ աշխատակիցները մասնակցել են բազմաթիվ սեմինարների և վերապատրաստումների, որոնց մասին ավելի մանրամասն նշված է «Միջազգային կառույցների հետ համագործակցություն» հատվածում:


Փողերի լվացման վարկածով 2015 թվականին իրավապահ մարմիններին տրամադրած տեղեկացումների, ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված և իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվության, ինչպես նաև ՓԼ հանցագործով հարուցված քրեական գործերի վերաբերյալ կազմված վիճակագրությունը ներկայացվել է աղյուսակում:

| | 2011 թ. | 2012 թ. | 2013 թ. | 2014 թ. | 2015 թ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ՖԴԿ կողմից տեղեկացումներ իրավադատ մարմիններին | 17 | 11 | 25 | 28 | 31 | 112 |
| ՖԴԿ կողմից իրավադատ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն | 33 | 11 | 17 | 17 | 9 | 87 |
| Իրավադատ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն | 58 | 61 | 36 | 66 | 36 | 257 |
| Հարուցված քրեական գործեր | 10 | 9 | 10 | 9 | 4 | 42 |
| Կայացված մեղադրական դատավճիռներ | 5 | 2 | 2 | 1 | 0 | 10 |



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանություն



Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և սպառողների ֆինանսական կրթման միջոցով:

Սպառողների շահերի պաշտպանության գործառույթն իրականացվել է Կենտրոնական բանկի առանձին ինստիտուցիոնալ միավորի՝ Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի (այսուհետ՝ ՍՇՊՖԿ) միջոցով:

**2015 թվականին իրականացվել են Ֆինանսական համակարգի շուկայական վարվելակերպի կարգավորման աշխատանքներ:**

Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանության և շուկայի արդարության ապահովման կարևոր նախադրյալներից է ֆինանսական կազմակերպությունների կողմից թափանցիկության և տեղեկատվության բացահայտման ապահովումը, որը իրականացվում է սպառողների հետ հաղորդակցման տարբեր փուլերում: Ֆինանսական ծառայությունների համար սպառողներին ներկայացվող քաղվածքները պայմանագրի գործողության ընթացքում թափանցիկության ապահովման կարևոր բաղադրիչ են, այդ իսկ պատճառով 2015 թվականին ՍԾՊՖԿ-ն ձեռնամուխ է եղել իրականացնելու քաղվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների լուծման համար մշակվել են տրամադրվող բանկային հաշիվների, ավանդների, սպառողական վարկերի քաղվածքների բովանդակության, ձևաչափի նկատմամբ պահանջներ և վերջիններիս տրամադրման ընթացակարգեր: Այսուհետ բոլոր այն սպառողները, ովքեր ունեն բանկային հաշիվներ, վճարային քարտեր կամ սպառողական վարկեր, պարզ և միասնական ամսական քաղվածքների միջոցով կկարողանան հետևել իրականացված գործարքներին, վաղաժամ բացահայտել ծագած խնդիրները և խուսափել հնարավոր ֆինանսական կորուստներից:

2011 թվականից ի վեր, «Ֆինանսներ բոլորի համար» կրթական կայքում (www.abcfinance.am)[7] գործող «Ֆինանսական օգնական» համակարգը հնարավորություն է ընձեռում սպառողներին տեղում համեմատելու ՀՀ շուկայում առկա ֆինանսական ծառայությունների գները և պայմանները: 2015 թվականին համակարգը համալրվել է նոր ծառայություններով: Այսուհետ, բոլոր այն սպառողները, ովքեր պատրաստվում են գյուղատնտեսական վարկ վերցնել կամ դրամական փոխանցումներ իրականացնել Հայաստանում և արտասահմանում գտնվող իրենց հարազատներին, կարող են հեշտությամբ համեմատել շուկայում առկա բոլոր առաջարկները և ընտրել իրենց ամենահարմար տարբերակը:

2015 թվականին Ազգային ժողովը ընդունել է **«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին»** ՀՀ օրենքներում առաջադրված փոփոխությունները: Դրանց արդյունքում սպառողները կկարողանան վարկային բյուրոների դեմ բողոքներով դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Կենտրոնական բանկը օրենսդրորեն իրավասություն կունենա սահմանելու բանկերի և վարկային կազմակերպությունների համար գործարար վարվելակերպի կանոններ ունենալու պահանջներ:

2015 թվականին իրականացվել են ֆինանսական կազմակերպությունների տեղերում և հեռակա ստուգումներ: Հեռակա ստուգումների շրջանակներում, ֆինանսական կազմակերպությունների **հեռուստագովազդներից բացի**, ամսական պարբերականությամբ ստուգվել են նաև հեռարձակվող ռադիոգովազդները, **ինտերնետային կայքերում** և **«Ֆինանսական օգնական»** համակարգում հրապարակվող տեղեկատվությունը:

ՍԾՊՖԿ-ն շուկայի ուսումնասիրություն իրականացրել է նաև ստուգիչ գործարքների միջոցով՝ բանկերի կողմից վարկավորման գործընթացը և վարկերի վերաբերյալ սպառողներին տրամադրվող տեղեկատվությունը գնահատելու նպատակով:

2015 թվականին ևս իրականացվել են սպառողներից գրավոր և թեժ գծի միջոցով ստացված հարցերին ու բողոքներին արձագանքման աշխատանքներ: Տարվա ընթացքում թեժ գծով ստացվել են 1000-ից ավել զանգեր: Ստացվել են նաև 213 գրավոր դիմումներ, որոնցից 138-ը վերաբերել են բանկերի, 16-ը՝ վարկային կազմակերպությունների, իսկ 20-ը՝ ապահովագրական ընկերությունների գործունեությանը և այլ գրություններ:

7 Մանրամասն տե՛ս https://www.abcfinance.am

## Հայաստանի Հանրապետությունում հանրության ֆինանսական կրթմանն ուղղված միջոցառումներ

Դեռևս 2007 թվականից Կենտրոնական բանկը ներգրավված է հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործընթացում: Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (ՖԿԱՌ)[8] ներքո՝ Կենտրոնական բանկը[9] Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ, մշակել է Ֆինանսապես կրթված մարդու նվազագույն հատկանիշների մատրիցը, որը համադրում է ֆինանսական ունակությունների 4 բաղադրիչները և ֆինանսական կրթման հիմնական թեմատիկ 7 ուղղությունները: Մատրիցի հիման վրա մշակվում են ֆինանսական կրթման ծրագրերը:

ՀՀ բնակչության ֆինանսական ունակությունների մակարդակի գնահատման աշխատանքները սկսվել են 2013 թվականից՝ Ֆինանսական ներգրավվածության միջազգային ալյանսի հետ համատեղ: 2014 թվականին մշակվել է ֆինանսական ունակությունների գնահատման մեթոդաբանությունը, իսկ այնուհետև իրականացվել են հարցումներ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով՝ ներգրավելով 1536 հարցվողների (95% վստահելիության մակարդակ և 2.5% վստահության միջակայք): Հարցման արդյունքները ամփոփվել են 2015 թվականին և ներկայացվել ՀՀ-ում Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և հետագա իրագործման հանձնաժողովի 7-րդ նիստի ժամանակ: Գնահատումը իրականացվելու է 5 տարին մեկ, ինչը հնարավորություն կընձեռի գնահատելու ՖԿԱՌ-ի արդյունավետությունը:

Դպրոցներում ֆինանսական կրթման բաղադրիչի ներդրման ուղղությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ մշակվել է աշակերտների համար ֆինանսական բանիմացության մատրիցը և առանձնացվել են դպրոցական ծրագրի այն առարկաները, որտեղ արտացոլված պետք է լինի ֆինանսական կրթության մոդուլը՝ ըստ նշված մատրիցի:

Գյուղական համայնքների ֆինանսական կրթման ծրագիրը մշակել է Կենտրոնական բանկը՝ Գերմանական խնայբանկերի միության հետ համատեղ: Նպատակը՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ֆինանսական կրթման շարունակական ծրագիր ներդնելն է և երկօրյա դասընթացի միջոցով գյուղական բնակչությանը անձնական ֆինանսների կառավարման ոլորտի վերաբերյալ իրազեկելը: 2015 թվականին վերապատրաստվել են 6 մարզերի 11 սեմինարավարներ և փորձնական դասընթացներ են իրականացվել 8 գյուղերի շուրջ 130 բնակիչների համար:

2015 թվականին որպես փորձնական ծրագիր՝ Կենտրոնական բանկում կազմակերպվել է սեմինարների շարք, որոնք վարել են Կենտրոնական բանկի և ֆինանսական այլ հատվածի ներկայացուցիչները: Սեմինարներն ունեցել են անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ բազմաբնույթ թեմաներ՝ տարբեր թիրախային խմբերի համար.

- Անցկացվել են 20 բաց սեմինարներ, որոնց մասնակցել է 350 մարդ:
- Երիտասարդների և ուսանողների ֆինանսական կրթման ՖԼԱՅ ծրագրի շրջանակներում 6 արտասահմանցի մասնագետներ վարել են սեմինարներ, որոնց մասնակցել են մոտ 420 աշակերտներ և ուսանողներ:

2015 թվականին անցկացվել է տնտեսագիտական-ֆինանսական թեմայով դպրոցական բրեյն-ռինգ, նշվել է Խնայողությունների միջազգային օրը, իրականացվել է «Ոսկեհասկ» փառատոնը:

8 2012 թվականին ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ) և «ՖԿԱՌ 2014-2019 թվականների գործողությունների ծրագիրը» հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի և ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և հետագա իրագործման հանձնաժողովի կողմից: 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ այն հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:

9 ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և հետագա իրագործման հանձնաժողովը միջգերատեսչական խորհրդատվական մարմին է, որի անդամները համագործակցում են ՀՀ-ում ՖԿԱՌ-ի մշակման և իրագործման գործընթացը առավել արդյունավետ իրականացնելու համար: Անդամակցում են ավելի քան 18 կառույցներ՝ պետական և մասնավոր հատվածից, իսկ ՖԿԱՌ-ի աշխատանքները համադրում է Կենտրոնական բանկը:


ՔԱՂԱՔԱՑԻ համայնքային հիմնախնդիրների հետազոտման ֆինանսական ուսումնական ծրագիրն իրականացվել է Տավուշի մարզի 30 դպրոցներում: Նպատակը՝ աշակերտներին և ուսուցիչներին գործիքակազմ տալն է՝ իրենց համայնքների ֆինանսատնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրման և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման և միջոցառումների ձեռնարկման համար:

Անձնական ֆինանսների ճիշտ կառավարման հարցի կարևորությունը շեշտադրող «Առողջ ապրելակերպ, առողջ ֆինանսներ» իրազեկման արշավ է կազմակերպվել «Երևանի կիսամարաթոն» միջոցառման շրջանակում:

Կարևորելով երիտասարդության շրջանում իրազեկվածության բարձրացման խնդիրը, ֆինանսական կրթման նկատմամբ ուշադրությունն ու հետաքրքրությունը ապահովելու նպատակով սոցիալական մեդիայի (abcfinance.am կայքի համանուն Facebook, Youtube, Twitter էջեր) միջոցով իրականացվել են ֆինանսական իրազեկմանն ուղղված տարբեր առցանց միջոցառումներ:

2015 թվականին խորացվել և ամրապնդվել են սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE), Ֆինանսական ներգրավման միության (AFI) և Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցությունը:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ




2015 թվականի ընթացքում ՀՀ համախառն միջազգային պահուստները աճել են 285.8 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 1,775 մլն ԱՄՆ դոլար *(տե՛ս գծապատկեր 9)*:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ համախառն միջազգային պահուստների ծավալի փոփոխությունը պայմանավորող հիմնական գործոնները միջազգային կազմակերպություններից վարկերի և դրամաշնորհների ստացումն ու կառավարության կողմից եվրոբոնդերի հավելյալ տեղաբաշխման արդյունքում ներհոսքերն էին (համապատասխանաբար՝ 350 ու 288 մլն ԱՄՆ դոլարին համարժեք), ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկերի արտարժույթով թղթակցային հաշիվների մնացորդների աճը (շուրջ 106 մլն ԱՄՆ դոլարին համարժեք): Տարվա ընթացքում նշանակալի են եղել նաև ՀՀ պետական պարտքի սպասարկման (շուրջ 172 մլն ԱՄՆ դոլար) և ՀՀ ներբանկային շուկայում արտարժույթի զուտ վաճառքի ծավալները (շուրջ 247 մլն ԱՄՆ դոլարին համարժեք):

Ինչ վերաբերում է զուտ արտաքին ակտիվներին, ապա դրանք, 2015 թվականի արդյունքների համաձայն, կազմել են շուրջ 1,175 մլն ԱՄՆ դոլար:

2015 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել միջազգային պրակտիկայում արտարժութային պահուստ-

**Գծապատկեր 9.** ՀՀ համախառն միջազգային պահուստների մակարդակը (մլն ԱՄՆ դոլար)




ներին ներկայացվող բոլոր պահանջներին, մասնավորապես, ՀՀ տնտեսության՝ հնարավոր արտաքին ցնցումները կլանելու կարողությունը հավաստելու առումով: ՀՀ միջազգային պահուստները 2015 թվականին ապահովել են ներմուծման առավել քան չորս ամսվա ծածկույթ և կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) սպասարկման առավել քան ութ տարվա ծածկույթ:

ՀՀ միջազգային պահուստների կառավարումն իրականացվել է միջազգային մի շարք ֆինանսական, տնտեսական և քաղաքական զարգացումների ներքո: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել զարգացած երկրների տարանջատմանը՝ բարձր և ցածր տնտեսական ակտիվություն ունեցողների:

Համեմատաբար բարձր տնտեսական աճ ունեցող երկրներից են ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան:

ՀՆԱ-ի և տների գների աճի համեմատաբար արագ տեմպի, գործազրկության մակարդակի նշանակալի անկման և չափավոր գնաճի համատեքստում ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը խստացրել է դրամավարկային քաղաքականությունը՝ բարձրացնելով կարճաժամկետ տոկոսադրույքը 25 բազիսային կետով: Սակայն ԱՄՆ-ի կենտրոնական բանկի վարքագիծը զգուշավոր է և ակնկալվում է կարճաժամկետ տոկոսադրույքների հետագա չափավոր բարձրացում:

ԱՄՆ-ում զսպող դրամավարկային քաղաքականության գործարկումը հանգեցրել է կարճաժամկետ տոկոսադրույքների զգալի բարձրացմանը: Մասնավորապես՝ 3 ամիս ժամկետ ունեցող Libor-ը 2015 թվականի դեկտեմբերին հատել է 0.6% մակարդակը, այն դեպքում, երբ հունվարին տատանվում էր 0.25% շրջանում: Միևնույն ժամանակ, 2 տարի ժամկետայնությամբ ԱՄՆ պետական պարտատոմսի եկամտաբերությունը ընդհուպ մոտեցել է 1% սահմանագծին:

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային, ապա այդ երկրի կենտրոնական բանկը հող է նախապատրաստում տոկոսադրույքների բարձրացման համար, որը հավանաբար կիրագործվի 2017 թվականի առաջին կիսամյակում:

Ցածր ակտիվություն ունեցող երկրներում՝ Եվրոգոտում և Ճապոնիայում, կենտրոնական բանկերը շարունակել են խթանող դրամավարկային քաղաքականությունը՝ գնաճի նպատակային մակարդակի ապահովման համար:


Մասնավորապես, 2015 թվականի ընթացքում Եվրոպական կենտրոնական բանկը կրկին նվազեցրել է մշտական հնարավորության ավանդային տոկոսադրույքը: Ի լրումն աննախադեպ ցածր տոկոսադրույքի՝ Եվրոպական կենտրոնական բանկը ամսական ձեռք է բերում 60 մլրդ եվրո ծավալով պետական, գործակալական, տեղական ինքնակառավարման մարմինների և ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ գնաճի նպատակային մակարդակի ապահովման և տնտեսական ակտիվության աշխուժացման համար:

Գերմանական և ֆրանսիական մինչև 5 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները հաստատվել են բացասական մակարդակների վրա *(տե՛ս գծապատկեր 10)*:

Ինչ վերաբերում է Ճապոնիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությանը, ապա այն վստահաբար մնում է ագրեսիվ խթանող:




**Գծապատկեր 10.** ԱՄՆ, ֆրանսիական և գերմանական պետական պարտատոմսերի եկամտաբերությունները




Ամփոփելով նշենք, որ վերը շարադրված զարգացումների ներքո Կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով միջազգային պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը՝ ապահովել ՀՀ միջազգային պահուստների կառավարման արդյունավետությունն ու եկամտաբերությունը՝ միաժամանակ երաշխավորելով պահուստների ապահովությունն ու իրացվելիությունը:


# ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ





# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

## ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը



Կենտրոնական բանկի կառավարման կառուցվածքի բարելավման նպատակով 2015 թվականին «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում[10] կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես՝ սահմանվել է Կենտրոնական բանկի կառուցվածքում Կենտրոնական բանկի նախագահի երկու տեղակալներ նշանակելու հնարավորություն, որի պարագայում հնարավոր է գործադիրի ներսում ձևավորել լիարժեք կառավարչական մարմին, որը կիրականացնի գործառնական կառավարում և ընթացիկ որոշումների կայացում՝ Կենտրոնական բանկի խորհրդին թողնելով ի սկզբանե իրեն վերապահված ռազմավարական շրջանակը: Սա հնարավորություն ընձեռեց Կենտրոնական բանկի կառավարումը առավելագույնս համապատասխանեցնելու կորպորատիվ կառավարման միջազգային փորձին:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալներից և հինգ անդամներից: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալները Կենտրոնական բանկի խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը **Կենտրոնական բանկի նախագահն** է: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՀ նախագահի առաջարկությամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է Կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահը համակարգում է Կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի

10 Մանրամասն տե՛ս, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:

Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է **Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը**, իսկ տեղակալների բացակայության կամ նրանց պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կենտրոնական բանկի խորհրդի՝ տարիքով ավագ անդամը**: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի նախագահը և նրա երկու տեղակալները, ինչպես նաև խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի:

Կենտրոնական բանկի խորհրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել:

## Կենtրոնական բանկի խորհուրդ

Խորհրդի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ՝ երեքշաբթի՝ համաձայն յուրաքանչյուր տարվա առաջին Խորհրդի նիստի ժամանակ տվյալ տարվա համար հաստատված ժամանակացույցի: Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, նրա տեղակալներից առնվազն մեկի կամ Խորհրդի առնվազն երեք անդամի նախաձեռնությամբ: Խորհուրդը հաստատում է Կենտրոնական բանկի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը, Կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույքները, Կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները, ընդունում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը, հաստատում է բանկերի ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2015 թվականին գումարվել է Խորհրդի 70 նիստ, որից 7-ը՝ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում: Արդյունքում Կենտրոնական բանկի խորհուրդը ընդունել է **73 նորմատիվային** և **380 անհատական** որոշումներ: 2015 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվել է 2 պաշտոնական պարզաբանում՝ բռնագանձման գործընթացում առաջացող որոշ հարցերի և ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության վերաբերյալ:

Խորհուրդը, որպես քաղաքականություն հաստատող մարմին, կատարել է ֆինանսական համակարգի կայունացմանն ու զարգացմանը միտված օրենսդրական ու նորմատիվային դաշտի բարելավման զգալի աշխատանքներ: Ազգային ժողովի հավանությանն են արժանացել և ընդունվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից առաջարկված մի շարք օրենսդրական փոփոխություններ[11]:

11 Մանրամասն տե՛ս «Ֆինանսական կայունության ապահովում» բաժնում:

## Կենտրոնական բանկի վարչություն

Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ՝ Խորհրդի հերթական նիստերի գումարման օրվան հաջորդող երեքշաբթի օրը:

Վարչության նիստերը վարում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը:

2015 թվականին գումարվել է Կենտրոնական բանկի վարչության 11 նիստ:

## Կենտրոնական բանկի հանձնաժողովներ և կոմիտեներ

Կենտրոնական բանկի կառավարման կարևորագույն տարրերից են նաև բանկում գործող հանձնաժողովները, կոմիտեները և այլ խորհրդակցական մարմինները, որոնց կազմը և լիազորությունները սահմանվում են ըստ քննարկվելիք հարցերի շրջանակի և գործունեության ոլորտների: Կենտրոնական բանկի հանձնաժողովների և կոմիտեների նիստերի արձանագրությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի կողմից, իսկ որոշ դեպքերում դրանց արդյունքում Կենտրոնական բանկի նախագահը կայացնում է որոշումներ և տալիս կարգադրություններ: Ստորև ներկայացվում են Կենտրոնական բանկում գործող կոմիտեներն ու հանձնաժողովները, ինչպես նաև դրանց աշխատանքի արդյունքներին վերաբերող տեղեկությունները:

Մշտապես գործող կոմիտեներից և հանձնաժողովներից բացի, Կենտրոնական բանկի նախագահի հրահանգով և Խորհրդի որոշմամբ ձևավորվում են նաև ժամանակավոր հանձնաժողովներ՝ ելնելով որոշակի խնդիրների և նպատակների կատարման անհրաժեշտությունից:

### Դրամավարկային քաղաքականության կոմիտե

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի գործառույթներն են նախորդ շաբաթվա ընթացքում դրամավարկային քաղաքականության ընթացքի, բանկային համակարգում, ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակի, Կենտրոնական բանկի կողմից իրականացված գործառնությունների, ինչպես նաև դրամավարկային և պետական բյուջեի հետ փոխհարաբերություններին առնչվող ցուցանիշների քննարկումը:

Դրամավարկային քաղաքականության կոմիտեն քննարկում է նաև Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ նախորդ տասնօրյակում գնաճի գնահատումների վերաբերյալ դիտարկումների արդյունքները:

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում՝ յուրաքանչյուր ուրբաթ:

2015 թվականին գումարվել է Դրամավարկային քաղաքականության կոմիտեի 48 նիստ:

## Ֆինանսական կայունության հանձնաժողով

Ֆինանսական կայունության հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահին կից խորհրդակցական մարմին է, որը գնահատում է ֆինանսական համակարգի կայունությունը, քննարկում, նախապատրաստում է դրա ապահովմանը նպատակաուղղված միջոցառումները, ներկայացնում իրականացման ուղղությունների կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ և այլ անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կատարում իրավիճակի բազմակողմանի վերլուծություն:

Հանձնաժողովի հերթական նիստերում քննարկվում են եռամսյակի ընթացքում համաշխարհային տնտեսությունում, ՀՀ մակրոմիջավայրում և ֆինանսական շուկայում, ֆինանսական հաստատություններում և ենթակառուցվածքներում ռիսկերի զարգացման ուղղությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա: Հանձնաժողովը քննարկում է նաև բանկային համակարգի կայունության ինդեքսի և դրա բաղադրատարրերի շարժը, ֆինանսական կայունությունը գնահատող սթրես-թեստերի արդյունքները և այլն: Հանձնաժողովի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա երկրորդ կեսի ընթացքում: Արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի բանավոր որոշման հիման վրա: Հանձնաժողովի նիստերը գումարվել են համաձայն սահմանված ժամանակացույցի:

## Ներդրումային հանձնաժողով

Ներդրումային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում որոշում ներկայացնելու իրավասություններ ունեցող մարմին է, որը, Կենտրոնական բանկի միջազգային պահուստների կառավարման վերաբերյալ Խորհրդի որոշումներին համապատասխան, իրականացնում է միջազգային պահուստների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառույթներ, ինչպես նաև քննարկում է ներդրումային գործունեության ընթացիկ համակարգմանն առնչվող խնդիրներն ու ֆինանսական վերլուծության արդյունքները:

Նշված գործառույթներն իրականացնելու նպատակով հանձնաժողովը քննարկում է միջազգային պահուստների կառավարման ռազմավարական և մարտավարական, ինչպես նաև կառավարման ընթացիկ վերահսկողության խնդիրներ: Հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր չորս շաբաթը մեկ՝ երկուշաբթի օրը:

2015 թվականին գումարվել է Ներդրումային հանձնաժողովի 9 նիստ, ընդունվել է 7 որոշում:

## Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, գրանցման և լիցենզավորման, բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ներկայացուցչու-

թյունների գրանցման, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի, դրանց կանոնների գրանցման և այլ անձանց լիցենզավորման հետ կապված հարցեր:

Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կերպ կարգավորվող անձանց վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության, արտարժույթի առուվաճառքի և դրա սակարկություններ ի ընթացքում գնային չարաշահումների փաստեր հայտնաբերելու դեպքում դրանք որպես գնային չարաշահում որակելու, ինչպես նաև պատժատեսակի որոշման հարցերը: Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:

2015 թվականին գումարվել է Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի 60 նիստ:

## Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտե

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտեի նպատակն է ստուգել և գնահատել Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետի կարգավիճակով աշխատող աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները: Կոմիտեն ընդունում է խորհրդակցական բնույթի որոշումներ, որոնց հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները երիտասարդ մասնագետների հետագա կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում Կենտրոնական բանկի նախագահին:

2015 թվականին գումարվել է կոմիտեի 4 նիստ, գնահատվել են 35 երիտասարդ մասնագետի գիտելիքներ:

## Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողովի նպատակն է Կենտրոնական բանկի նոր կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատումը և դասակարգումը: Հանձնաժողովը քննարկում է Կենտրոնական բանկում նոր ստեղծվող կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատման և դասակարգման հետ կապված խնդիրները և ներկայացնում առաջարկություններ Կենտրոնական բանկի նախագահին: Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի աշխատակիցների անհատական աշխատանքային ծրագրերի կատարողականների վերաբերյալ վիճահարույց հարցերը: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 15-ը:

2015 թվականին գումարվել է հանձնաժողովի 6 նիստ:

## Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողովի նպատակն է ստուգել աշխատակիցների կամ Կենտրոնական բանկում աշխատելու ցանկություն ունեցող անձանց (դիմորդների) մասնագիտական և գործնական կարողություններն ու գիտելիքները:

Հանձնաժողովն աշխատակիցների և դիմորդների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները կարող է ստուգել ինչպես հարցազրույցի, այնպես էլ գրավոր աշխատանքների միջոցով: Կենտրոնական բանկի նախագահը, ով միաժամանակ հանձնաժողովի նախագահն է, հանձնաժողովի կողմից տրված՝ աշխատակցի մասնագիտական և գործնական կարողությունների և գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության մասին եզրակացության հիման վրա կայացնում է որոշում աշխատակցի հետագա գործունեության մասին:

2015 թվականին տեղի է ունեցել հանձնաժողովի 27 նիստ:

## Աուդիտ կոմիտե

Կենտրոնական բանկի աուդիտ կոմիտեն մասնագիտացված մարմին է: Կոմիտեի լիազորությունները ներառում են բանկի ֆինանսական հաշվետվության, կառավարման, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության, արտաքին և ներքին աուդիտի հետ կապված հարցերն ու խնդիրները: Աուդիտ կոմիտեն բաղկացած է երեք անդամներից՝ ներառյալ Աուդիտ կոմիտեի նախագահը: Կոմիտեի անդամները Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ են: Կենտրոնական բանկի նախագահն ու նախագահի տեղակալները չեն կարող լինել կոմիտեի անդամ:

Տարվա ընթացքում քննարկված հարցերի շրջանակն ընդգրկել է Վերստուգիչ խմբի հանձնառություններին, արտաքին աուդիտի աշխատանքներին, Կենտրոնական բանկի կառավարման գործընթացներին, ռիսկերի կառավարմանն ու ներքին հսկողությանը, Վերստուգիչ խմբի ընթացիկ գործունեությանը, մեթոդաբանությանն ու ոլորտին վերաբերող մասնագիտական խնդիրները:

2015 թվականին գումարվել է կոմիտեի 6 նիստ:

**Բացի թվարկված հանձնաժողովներից և կոմիտեներից, Կենտրոնական բանկի կորպորատիվ կառավարման գործում կարևոր նշանակություն ունեն Կենտրոնական բանկի բյուջետային հանձնաժողովը, տեղեկատվական անվտանգության կոմիտեն, տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով զբաղվող կոմիտեն, մրցույթների անցկացման հանձնաժողովը, Կենտրոնական բանկի «Տնային էջի» զարգացման, տեղեկատվական հաղորդակցության մշակման ու իրականացման խմբագրական խորհուրդը, ինչպես նաև հետազոտական և վերլուծական աշխատանքները գնահատող խումբը:**

## Կենտրոնական բանկի հաշվետվողականությունը

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկը իր կողմից իրականացվող գործունեության հաշվետվողականությունը ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին է ներկայացնում «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը» և «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (Գնաճի հաշվետվությունը)», ինչպես նաև Կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվն ու կապիտալ ներդրումների ծրագիրը՝ համապատասխան կատարողականներով: Բացի վերոնշվածից, Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը»: Վերջինիս բաղկացուցիչ տարրերից է բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, որի համապատասխանությունը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին յուրաքանչյուր տարի հավաստվում է միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից:

Կենտրոնական բանկի հաշվետվողականության կարևոր տարրերից են նաև «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», «Ֆինանսական կայունության հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» պարբերականները: Կենտրոնական բանկն իր հաշվետվողականությունն իրագործում է նաև պաշտոնական կայքէջի (www.cba.am) միջոցով, որտեղ տեղադրվում են Կենտրոնական բանկի զարգացման ռազմավարությունը, պարբերականների հերթական թողարկումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ արձանագրություններն ու մամլո հաղորդագրությունները, Կենտրոնական բանկի կառավարմանը, գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական համակարգին վերաբերող այլ տեղեկատվություն:

## Կառավարման համակարգեր և կազմակերպչական զարգացում

2015 թվականին տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի զարգացման ոլորտում գրանցվել է էական առաջընթաց:

Կարևորելով տեղեկատվական անվտանգության ոլորտի զարգացումը՝ Կենտրոնական բանկը ակտիվորեն աջակցում է տեղեկատվական անվտանգության ապահովման նորագույն տեխնոլոգիաների, միջազգային լավագույն փորձի և ստանդարտների ներդրմանը: 2015 թվականի առաջին եռամսյակում Կենտրոնական բանկն անցել է վերավկայագրում ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտով (նոր խմբագրություն): Բացի այդ, բանկերի զգալի մասը վկայագրվել է ISO/IEC 27001 «Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր» ստանդարտով: Վերջինիս ներդրումը սկսվել է նաև ֆինանսական համակարգի այլ կազմակերպություններում:

Հաշվի առնելով ՀՀ բնակչությանը տրամադրվող ծառայությունների անընդհատության ապահովման անհրաժեշտությունը՝ Կենտրոնական բանկը քայլեր է ձեռնարկել արտակարգ իրավիճակների պարագայում առևտրային բանկերի հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:



## Միջազգային կառույցների հետ համագործակցություն

**2015 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:**

2015 թվականի փետրվարին Կենտրոնական բանկ է այցելել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) պատվիրակությունը՝ առաքելության ղեկավար Մարկ Հորտոնի (Mark Horton) գլխավորությամբ: Այցի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցությանը, Հայաստանի ներկայիս տնտեսական վիճակին և հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությանը վերաբերող մի շարք հարցեր: ԱՄՀ հետ համագործակցության շրջանակներում Կենտրոնական բանկն ընդունել է նաև ԱՄՀ տարածաշրջանային տնօրեն Մասուդ Ահմեդի (Masood Ahmed) գլխավորած պատվիրակությանը: Այցի ընթացքում քննարկվել են, մասնավորապես՝ Հայաստանի արտաքին պահուստների ամրապնդմանը, պետական պարտքի կրճատմանը, բանկային համակարգի կայունության պահպանմանն առնչվող հարցեր:

Գործնական կապերն ընդլայնելու, երկրի մակրոտնտեսական վիճակի մասին տեղեկանալու և բանկային տարբեր ոլորտների շուրջ բանակցություններ վարելու նպատակով Կենտրոնական բանկ են այցելել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) պատվիրակությունը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Թոմաշ Տելմայի գլխավորությամբ, Եվրոպական ներդրումային բանկի (EIB) պատվիրակությունը՝ փոխնախագահ Վիլհելմ Մոլտերերի գլխավորությամբ, Եվրասիական զարգացման բանկի պատվիրակությունը՝ նախագահ Դմիտրի Պանկինի գլխավորությամբ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) պատվիրակությունը՝ նախագահ Սումա Չակրաբարտիի գլխավորությամբ, Ֆինանսական ներգրավվածության միության (AFI) պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Ալֆրեդ Հաննիգի գլխավորությամբ, ՀՀ-ում Եվրոպական միության (EU) պատվիրակության գրասենյակի ղեկավար Տրայան Հրիսթեան, «Մուդիզ» (Moody's) միջազգային վարկանշային կազմակերպության ներկայացուցիչներ և այլն:

**Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք գործնական հանդիպումներ, կոնֆերանսներ, նիստեր, կլոր սեղաններ և համաժողովներ:** Մասնավորապես՝ տեղի է ունեցել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկրների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ֆինանսական շուկաների խորհրդատվական կոմիտեի (Консультативный комитет по финансовым рынкам) նիստը:

Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնում կայացել է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջև վարվող մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսությունների կայունացման հարցերին նվիրված կլոր սեղան-խորհրդակցությունը, որին մասնակցել են ԵԱՏՄ կոլեգիայի անդամ, մակրոտնտեսական և ինտեգրման հարցերով նախարար Տատյանա Վալովայան, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների, միջազգային տնտեսական ինտե-

գրման և բարեփոխումների նախարարությունների, Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ:

Դիլիջանի կենտրոնում գումարվել է Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի Արժութային քաղաքականության գծով խորհրդատվական մարմնի 11-րդ նիստը:

Տարվա ընթացքում Դիլիջանի կենտրոնում տեղի է ունեցել Կենտրոնական Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական/ազգային բանկերի կառավարիչների ակումբի շրջանակում կազմակերպված իրավական խորհրդատուների միջազգային կոնֆերանսը (International Conference for legal counsels within the framework of the Central Banks Governors' Club of Central Asia, Black sea region and Balkan countries): Կոնֆերանսին մասնակցել են 24 հյուրեր 15 երկրներից՝ Ալբանիա, Բելառուս, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Ղազախստան, Ղրղզստան, Մակեդոնիա, Մոնտենեգրո, Լեհաստան, Ռումինիա, Ռուսաստան, Տաջիկստան, Սերբիա, Չինաստան:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել էգմոնտ խմբի 23-րդ լիագումար նիստը, որի ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են մի շարք հարցերի քննարկմանը: Մասնավորապես՝ ՖԴԿ նախաձեռնությամբ Ֆինանսական հետախուզության մարմիններին (ՖՀՄ) ազգային տեղեկատվության հասանելիության և օտարերկրյա ՖՀՄ-ների հետ տեղեկատվության փոխանակման ծրագրի հիման վրա ՖԱԹՖ-ի հետ համատեղ ուղեցույցի մշակման գործընթացի, ինչպես նաև էգմոնտ խմբին անդամակցության կապակցությամբ ՖԴԿ կողմից հովանավորվող Թուրքմենստանի և Իրանի Իսլամական Հանրապետության արծանագրած առաջընթացի մասին զեկույցների վերաբերյալ:

2015 թվականին ՖԴԿ ներկայացուցիչները, ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբում, մասնակցել են անդամ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի փոխադարձ գնահատման աշխատանքներին և հանձնախմբի լիագումար նիստերին, որոնց շրջանակներում քննարկվել և հաստատվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը:

2015 թվականի սեպտեմբերին Կենտրոնական բանկի Ծաղկաձորի ՏԴԿ-ում անցկացվել է ԱՊՀ մասնակից երկրների ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի աշխատանքային խմբերի հանդիպումը, որին մասնակցել են ներկայացուցիչներ անկախ պետությունների համագործակցության ֆինանսական հետախուզության մարմինների ղեկավարների խորհրդի անդամ 5 երկրների ՖՀՄ-ներից, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության Ֆինանսական մոնիթորինգի միջազգային ուսումնամեթոդական կենտրոնից և ԱՊՀ մասնակից երկրների ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի գործադիր կոմիտեից:

ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են նաև ՖԱԹՖ-ի լիագումար նիստին, ինչպես նաև Կողմերի համաժողովի 7-րդ նիստին՝ ընտրվելով Կողմերի համաժողովի բյուրոյի անդամ:


**2015 թվականին շարունակվել են աշխատանքները երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու ուղղությամբ:**

Կարևորելով միջազգային համագործակցության դերը ՀՀ վճարահաշվարկային բնագավառի զարգացման և հուսալիության ապահովման գործում՝ 2015 թվականին Կենտրոնական բանկի և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի միջև կնքվել է համագործակցության վերաբերյալ համաձայնագիր՝ վճա-

րային համակարգերի նկատմամբ համատեղ վերահսկողության (օվերսայթի)/դիտահսկման հարցերով: Համաձայնագրի նպատակը վճարային համակարգերի կարգավորման, վերահսկման, վճարային համակարգերի և վճարային ենթակառուցվածքների զարգացման, բարեխիղճ մրցակցության համար պայմանների ձևավորման, մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների որակի բարձրացման հարցերի շուրջ համաձայնագրի կողմերի միջև ներդաշնակ մոտեցումների ձևավորումն է:

2015 թվականին Կենտրոնական բանկը տնտեսության մի շարք թիրախային ոլորտների վարկավորման ծրագրերի շրջանակներում շարունակել է ակտիվ համագործակցությունը Համաշխարհային բանկի, գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային կառույցների հետ: 2015 թվականին մեկնարկել է Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող գյուղատնտեսության, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և զբոսաշրջության ոլորտներում ՓՄՁ վարկավորման ծրագիրը:

2015 թվականի մարտի 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Չինաստանի ժողովրդական բանկի միջև Պեկինում ստորագրվել է «Հայկական դրամ / չինական յուան երկկողմանի սվոփ կարգավորումների մասին» համաձայնագիր (Bilateral currency swap agreement between the Central Bank of Armenia and People's Bank of China):



Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են ԵԱՏՄ, ԵՄ հարթակներում, միջազգային համագործակցության շրջանակներում կայացած տարեկան հանդիպումների, ֆորումների, բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով և ելույթներով:

2015 թվականի մարտին Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնում Եվրոխորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի մասնագետների կողմից անցկացվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գնահատող-փորձագետների որակավորման դասընթաց, որին մասնակցել և երկրների փոխադարձ գնահատումների մասնակցության իրավունք են ստացել Կենտրոնական բանկի ՖԴԿ-ի, ՀՀ արդարա-

դատության նախարարության և ՀՀ դատախազության 5, ինչպես նաև ՄԱՆԻՎԱԼ հանճնախմբի անդամ երկրներից 28 ներկայացուցիչներ:

ՖԴԿ-ն շարունակել է օտարերկրյա ՖՀՄ-ների հետ փոխհարաբերությունների զարգացման աշխատանքները: Արդյունավետ փոխգործակցության ապահովման նպատակով փոխըմբռնման հուշագիր է կնքվել Ղազախստանի ՖՀՄ-ի հետ, իսկ էգմոնտ խմբի կողմից վերանայված հուշագրի տարբերակով վերակնքվել են նախկինում ստորագրված փոխըմբռնման հուշագրերը Ռուսաստանի Դաշնության և Խորվաթիայի ՖՀՄ-ների հետ: 2015 թվականի դրությամբ ՖԴԿ-ն փոխըմբռնման հուշագրեր է կնքել 31 երկրների ՖՀՄ-ների հետ:

## Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում

2015 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է համագործակցել Անգլիայի բանկի Կենտրոնական բանկերի ուսումնասիրության կենտրոնի, Մալայզիայի Նեգարա բանկի, Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական երկրների կենտրոնական/ազգային բանկերի՝ Նիդեռլանդների, Գերմանիայի Բունդեսբանկի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Չեխիայի, Լեհաստանի, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության ֆինանսական տեխնոլոգիաների փոխանցման գործակալության, Ֆինանսական կայունության ինստիտուտի, Շվեյցարիայի բանկի Գերցենզե ինստիտուտի, Կանադայի Տորոնտո կենտրոնի, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի, Եվրոպական կենտրոնական բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և մի շարք այլ բանկերի ու միջազգային հեղինակավոր ֆինանսական և կրթական հաստատությունների հետ:

2015 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ տարածքում և արտերկրում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստման ծրագրերին, դասընթաց–խորհրդակցություններին և փորձի փոխանակման այցերին:

Կենտրոնական բանկը շարունակել է օտարերկրյա բանկերի և ֆինանսական հաստատությունների հետ երկկողմանի հարաբերությունների ընդլայնման աշխատանքները, որի արդյունքում ստեղծվել են առավել կայուն հարաբերություններ Եվրոպական կենտրոնական բանկի, Բելգիայի, Իտալիայի, Սլովենիայի բանկերի, Սլովենիայի ֆինանսական ոլորտի որակավորման բարձրացման կենտրոնի հետ: Արդյունքում՝ Կենտրոնական բանկի աշխատակիցների համար կազմակերպվել են արտաքին վերապատրաստման և փորձի փոխանակման հատուկ և ստանդարտ 100-ից ավելի ծրագրեր: Կենտրոնական բանկի վերահսկողական ոլորտի աշխատակիցների համար Նիդեռլանդների բանկի և «Gooiconsult» կազմակերպության հետ համատեղ իրականացվել է «Հարցազրույցի և հաղորդակցման հմտությունների զարգացում» թեմայով երկփուլ դասընթացը:

Ֆինանսական ոլորտում տարածաշրջանային համագործակցությունը խորացնելու առումով կարևորվում են Կանադայի Տորոնտո կենտրոնի, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի հետ համատեղ Կենտրոնական բանկի կազմակերպած միջազգային դասընթացները, որոնց մասնակցել են Կենտրոնական բանկի 72 աշխատակից և 13 օտարերկրյա բանկերի ներկայացուցիչներ:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական/ազգային բանկերի միջև համագործակցության շրջանակներում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել է 6 դասընթաց, որին մասնակցել են ինչպես ԵՏՄ երկրների, այնպես էլ օտարերկրյա այլ բանկերի ներկայացուցիչ-

ներ: Կենտրոնական բանկը կազմակերպել է հատուկ թեմաներով գործնական դասընթացներ, որոնց ընթացքում Կենտրոնական բանկի 13 ներկայացուցիչներ ներկայացրել են Կենտրոնական բանկի լավագույն փորձը դրամավարկային, վճարահաշվարկային, ֆինանսական համակարգի կարգավորման և այլ ոլորտներում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ առևտրային բանկերի և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման նպատակով հանդիպումներ են կազմակերպվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), «Ջի-Ար-Սի» գիտելիքի կենտրոնի, Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի ռիսկի կառավարման մասնագետների գլոբալ միության (EFSE-GARP), «Giesecke & Devrient» դրամանիշների թողարկման և տպարանի, Ակտուարների միջազգային ասոցիացիայի և այլ կազմակերպությունների ու ֆինանսական հաստատությունների հետ:

Համաշխարհային առաջատար ուսումնական հաստատությունների դասախոսների մասնակցությամբ Կենտրոնական բանկի տնտեսական հետազոտության վարչության աշխատակիցների համար տարվա ընթացքում կազմակերպվել են 26 կրթական ծրագրեր:

Ընդհանուր առմամբ, Կենտրոնական բանկի կողմից և Կենտրոնական բանկի հետ համատեղ ՀՀ տարածքում կազմակերպվել է 70 ծրագիր, որին մասնակցել են ինչպես Կենտրոնական բանկի, այնպես էլ ՀՀ առևտրային բանկերի, այլ գերատեսչությունների, մասնավոր հատվածի և օտարերկրյա կենտրոնական/ազգային բանկերի ներկայացուցիչներ:



## Անձնակազմի կառավարում

2015 թվականին Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում է եղել աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը և մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող, աշխատանքն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ հմտություններով օժտված աշխատակիցների ներգրավումը:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների (անորոշ և որոշակի ժամկետով աշխատողներ) թիվը կազմել է 779՝ 441 կին և 338 տղամարդ, միջին տարիքը՝ 39: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 50 աշխատակից (նախորդ տարի՝ 54):

Կենտրոնական բանկում թափուր աշխատատեղերը համալրվել են հիմնականում մրցութային կարգով: Ներքին և արտաքին մրցույթների արդյունքներով համալրվել է 25 աշխատատեղ: Տարվա ընթացքում ստանձնելով ավելի բարդ գործառույթներ՝ 66 աշխատակից ունեցել է առաջխաղացում, որից 2-ը ստանձնել է ղեկավար պաշտոն:

Կենտրոնական բանկը շարունակել է երիտասարդ մասնագետների (առանց մասնագիտական աշխատանքային փորձի) ներգրավման, մասնագիտական գիտելիքների զարգացման և հետագայում թափուր աշխատատեղերում նրանց համալրման քաղաքականությունը: 2015 թվականի «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» երկամսյա ծրագիրն իրականացվել է երկու անգամ: Դասընթացները հաջողությամբ ավարտելուց հետո Կենտրոնական բանկում աշխատանքի է անցել 13 երիտասարդ մասնագետ:

2015 թվականին Կենտրոնական բանկն ակտիվ համագործակցել է բուհերի հետ, մասնակցել բուհական մի շարք հաստատությունների կողմից կազմակերպված «Կարիերայի օրերին»: Կենտրոնական բանկի 31 աշխատակիցներ

դասավանդել են մի շարք համալսարաններում և այլ ուսումնական հաստատություններում՝ իրենց փորձն ու գիտելիքները փոխանցելով երիտասարդ մասնագետներին: Կենտրոնական բանկում գիտահետազոտական պրակտիկա է անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 93 ուսանող:

2015 թվականին Կենտրոնական բանկի կողմից հայտարարված Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի ճշանակման մրցույթին մասնակցել են 26 դիմորդներ, որոնցից՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի՝ 2, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի՝ 3 և Արցախի պետական համալսարանի 2 լավագույն ուսանողների հատկացվել է կրթաթոշակ:

## Անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

Կենտրոնական բանկը, կարևորելով աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, 2015 թվականին շարունակել է նրանց վերապատրաստումը արտասահմանյան ֆինանսական կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության ուսումնական կենտրոններում, ինչպես նաև Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում:

Կենտրոնական բանկի աշխատակիցների՝ տարիների ընթացքում կուտակած գիտելիքներն ու փորձը փոխանցելու, Կենտրոնական բանկի արդի խնդիրների, գործառույթների մասին տեղեկանալու, ինչպես նաև մասնագիտական գործունեության համար կարևոր հմտությունները զարգացնելու նպատակով Կենտրոնական բանկում ներքին ռեսուրսների օգտագործմամբ կազմակերպվել են դրամավարկային քաղաքականության նպատակի, ռազմավարության, փոխանցման մեխանիզմների և իրականացման գործընթացի, սպառողների շահերի պաշտպանության, ֆինանսական կայունության և մակրոպրուդենցիալ վերլուծության, իրավական տեխնիկայի կանոնների, ակտիվների և ռիսկերի կառավարման, ֆինանսական համակարգի վերահսկողության, բանկերի միացումների և ձեռքբերումների վերաբերյալ դասընթացներ:

Կենտրոնական բանկի զարգացման ռազմավարական ոլորտներում մասնագիտական գիտելիքների խորացման և հմտությունների զարգացման նպատակով վերը նշված կառույցների կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել է 162 աշխատակից:

Նախապես ներկայացված պահանջարկի համաձայն՝ ակտուարական հաշվարկների, դրամավարկային քաղաքականության վերլուծությունների, ակտիվների կառավարման, ռազմավարական փաստաթղթերի գրելաոճի և մի շարք այլ խնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ներդրման նպատակով կազմակերպված 9 դասընթացի մասնակցել է Կենտրոնական բանկի 21 աշխատակից:

Կենտրոնական բանկի 35 աշխատակից մասնակցել է Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից իրական ժամանակի ռեժիմով անցկացվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին:

Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի ռեզերվն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքները խորացնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները զարգացնելու նպատակով 2015 թվականին իրականացվել է 17 աշխատակցի շրջափոխում (ռոտացիա):

Հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են հանձնել ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական,

ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների, զեղծարարության, անձնակազմի կառավարման ոլորտների համար սահմանված միջազգային մասնագիտական որակավորման քննություններ: 2015 թվականի դրությամբ միջազգային մասնագիտական որակավորում է ստացել 41 և շարունակում է քննություններ հանձնել 45 աշխատակից:

Կենտրոնական բանկի 6 աշխատակից ՍիէֆէյՀի (CFA) և 5 աշխատակից՝ էյՍիՍիէյ-ի (ACCA) լիիրավ անդամ է:



## Հասարակության հետ կապեր

2015 թվականին Կենտրոնական բանկը հանրությանը իրազեկել է իր գործունեության, ֆինանսական ոլորտի իրադարձությունների, ֆինանսական կազմակերպությունների գործունեության առնչությամբ իր նախաձեռնությունների և բարեփոխումների վերաբերյալ: Իր քաղաքականության իրականացման ընթացքում Կենտրոնական բանկը գործակցել է Հայաստանի բանկերի միության, այլ հասարակական կազմակերպությունների ու միությունների հետ:

Ֆինանսական շուկայի մասնակից կազմակերպություններն իրազեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին, տեղի են ունեցել քննարկումներ տարբեր հարցերի շուրջ:

Կենտրոնական բանկը տարվա ընթացքում հրապարակել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին Խորհրդի 9 որոշում, որոնց վերաբերյալ համառոտ հաղորդագրությունը հրապարակվել է Խորհրդի կողմից որոշման ընդունումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվել է Խորհրդի արձանագրությունը: «Գնաճի հաշվետվություն» պարբերականում հրապարակվել են 4 արձանագրություններ:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար տարվա ընթացքում կազմակերպվել են կրթական սեմինարներ՝ «Սպառողների շահերի պաշտպանություն», «Դրամավարկային քաղաքականություն», «Եվրասիական տնտեսական միություն» և «Փոխարժեքի տնտեսական դերը» թեմաներով: Կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ լրատվամիջոցների ղեկավարների և Կենտրոնական բանկի ղեկավար կազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կենտրոնական բանկի առաջին նախագահ Իսահակ Աբասի Իսահակյանի մասին նկարահանվել է փաստագրական «Վարպետը» ֆիլմը, որը ներկայացնում է Իսահակ Իսահակյանի անցած ճանապարհը: Ֆիլմը հեռարձակվել է բանկային աշխատողի օրը՝ նոյեմբերի 22-ին:

Տարվա ընթացքում կազմակերպվել է 3 միջոցառում՝ զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ և 20 հարցազրույց: 2015 թվականին Կենտրոնական բանկը ստացել է գրավոր 26 հարցում, որոնց օրենքով սահմանված կարգով տրվել են պատշաճ արձագանքներ: Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել են 167 մամլո հաղորդագրություններ: Բացի այդ, Խորհրդի նիստերի վերաբերյալ հրապարակվել է 26, ֆինանսական շուկայում գործառնությունների տոկոսադրույքի մասին՝ 9 հաղորդագրություն:

## Այցելուների կենտրոն

2015 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը[12] ընդունել է շուրջ 9000 այցելու (7000 աշակերտ/ուսանող, 2000 ուսուցիչ/դասախոս)՝ նախորդ տարվա համեմատ (8100) 11%-ով ավելի:

Երևանում Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը ունեցել է 7356 այցելու:

2015 թվականին Այցելուների կենտրոնի կրթական ծրագրերի շրջանակում շարունակվել են «Մեկ օր Կենտրոնական բանկում» խորագրով ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնական հաստատությունների զինծառայողների և սաների համար կազմակերպված կրթական միջոցառումները: Այս նախագծին միացել են նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սաներն ու դասախոսական կազմը: Տարվա ընթացքում Այցելուների կենտրոնում հյուրընկալվել են 770 զինծառայողներ/սաներ և դասախոսներ: 2015 թվականի մայիսին ՀՀ մշակույթի նախարարության առաջարկով Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնը առաջին անգամ մասնակցել է «Թանգարանային գիշեր» միջազգային ծրագրին, որի շրջանակներում ունեցել է 588 այցելու:

2015 թվականի սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 2-ը Կենտրոնական բանկը Վանաձոր քաղաքում կազմակերպել է «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը. ֆինանսներ բոլորի համար» հերթական ցուցահանդեսը: Այդօրինակ ցուցահանդեսների նպատակն է բնակչությանը, դպրոցականներին ծանոթացնել ազգային դրամի պատմությանը, դրամի պաշտպանական հատկանիշներին, ֆինանսաբանկային համակարգի հիմնական գործառույթներին, ներկայացնել ֆինանսական համակարգի ծառայություններից օգտվողների իրավունքները: Ցուցահանդեսը Վանաձորում ունեցել է մոտ 1600 այցելու (1130 աշակերտ/ուսանող, 470 ուսուցիչ/դասախոս, քաղաքացի):

2015 թվականին Այցելուների կենտրոնը համագործակցել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի (OSCE), Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF), Հայաստանի պատանեկան նվաճումներ (JAA) հասարակական կազմակերպության, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի (CARD), Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ՝ հյուրընկալելով Հայաստանի գրեթե բոլոր մարզերի դպրոցների աշակերտների: Կազմակերպվել են նաև կրթական-տեղեկատվական դասընթացներ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսների, Երևանի Վ. Վարդևանյանի անվան N173 հիմնական դպրոցի և N159 ավագ դպրոցի ուսուցիչների համար:

## Ներքին աուդիտ

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում է Վերստուգիչ խումբը, որը ձևավորվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի: Վերստուգիչ խումբն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգով (IPPF), ինչպես նաև Ներքին հսկողության «COSO Internal Control – Integrated Framework» և Տեղեկատվական տեխնոլոգիաների «CobIT» փաստաթղթերով:

Վերստուգիչ խմբի աշխատակիցներն անդամակցում են Ներքին աուդիտորների ինստիտուտին (IIA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիային (ISACA), Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցի-

12 Մանրամասն տե՛ս visitorcentre.cba.am, museum.cba.am, www.cba.am կայքէջերում:

ացիային (ACCA)՝ հանձնելով այդ կազմակերպությունների կողմից սահմանված համապատասխան միջազգային որակավորման քննություններ (CIA, CRMA, CISA, CRISC, ACCA): 2015 թվականին Վերստուգիչ խմբի երկու աշխատակիցներ որակավորվել են՝ ստանալով ACCA, CIA, CISA միջազգային որակավորման հավաստագրեր:

Վերստուգիչ խումբը, հիմնվելով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված՝ ռիսկերի վրա հիմնված տարեկան աուդիտի ծրագրի վրա, 2015 թվականին իրականացրել է աուդիտորական հանձնառություններ՝ ուղղված ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարչական գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Յուրաքանչյուր հանձնառության համար ներկայացվել է հաշվետվություն՝ համապատասխան առաջարկություններով և դրանց իրականացման համար անհրաժեշտ համաձայնեցված գործողություններով:

2015 թվականին Վերստուգիչ խումբը շարունակել է ակտիվ համագործակցել գործընկեր բանկերի և այլ կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ Գերմանիայի Բունդեսբանկ, Նիդեռլանդների բանկ, Իտալիայի բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ֆինանսական ներգրավվածության միություն (AFI), Ներքին աուդիտորների ինստիտուտ (IIA), Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա (ACCA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA):

# ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



2015 թվականին շարունակվել է հետազոտական և վերլուծական աշխատանքներով զբաղվող աշխատակիցների տեղափոխումը Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն: Տարվա ընթացքում Դիլիջան է տեղափոխվել 20 աշխատակից՝ տարեվերջի դրությամբ տեղափոխված աշխատակիցների թիվը կազմել է 144:

Որպես ժամանակակից տեխնիկական լուծումներով հագեցված կառույց՝ Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնը առանձնակի ուշադրություն է դարձնում գիտահետազոտական ոլորտում իրականացվող աշխատանքներին: Կենտրոնում իր գործունեությունն իրականացնող Տնտեսական հետազոտությունների վարչությունը, տնտեսագիտական տեսությունների անընդհատ զարգացմանը զուգընթաց, կիրառական տնտեսագիտության միջազգային փորձին համահունչ, շարունակել է իրականացնել մակրոտնտեսական և միկրոտնտեսագիտական հետազոտություններ՝ ուղղված դրամավարկային, ֆինանսական քաղաքականությունների արդյունավետ իրականացմանը: Այդ աշխատանքներում ներգրավված են նաև Հայաստանի և արտերկրի առաջատար բուհերի՝ հետազոտական կարողություններ ունեցող լավագույն մասնագետները: 2015 թվականին Դիլիջանի կենտրոնի տնտեսական հետազոտությունների վարչությունում մեկնարկել է աշխատանքային նոր փուլ. ամեն մի աշխատակցի համար ընտրվել է գիտահետազոտական աշխատանքի թեմա՝ յուրաքանչյուրին կցելով գիտական ղեկավար: Հետազոտողները բաժանվել են 4 հիմնական խմբի՝ գիտահետազոտական աշխատանքների առավել արդյունավետ և խորքային ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Վերջիններիս աշխատանքի արդյունքները՝ հոդվածները, նախատեսվում է հրատարակել համաշխարհային հռչակ ունեցող լավագույն պարբերականներում, հանդեսներում: Տարվա ընթացքում կազմակերպվել են խորացված տնտեսագիտական դասընթացներ, որոնք վարել են աշխարհի լավագույն բուհերից հրավիրված հեղինակավոր մասնագետներ (Յյուրիխի ճարտարագիտական համալսարան, Բարսելոնայի համալսարան, Նոտր Դամի համալսարան, Ստենֆորդի համալսարան և այլն): Փորձի փոխանակման և նորարար միջոցներին ծանոթանալու նպատակով Դիլիջանի կենտրոնն աշխատում է նաև գիտական ասպարեզում բարձր որակավորում ունեցող համալսարանների հետ: Կենտրոնը մեծ հետաքրքրություն է ներկայացնում օտարերկրյա մասնագետների, գիտնականների համար:


2015 թվականին Դիլիջանի կենտրոնում կազմակերպվել են Կենտրոնական բանկի անձնակազմի կառավարչական հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք դասընթացներ՝ «Շուկաների կառուցվածքի տեսություն», «Խորացված մակրոտնտեսագիտություն» և «Առաջնորդում» թեմաներով, որոնք վարել են Հարվարդի, Կոլումբիայի, Օքսֆորդի և Լոնդոնի կայսերական համալսարանների դասախոսները: Բացի այդ, անցկացվել է «Էմպիրիկ մակրո-

տնտեսագիտության ոլորտի նվաճումները և զարգացումը» թեմայով համաժողով, որին մասնակցել են համաշխարհային համբավ ունեցող 22 տնտեսագետներ: Կենտրոնում հաճախադեպ են դարձել տարբեր երկրների կենտրոնական բանկերի և միջազգային կազմակերպությունների մասնագետների այցերը: Դասընթացներին մասնակցել է Կենտրոնական բանկի 213 աշխատակից:

Դիլիջանի կենտրոնում երկու ամիս տևողությամբ ամառային աշխատանքային պրակտիկա է անցել Հարվարդի համալսարանի 5 ուսանող, Բոստոն խորհրդատվական խմբի 1 ուսանող, իսկ Ստենֆորդի համալսարանի 1 և Կալիֆոռնիայի Բերքլի համալսարանի 2 ուսանողի կողմից իրականացվել է հատուկ նախագիծ՝ մեծ թվային տվյալների հետ աշխատելու վերաբերյալ:

Ընդլայնվել են Կենտրոնական բանկի կառուցվածքում գտնվող «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնի աշխատանքները: Շարունակվել են տարբեր թիրախային խմբերի այցերը ՈՒՀԿ-ում գործող այցելուների կենտրոն ինչպես Դիլիջան քաղաքից, այնպես էլ հարակից բնակավայրերից: Տարվա ընթացքում գրադարանը ունեցել է շուրջ 1205 ընթերցող: Ավելացել է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի այցելուների թիվը՝ հասնելով 402-ի: «Թումո» կենտրոնում ուսանողները ծանոթանում են 21-րդ դարի զանազան հմտություններին, ինչպիսիք են 3D մոդելավորումը, գրաֆիկական դիզայնը, երաժշտությունը, լուսանկարչությունը, ռոբոտաշինությունը և այլն:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնում գործում է նաև «Զարգացման բաժինը», որտեղ ուսուցանում են օտար լեզուներ, մենեջմենթ, անցկացվում է «Զբոսաշրջության հյուրընկալման կառավարում» դասընթացը:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ**

# ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 71 |

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| *Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն* | 73 |
| *Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն* | 74 |
| *Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն* | 76 |
| *Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն* | 77 |

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| *1. Գործունեության նկարագրություն* | 79 |
| *2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում* | 80 |
| *3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ* | 102 |
| *4. Տոկոսային եկամուտ* | 109 |
| *5. Տոկոսային ծախս* | 109 |
| *6. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից* | 110 |
| *7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից* | 110 |
| *8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից* | 111 |
| *9. Այլ եկամուտ* | 111 |
| *10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր* | 112 |
| *11. Այլ ծախսեր* | 112 |
| *12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ* | 113 |
| *13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ* | 117 |
| *14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ* | 119 |
| *15. Ներդրումային արժեթղթեր* | 120 |
| *16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ* | 121 |
| *17. Հիմնական միջոցներ* | 125 |
| *18. Ոչ նյութական ակտիվներ* | 126 |
| *19. Այլ ակտիվներ* | 126 |
| *20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ* | 127 |
| *21. Այլ փոխառություններ* | 127 |
| *22. Այլ պարտավորություններ* | 128 |
| *23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության հանդեպ* | 129 |
| *24. Թողարկված պարտատոմսեր* | 130 |
| *25. Կապիտալի կառավարում* | 130 |
| *26. Պայմանական պարտավորություններ* | 132 |
| *27. Գործարքներ կապակցված կողմերի հետ* | 133 |
| *28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ* | 137 |
| *29. Ֆինանսական գործիքների իրական արժեք* | 137 |
| *30. Ռիսկերի կառավարում* | 144 |
| *31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն* | 160 |
| *32. Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների* | 162 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

## Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2015 թ. դրությամբ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին*

Մենք աուդիտի ենք ենթարկել կից ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և վերջինիս դուստր ընկերությունների (այսուհետև՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31 դեկտեմբերի 2015 թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և բացահայտումները, որոնք ներառում են ամփոփ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ և այլ բացատրական ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պատշաճ ներքին վերահսկողության համակարգի կիրառում:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք, հետևելով էթիկայի կանոններին, աուդիտը պլանավորենք և իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դա-

տողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և պատշաճ են՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2015 թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

**Ալտաֆ Տապիա**
*Գործադիր գործընկեր*

**Անահիտ Գյոզալյան**
*Աուդիտոր*

22 ապրիլի 2016 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

# Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 37,900,805 | 20,105,848 |
| Տոկոսային ծախս | 5 | (13,194,070) | (11,078,566) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **24,706,735** | **9,027,282** |
| Կոմիսիոն եկամուտ | | 74,272 | 126,103 |
| Կոմիսիոն ծախս | | (598,098) | (441,704) |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 6 | 3,622,430 | 30,384,095 |
| Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից | 7 | (2,326,440) | 5,549,363 |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | 8 | 1,729,051 | 2,742,597 |
| Այլ եկամուտ | 9 | 4,298,004 | 4,254,263 |
| Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 10 | (2,261,951) | (957,693) |
| Այլ ծախսեր | 11 | (18,697,378) | (18,839,977) |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | | **10,546,625** | **31,844,329** |
| Շահութահարկի գծով ծախս | | (1,201,644) | (661,845) |
| **Տարվա շահույթ** | | **9,344,981** | **31,182,484** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | |
| *Հոդվածներ, որոնք կարող են հետագայում վերադասակարգվել՝ ներառվելով շահույթի կամ վնասի կազմում* | | | |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված վնաս | | (1,351,040) | (1,016,791) |
| **Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | **(1,351,040)** | **(1,016,791)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **7,993,941** | **30,165,693** |
| **Շահույթը վերագրելի է** | | | |
| Բանկի սեփականատիրոջը | | 9,330,663 | 31,125,330 |
| Չվերահսկող բաժնեմասին | | 14,318 | 57,154 |
| **Տարվա շահույթ** | | **9,344,981** | **31,182,484** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքը վերագրելի է** | | | |
| Բանկի սեփականատիրոջը | | 7,976,405 | 30,108,539 |
| Չվերահսկող բաժնեմասին | | 17,536 | 57,154 |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **7,993,941** | **30,165,693** |

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016 թ. մարտի 31-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել.

**ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ**

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ***

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գլխավոր հաշվապահ***

*1-32 ծանոթագրությունները սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են:*

# Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ակտիվներ արտարժույթով** | | | |
| Կանխիկ դրամ | | 12,117,804 | 18,230,986 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 12 | 270,495,708 | 238,346,216 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 13 | 512,762,352 | 355,266,581 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 14 | 103,306 | - |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 15 | 2,222,840 | 2,718,999 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 15 | 63,733,713 | 94,150,359 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 16 | 63,055,674 | 66,268,240 |
| Այլ ակտիվներ | | 98,682 | 240,418 |
| **Ընդամենը ակտիվներ արտարժույթով** | | **924,590,079** | **775,221,799** |
| **Ակտիվներ տեղական արժույթով** | | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ | 12 | 316,776,643 | 381,855,350 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 13 | 1,665,748 | 2,117,870 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 15 | 101,286,020 | 127,026,270 |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | - | 2,757,046 |
| Հիմնական միջոցներ | 17 | 76,882,574 | 78,234,823 |
| Ոչ նյութական ակտիվներ | 18 | 1,739,384 | 1,781,769 |
| Այլ ակտիվներ | 19 | 12,593,456 | 10,248,776 |
| **Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով** | | **510,943,825** | **604,021,904** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **1,435,533,904** | **1,379,243,703** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Պարտավորություններ արտարժույթով** | | | |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 20 | 186,992,916 | 138,720,805 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 23 | 1,309,572 | 2,984,769 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 14 | 30,727 | 833,832 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 16 | 252,939,131 | 261,737,845 |
| Այլ փոխառություններ | 21 | 99,940,464 | 72,658,257 |
| Այլ պարտավորություններ | | 393,461 | 356,633 |
| **Ընդամենը պարտավորություններ արտարժույթով** | | **541,606,271** | **477,292,141** |
| **Պարտավորություններ տեղական արժույթով** | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 413,613,757 | 412,344,941 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 20 | 324,813,907 | 335,444,193 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 23 | 135,230,179 | 116,830,511 |
| Թողարկված պարտատոմսեր | 24 | 3,244,388 | 4,040,952 |
| Այլ պարտավորություններ | 22 | 3,014,206 | 2,373,446 |
| **Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով** | | **879,916,437** | **871,034,043** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **1,421,522,708** | **1,348,326,184** |

# Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*(շարունակություն)*

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|---|
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Թողարկված կապիտալ | 25 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | | 23,614,115 | 17,389,049 |
| Լրացուցիչ վճարված կապիտալ | 25 | 136,194,821 | 136,194,821 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | 25 | (1,131,000) | 223,258 |
| Կուտակված վնաս | | (145,493,256) | (123,698,589) |
| **Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ** | | **13,284,680** | **30,208,539** |
| **Չվերահսկող բաժնեմաս** | | **726,516** | **708,980** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | **14,011,196** | **30,917,519** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | **1,435,533,904** | **1,379,243,703** |

*1-32 ծանոթագրությունները սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են:*

# Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

*հազար ՀՀ դրամ*

| | Բանկի սեփականատիրոջը վերագրելի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Լրացուցիչ վճարված կապիտալ | Չգիշեցված կապիտալ | Լրացուցիչ չհիշեցված կապիտալի գոյացման | Դադարեցված գործունեության վերաբերյալ չիրականացված շահույթ | Դրամաշնորհներ | Ընդամենը | Չվերահսկվող մասնակցություն | Լրացուցիչ սեփական կապիտալ ընդամենը |
| **Մնացորդը 2014 թ. հունվարի 1-ին** | **100,000** | **17,389,049** | **128,185,512** | **1,240,049** | **(154,823,919)** | **(7,909,309)** | **651,826** | **(7,257,483)** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 31,125,330 | **31,125,330** | 57,154 | **31,182,484** |
| Այլ համապարփակ վնաս | - | - | - | (1,016,791) | - | **(1,016,791)** | - | **(1,016,791)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | - | - | - | **(1,016,791)** | **31,125,330** | **30,108,539** | **57,154** | **30,165,693** |
| ՀՀ կառավարության ցպահանջ անտոկոս մուրհակի տրամադրում | **-** | **-** | 8,009,309 | - | - | **8,009,309** | **-** | **8,009,309** |
| **Մնացորդը 2014 թ. դեկտեմբերի 31-ին** | **100,000** | **17,389,049** | **136,194,821** | **223,258** | **(123,698,589)** | **30,208,539** | **708,980** | **30,917,519** |
| Շահույթի բաշխում | - | 6,225,066 | - | - | (31,125,330) | **(24,900,264)** | - | **(24,900,264)** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 9,330,663 | **9,330,663** | 14,318 | **9,344,981** |
| Այլ համապարփակ վնաս | - | - | - | (1,354,258) | - | **(1,354,258)** | 3,218 | **(1,351,040)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | - | - | - | **(1,354,258)** | **9,330,663** | **7,976,405** | **17,536** | **7,993,941** |
| **Մնացորդը 2015 թ. դեկտեմբերի 31-ին** | **100,000** | **23,614,115** | **136,194,821** | **(1,131,000)** | **(145,493,256)** | **13,284,680** | **726,516** | **14,011,196** |

*1-32 ծանոթագրությունները սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են:*

# Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Շահույթ մինչև հարկումը | | 10,546,625 | 31,844,329 |
| *Ճշգրտումներ՝ տարվա շահույթը գործառնական գործունեությունից դրամական միջոցների բերելու համար.* | | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 11 | 4,798,352 | 4,575,453 |
| Հիմնական միջոցների օտարումից օգուտ | | (18,318) | (11,649) |
| Ստացվելիք տոկոսներ | | 492,606 | 2,593,742 |
| Վճարվելիք տոկոսներ | | 143,094 | (494,733) |
| Զուտ օգուտ արտարժույթի վերագնահատումից | 6 | (2,747,923) | (29,398,749) |
| Զուտ վնաս իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից | | 2,273,328 | 2,259,335 |
| Վճարված շահութահարկ | | (764,929) | (553,014) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները** | | **14,722,835** | **10,814,714** |
| ***Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում.*** | | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | | 35,363,728 | (37,350,827) |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | (164,127,883) | 173,021,619 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | | (41,714) | (7,407,611) |
| Բանկերում և այլ կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | | 65,488,664 | (140,114,875) |
| Այլ ակտիվներ | | 345,871 | (772,312) |
| ***Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում).*** | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 1,268,815 | (34,488,229) |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | | 38,355,781 | (8,130,400) |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | | 17,352,744 | (76,265,662) |
| Թողարկված պարտատոմսեր | | (796,564) | 1,781,249 |
| Այլ պարտավորություններ | | (72,015) | 436,177 |
| **Գործառնական գործունեությունից/(գործունեությամբ օգտագործված) դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **7,860,262** | **(118,476,157)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (3,198,718) | (2,855,458) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | 113,996 | 44,022 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների ձեռքբերում | | (90,363,945) | (105,173,398) |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների մարումից մուտքեր | | 119,874,639 | 133,846,115 |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | | **26,425,972** | **25,861,281** |

# Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
*(շարունակություն)*

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված վարկեր | | 42,113,260 | 28,518,405 |
| Մարված վարկեր | | (14,641,932) | (41,550,145) |
| **Ֆինանսական գործունեությունից/(գործունեությամբ օգտագործված) դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **27,471,328** | **(13,031,740)** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա** | | **(1,559,643)** | **15,872,344** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | | **60,197,919** | **(89,774,272)** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին | 28 | 206,405,683 | 296,179,955 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին** | 28 | **266,603,602** | **206,405,683** |
| Լրացուցիչ տեղեկատվություն | | | |
| Ստացված տոկոսներ | | 38,393,411 | 23,079,858 |
| Վճարված տոկոսներ | | (13,050,976) | (11,573,299) |

*1-32 ծանոթագրությունները սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են:*

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2015 թ.

## 1. Գործունեության նկարագրություն

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ՖՀՄՍ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ Բանկ) և վերջինիս դուստր ընկերությունների (այսուհետ միասին՝ Խումբ) գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2015 թվականին կազմել է 779 (2014 թ.՝ 791):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Օրենքի համաձայն՝ Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է, որն իրագործվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,

- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով՝ այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Բանկի խոշոր դուստր ընկերությունները ներկայացված են ստորև.

| Անվանումը | Հիմնադրման երկիրը | Հիմնական գործունեությունը | Վերահսկվող % | | Հիմնադրման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| | | | 2015 թ. | 2014 թ. | |
| Արմենիան Քարդ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վճարահաշվարկային ծառայություններ | 57.5 | 57.5 | մարտ 2000 թ. |
| Հայինկասացիա» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Դրամ. միջոցների փոխադրումներ | 100 | 100 | ապրիլ 1998 թ. |
| Համահայկական բանկ» ԲԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Բանկային գործունեություն | 100 | 100 | դեկտեմբեր 2009 թ. |
| «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային վերաֆինանսավորում | 100 | 100 | հունիս 2009 թ. |
| «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային վերաֆինանսավորում | 100 | 100 | փետրվար 2010 թ. |
| «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վարկավորման աջակցություն | 100 | 100 | դեկտեմբեր 2010 թ. |
| ««««Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն | 100 | 100 | դեկտեմբեր 2013 թ. |

## 2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

### Համապատասխանության մասին հայտարարություն

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան՝ Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների համար:

### Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները) և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման: Սույն

համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

**Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը**

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է հանգեցնել ՀՀ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, թեև նման գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

**Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է նաև Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

***Գնահատումների և դատողությունների կիրառում:*** Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

*Իրական արժեք:* Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

*Արժեզրկման վերլուծություն:* Խումբը պարբերաբար կատարում է փոխառությունների և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու վերլուծություն: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում, և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուների պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտե-

սական պայմանների փոփոխության մասին, որոնք հարաբերակցվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և վարկերի ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբն օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող վարկերի և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակն արտացոլելու նպատակով:

*Գործարքներ կապակցված կողմերի հետ:* Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքներ է կնքում կապակցված կողմերի հետ: ՀՀՄՍ 39-ով պահանջվում է ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչել իրենց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելիս՝ գործարքները գնանշվում են շուկայական, թե ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա այդպիսի գործարքների համար գործող շուկա: Դատողության համար հիմք են ծառայում չկապակցված կողմերի հետ համանման գործարքների գնանշումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը: Կապակցված կողմերի հետ մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են Ծանոթագրություն 27-ում:

*Արժույթի միջազգային հիմնադրամի* (այսուհետ՝ ԱՄՀ) *հետ գործարքների հաշվառում:* «ԱՄՀ գործարքները և ֆինանսական կազմակերպումը» փաստաթղթի համաձայն՝ ԱՄՀ յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

«Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկը հանդես է գալիս որպես ՀՀ ֆիսկալ գործակալ՝ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու:

Այն դեպքում, երբ Բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի մասին հաշվետվություններում: Երբ Բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի մասին հաշվետվություններում:

**Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում**

2015 թ. հունվարի 1-ից Խմբի համար պարտադիր են հետևյալ ստանդարտները և մեկնաբանությունները.

***Փոփոխություններ ՀՀՄՍ 19-ում «Սահմանված վճարումներով կենսաթոշակային ծրագրեր. Աշխատակիցների հատուցումներ») (հրապարակվել են 2013 թ. նոյեմբերին, ուժի մեջ են 2014 թ. հուլիսի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխությամբ թույլատրվում է կազմակերպություններին ճանաչել աշխատակիցների վճարումները որպես ծառայությունների արժեքի նվազեցում այն ժամանակաշրջանում, որում աշխատողի կողմից մատուցվել են համապատասխան ծառայությունները՝ վճարումները նրա ծառայության ողջ ժամանակաշրջանին վերագրելու փոխարեն, եթե աշխատողի վճարումների գումարը կախված չէ նրա աշխատանքային ստաժի տարիների քանակից: Այս փոփոխությունը որևէ էական ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***2012 թ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների տարեկան բարելավումներ (հրապարակվել են 2013 թ. դեկտեմբերին, ուժի մեջ են 2014 թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Բարելավումները ներառում են յոթ ստանդարտների փոփոխություններ:

ՖՀՄՍ 2-ում կատարվել են փոփոխություններ՝ հստակեցնելու «անցման պայմաններ» տերմինի սահմանումը, ինչպես նաև առանձին սահմանելու «գործունեության արդյունքների ապահովման պայմանները» և «ծառայության ժամկետի պայմանները»: Փոփոխությունն ուժի մեջ է բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներով գործարքների համար, որոնց տրամադրման ժամկետն է 2014 թ. հուլիսի 1-ը կամ դրանից հետո:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 3-ում՝ պարզաբանելու, որ. (1) պայմանական հատուցում վճարելու պարտավորությունը, որը համապատասխանում է ֆինանսական գործիքի սահմանմանը, դասակարգվում է որպես ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալ՝ ՀՀՄՍ 32-ի սահմանումներին համապատասխան, և (2) բոլոր ֆինանսական և ոչ ֆինանսական պայմանական հատուցումները, որոնք չեն հանդիսանում սեփական կապիտալ, չափվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխություններն արտացոլվում են շահույթում կամ վնասում: ՖՀՄՍ 3-ում փոփոխություններն ուժի մեջ են մտնում բիզնեսի միավորումների համար, որոնցում ձեռքբերման ամսաթիվն է 2015 թ. հուլիսի 1-ը կամ դրանից հետո:

Փոփոխություն է կատարվել ՖՀՄՍ 8-ում, որով պահանջվում է. (1) կատարել տեղեկատվության բացահայտումներ ղեկավարության մասնագիտական դատողությունների վերաբերյալ, որոնք կատարվել են գործառնական սեգմենտներն ագրեգացնելիս՝ ներառյալ ագրեգացված սեգմենտների և այն տնտեսական ցուցանիշների նկարագրությունը, որոնք գնահատվել են այն փաստը հաստատելիս, որ ագրեգացվող սեգմենտներն ունեն համանման տնտեսական բնութագրեր, և (2) կատարել սեգմենտների ակտիվների և ձեռնարկությունների ակտիվների համադրում, եթե ակտիվի սեգմենտները բացահայտվում են հաշվետվությունում:

Կատարվել է փոփոխություն ՖՀՄՍ 13-ի եզրակացությունների հիմքում, որով հստակեցվում է, որ ՖՀՄՍ 13-ի հրապարակումից հետո ՀՀՄՍ 39-ի որոշ պարբերությունների հեռացմամբ չի նախատեսվել վերացնել դեբիտորական և կրեդիտորական պարտքի գնահատման հնարավորությունն այն գումարով, որը նշված է հաշիվ-ապրանքագրում այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն էական չէ:

Փոփոխություններ են կատարվել ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում, որոնցով պարզաբանվում է, թե ինչպես պետք է հաշվառման մեջ արտացոլվեն համախառն հաշվեկշռային արժեքն ու կուտակված մաշվածությունը, երբ կազմակերպությունն օգտագործում է վերագնահատված արժեքով հաշվառման մոդելը:

Փոփոխություն է կատարվել ՀՀՄՍ 24-ում, ըստ որի կապակցված կողմ է համարվում նաև կազմակերպությունը, որը հաշվետու կազմակերպությանը կամ հաշվետու կազմակերպության մայր ընկերությանը մատուցում է հիմնական ղեկավար անձնակազմի տրամադրման ծառայություններ («ղեկավար կազմակերպություն»), և որով պահանջվում է բացահայտել տրամադրված ծառայությունների դիմաց ղեկավար կազմակերպության կողմից հաշվետու կազմակերպությանը հաշվեգրված գումարները:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***2013 թ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների տարեկան բարելավումներ (հրապարակվել են 2013 թ. դեկտեմբերին, ուժի մեջ են 2014 թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Բարելավումները ներառում են չորս ստանդարտների փոփոխություններ:

Կատարվել է փոփոխություն ՖՀՄՍ 1-ի եզրակացությունների հիմքում, որով հստակեցվում է, որ եթե ստանդարտի նոր տարբերակը դեռևս պարտադիր չէ, բայց թույլատրվում է վերջինիս ժամկետից շուտ ընդունումը, ՖՀՄՍ-ներն առաջին անգամ կիրառող կազմակերպությունը կարող է կիրառել ստանդարտի հին կամ նոր տարբերակը, պայմանով, որ հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ կիրառվում է ստանդարտի միևնույն տարբերակը:

Փոփոխություն է կատարվել ՖՀՄՍ 3-ում, որով պարզաբանվում է, որ ստանդարտը չի կիրառվում ՖՀՄՍ 11-ին համապատասխան ցանկացած համատեղ պայմանավորվածության կազմավորման հաշվառման նկատմամբ: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ ստանդարտի կիրառման շրջանակներից բացառումը գործում է միայն համատեղ պայմանավորվածության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ՖՀՄՍ 13-ում պորտֆելի վերաբերյալ բացառությունը, որը հնարավորություն է տալիս կազմակերպությանը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը գնահատել զուտ հիմունքով, կիրառվում է բոլոր պայմանագրերի նկատմամբ (ներառյալ՝ ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի պայմանագրերը), որոնք գտնվում են ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի կիրառման շրջանակներում:

Փոփոխություն է կատարվել ՀՀՄՍ 40-ում, որով պարզաբանվում է, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը իրար չեն բացառում: ՀՀՄՍ 40-ի ուղեցույցն օգնում է հաշվետվություններ կազմողներին տարբերակել ներդրումային

գույքը և սեփականատիրոջ զբաղեցրած գույքը: Հաշվետվություններ կազմողները պետք է ուսումնասիրեն նաև ՖՀՄՍ-ի ուղեցույցը՝ որոշելու, թե արդյոք ներդրումային գույքի ձեռքբերումը բիզնեսի միավորում է:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Համախմբման հիմունքներ.*** Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնցում կատարվել են ներդրումներ, և որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ Խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն այդ հատույցների վրա ազդելու համար: Մասնավորապես՝ Խումբն ունի վերահսկողություն միայն այն դեպքում, երբ.

- ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

Երբ Խումբն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում մեծամասնությունից քիչ քվեարկող բաժնետոմսեր կամ համանման այլ իրավունքներ, Խումբը դիտարկում է բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ գնահատելիս, թե արդյոք այն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողություն, ներառյալ.

- ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության քվեարկող բաժնեմասերի սեփականատերերի հետ պայմանագրային պայմանավորվածություն,
- այլ պայմանագրային պայմանավորվածություններից ծագող իրավունքներ,
- Խմբի քվեարկող բաժնետոմսեր և հնարավոր քվեարկող բաժնետոմսեր:

Խումբը վերագնահատում է, թե արդյոք այն վերահսկում է ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությանը, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ փոփոխություններ են տեղի ունեցել վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիսում: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակերպության նկատմամբ, և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված շահույթը բացառվում է. չիրացված վնասները նույնպես բացառվում են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը, առանց վերահսկողության փոփոխության, հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարքներ: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի և զուտ արդյունքների մասն է, որը վերագրելի է այն բաժնեմասին, որի սեփականության իրավունքն ուղղակի կամ անուղղակի կերպով չի պատկանում Խմբին: Չվերահսկող բաժնեմասը կազմում է Խմբի սեփական կապիտալի առանձին բաղադրիչը:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում ՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռք բերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

***Ասոցիացված կազմակերպություններ.*** Ասոցիացված ընկերություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ Խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գուդվիլը՝ հանած կուտակված արժեզրկման կորուստներ (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված ընկերության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (i) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ որպես ասոցիացված ընկերությունների արդյունքի մաս, (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (iii) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես ասոցիացված ընկերության արդյունքների մաս:

Սակայն, երբ ասոցիացված կազմակերպության վնասներում Խմբի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին՝ ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, Խումբն այլևս չի ճանաչում հետա-

գա վնասները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

***Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում.*** Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները) վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 483.75 | 474.97 |
| ՀՀ դրամ/1 եվրո | 528.69 | 577.47 |
| ՀՀ դրամ/1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք) | 670.35 | 688.09 |

***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.*** Դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք անմիջապես փոխարկելի են կանխիկի որոշակի գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է սկզբնավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված վճարներն ու մուտքերը իրենցից ներկայացնում են Խմբի դրամական միջոցների և դրանց համարժեքների փոխանցումները՝ ներառյալ

Խմբում առկա՝ Խմբի գործընկերների ընթացիկ հաշիվներին ծախսագրված կամ կրեդիտագրված գումարները, ինչպիսիք են վարկի հիմնական գումարի կամ տոկոսային եկամտի հավաքագրումը՝ հաճախորդի ընթացիկ հաշվի ծախսագրման միջոցով, տոկոսային վճարները կամ վարկի գումարի տրամադրումը՝ գործընկերոջ ընթացիկ հաշվի կրեդիտագրման միջոցով, ավանդների տեղաբաշխումը՝ գործընկերների ընթացիկ հաշվից նրանց ավանդային հաշվին միջոցների փոխանցման միջոցով, ինչը ներկայացնում է դրամական միջոցներ կամ դրանց համարժեքներ՝ գործընկերոջ տեսանկյունից:

***Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ.*** Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, վաճառքի համար մատչելի ակտիվները, և ածանցյալ գործիքները, իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

*Իրական արժեքն* այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայում գինն է: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են՝ զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ. (i) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով. (ii) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են. (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

*Գործարքի հետ կապված ծախսումները* լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին վճարված գումարները և կոմիսիոն վճարները, կարգավորման գործակալությունների կողմից և արժեթղթերի փոխանակումներից գանձումները, գույքի սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի պարգևավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

*Ամորտիզացված արժեքն* այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները, և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասի գծով ցանկացած նվազեցում:

Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և մինչև մարման գումարը ցանկացած պարգևավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը՝ ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ պարգևավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք), առանձին չեն ներկայացվում, այլ ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

*Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը* համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույքի):

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային ծախսերը) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը՝ բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները և զեղչերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածում: Ներկա ար-

ժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

*Սկզբնական ճանաչում*

Համաձայն ՀՀՄՍ 39-ի դրույթների՝ ֆինանսական գործիքները դասակարգվում են համապատասխանաբար որպես ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ, վաճառքի համար մատչելի ակտիվներ: Ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չճանաչվող ներդրումների պարագայում՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում կարող են վերադասակարգվել ստորև նշված դեպքերում:

*Ճանաչման ամսաթիվ*

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետում:

*Ֆինանսական ակտիվներ՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող*

«Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ» դասում ներառվում են որպես առևտրային նպատակով պահվող դասակարգված ֆինանսական գործիքները: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել կարճ ժամանակահատվածում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդյունավետ հեջավորման գործիքներ են: Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում արտարժույթի փոխանակման և կապիտալի շուկաներում կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների՝ ներառյալ ֆյուչերսների, ֆորվարդների և սվոփերի զանազան պայմանագրեր: Այդպիսի ֆինանսական գործիքները պահվում են առևտրային նպատակներով և հաշվառվում են իրական արժեքով: Իրական արժեքները գնահատվում են գնանշված շուկայական գների կամ գնային մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում հիմքում ընկած գործիքի ընթացիկ շուկայական և պայմանագրային գները կամ այլ գոր-

ծոններ: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ, երբ իրական արժեքը դրական է, և որպես պարտավորություններ՝ երբ այն բացասական է: Տվյալ գործիքներից առաջացող օգուտներն ու վնասները ներառվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ կամ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ/(վնաս)՝ կախված գործիքի բնույթից:

Այլ ֆինանսական գործիքներում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը ուղիղ կապված չեն դրանց հիմնական պայմանագրերի հետ, և հիմնական պայմանագիրը չի պահվում առևտրային նպատակով կամ նշանակված չի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Հիմնական պայմանագրերից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են առևտրային պայուսակում իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում:

*Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ*

Հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ակտիվները, որոնք Խումբը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Խումբը մտադրված է պահել անորոշ ժամկետով, չեն ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով: Օգուտներն ու վնասները ճանաչվում են համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, երբ ակտիվներն արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

*Փոխառություններ և դեբիտորական պարտքեր*

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չեն անհապաղ կամ մոտ ապագայում վաճառքի համար և չեն դասակարգվում որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում միջոցները, միջոցները ԱՄՀ-ում, վարկերը և հակադարձ հետգնման պայմանագրերը, ներդրումները՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր: Այդպիսի ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու վնասները շահույթի կամ վնասի կազմում ճանաչվում են, երբ փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

*Վաճառքի համար մատչելի ակտիվներ*

Վաճառքի համար մատչելի ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ որոնք դասակարգված չեն վերը թվարկված երեք կատեգորիաներում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, ընդ որում՝ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում մինչև ակտիվների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Տոկոսները, որոնք հաշվարկվել էին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

*Ֆինանսական ակտիվների վերադասակարգում*

Եթե ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվ, սակայն մոտ ժամանակաշրջանում վաճառելու մտադրություն չկա, ապա այն կարող է վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից, հետևյալ դեպքերից մեկում՝

- այն ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վերոնշյալ փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի դրանք պահելու մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը,
- առևտրային նպատակով պահվող այլ ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել որպես վաճառքի համար մատչելի կամ մինչև մարումը պահվող ֆինանսական ակտիվներ հազվադեպ հանգամանքներում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվը, փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը համապատասխանելու դեպքում, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի պահելու դրանք մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրենց իրական արժեքով վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ցանկացած շահույթ կամ վնաս, որը ճանաչվել է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չի հակադարձվում: Վերադասակարգման ամսաթվով ճանաչված ֆինանսական ակտիվի իրական արժեքը դառնում է նրա նոր ինքնարժեք կամ ամորտիզացված արժեք:

*Ներգրավված փոխառու միջոցներ*

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն՝ փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ,

կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

***Զրոյական տոկոսադրույքով վարկերի հաշվառում.*** Խմբի կողմից միջազգային ֆինանսական հաստատություններից զրոյական տոկոսադրույքով ստացված միջոցների օգուտը դիտարկվում և հաշվառվում է որպես պետական շնորհ: Զրոյական տոկոսադրույքով օգուտը չափվում է որպես ստացված միջոցների իրական արժեքի և միջոցների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ ստացված և որպես հետաձգված եկամուտ ճանաչված մուտքերի միջև տարբերություն: Հետաձգված եկամտի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում Խումբը որպես ծախս է ճանաչում համապատասխան ծախսումները: Կատարվում է շնորհին վերաբերող եկամտի չափով նվազեցում՝ համապատասխան ծախսը ներկայացնելիս:

***Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում.*** Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ո՛չ փոխանցել ու ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Խմբի շարունակվող մասնակցության չափով:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետգնել փոխանցված ակտիվը՝ բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղարկվում կամ դադարում է:

Եթե փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքը փոխարինվում է մեկ այլ պարտքային գործիքով, որի պայմաններն էականորեն տարբերվում են, կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, այդպիսի փոխարինումը կամ փոփոխությունը հանգեցնում է այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

***Հաշվանցում.*** Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հաշվանցման այդպիսի իրավունքը (ա) չպետք է պայմանավորված լինի հետագա իրադարձությամբ և (բ) պետք է իրավաբանորեն կիրառելի լինի հետևյալ բոլոր հանգամանքներում. (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

***Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր.*** Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ: Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշ-

վեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

***Փոխառության տրված և ստացված արժեթղթեր.*** Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակում են հաշվառվել համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրաված արժեթղթերն արտացոլվում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառելու դեպքում:

Այս դեպքում առուվաճառքի գործարքները հաշվառվում են շահույթում կամ վնասում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքներից զուտ շահույթի կազմում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունն արտացոլվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններում:

***Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ.*** Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս այն տարում, որի ընթացքում կատարվել են:

***Դրամագիտական արժեքներ.*** Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

***Հիմնական միջոցներ.*** Հիմնական միջոցները հաշվառված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշները: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը որպես առանձին ակտիվներ՝ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով, և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

***Մաշվածություն.*** Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների հետևյալ օգտակար ծառայության ժամկետի ընթացքում.

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Հող և շենքեր | | |
| – Շենքեր | 30-80 տարի | 30- 80 տարի |
| – Շենքերի սպասարկման համակարգեր | 3-15 տարի | 3-15 տարի |
| Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ | 2-20 տարի | 2-15 տարի |
| Փոխադրամիջոցներ | 5 տարի | 5 տարի |

Ակտիվի մնացորդային արժեքն ակտիվի այն մոտավոր գումարն է, որը Խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվն արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

***Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ.*** Ոչ ընթացիկ ակտիվները, որոնք կարող են ներառել ինչպես ոչ ընթացիկ, այնպես էլ ընթացիկ ակտիվներ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ դասակարգվում են որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվը, «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ» դասակարգվելու համար, պետք է բավարարի հետևյալ բոլոր պայմանները. ա) ակտիվը իր ներկա վիճակում պետք է պատրաստ (մատչելի) լինի անմիջապես վաճառքի համար. բ) Խմբի ղեկավարությունը պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր. գ) ակտիվը ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում. դ) պետք է ակնկալվի, որ մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտված վաճառք ճանաչվելու պայմանները. ե) պլանն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցուցանշեն, որ պլանում նշանակալի փոփոխությունների կատարումը կամ պլանի դադարեցումը հավանական չէ: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները չափվում են իրենց հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի և վաճառքի գծով ծախսումների տարբերությունից նվազագույնով: Վաճառքի համար պահվող գույքի համար մաշվածություն չի հաշվարկվում:

***Ոչ նյութական ակտիվներ.*** Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Չեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան ճանաչումից և արժեզրկումից կուտակված վնասները: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1-7 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանց կատարման ժամանակ:

### *Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ. Խումբը որպես վարձակալ*

Ակտիվի այն վարձակալությունը, որով չի նախատեսվում վարձատուից Խմբին ակտիվի սեփականության հետ կապված գործնականորեն բոլոր ռիսկերի և հատույցների փոխանցում, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության վճարները ճանաչվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես այլ գործառնական ծախսեր:

***Արժեզրկում.*** Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խումբն իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ՝ որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվություն կստացվի ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ. օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք հարաբերակցվում են վճարման պարտավորությունների խախտումների հետ:

*Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ*

Ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված այն միջոցների համար, որոնց հաշվառումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշերը անհատապես՝ էական ակտիվների համար կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրեր ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով, և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայության դեպքում արժեզրկումից վնասն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ՝ վարկի հետ կապված դեռևս չկրած ապագա ծախսերի) ներկա արժեքի տարբերությունը:

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության մեջ: Տոկոսային եկամուտը հաշվեգրվում է ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե հետագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ:

Հնարավոր ապագա դրամական հոսքերի բերված արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ֆինանսական գործիքը տրամադրված է լողացող տոկոսադրույքով, ապա արժեզրկումից վնասների չափման նպատակով զեղչման դրույքաչափը կլինի ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը: Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի ձեռքբերման և օտարման ծախսումներով՝ անկախ իրացման հավանականությունից:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակն արտացոլելու համար՝ բացառելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ՝ գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

*Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ*

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները Խումբը գնահատում է անհատականորեն, եթե առկա են արժեզրկման հայտանիշեր: Եթե արժեզրկման հետևանքով վնասի առկայության օբյեկտիվ հայտանիշեր կան, վնասի արժեքը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և հետագայում ակնկալվող դրամական հոսքերի ներկա բերված արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը պակասեցվում է, և վնասը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե որևէ տարվա ընթացքում արժեզրկումից ակնկալվող վնասի գումարը նվազում է արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով, նախկինում հաշվառված գումարները ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ:

*Վաճառքի համար մատչելի ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է վաճառքի համար մատչելի ակտիվների կամ ներդրումների կամ դրանց խմբի արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայությունը:

Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերից է ներդրման իրական արժեքի նշանակալի կամ էական նվազումը սկզբնական արժեքից: Երբ կա արժեզրկման հայտանիշ, կուտակված վնասը, որը գնահատվում է որպես ձեռքբերման գնի և ներկա իրական արժեքի միջև տարբերություն՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված՝ այդ ներդրման գծով

արժեզրկման կորուստները, վերադասակարգվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքից շահույթի կամ վնասի կազմ:

Բաժնային ներդրումների արժեզրկման գծով վնասները չեն հակադարձվում համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով. դրանց իրական արժեքի ավելացումներն արժեզրկումից հետո ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի առկայության գնահատումն իրականացվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նման: Ապագա տոկոսային եկամուտը հաշվեգրվում է՝ օգտագործելով այն դրույքաչափը, որն արժեզրկման վնասներն արտացոլելու նպատակով կիրառվել է ապագա դրամական հոսքերի զեղչման ժամանակ:

Տոկոսային եկամուտն արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե հաջորդող տարվա ընթացքում պարտքային գործիքի իրական արժեքն աճում է այնպիսի իրադարձությունների պատճառով, որոնք տեղի են ունեցել արժեզրկման գծով վնասները համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվելուց հետո, ապա նախկինում արժեզրկման գծով ծախսը հակադարձվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով:

***Ոչ ֆինանսական ակտիվներ.*** Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ, կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված, և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը զեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում

է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

***Պահուստներ.*** Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, իսկ պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

***Հարկում.*** Խումբն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից՝ բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Խումբը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Խմբի դուստր կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր:

***Թողարկված կապիտալ.*** Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում, Օրենքի 11.4 հոդվածի համաձայն, Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես ***լրացուցիչ կապիտալ***:

***Շահույթի բաշխում.*** Բանկի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը.
- շահույթի 80%-ն ուղղվում է Կառավարության կողմից բանկին տրամադրված հասարակ մուրհակների մարմանը՝ դրա համար անհրաժեշտ գումարի չափով:

Նշված մասհանումները կատարելուց հետո ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Բանկի բաշխման ենթակա շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով:

***Պայմանական ակտիվներ և պարտավորություններ.*** Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված միջոցների արտահոսքը

համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, սակայն բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

***Տոկոսային եկամուտներ և ծախսեր.*** Բոլոր այն ֆինանսական գործիքների համար, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով, և բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, տոկոսային եկամուտն ու ծախսը հաշվառվում են արդյունավետ տոկոսադրույքով, որի միջոցով ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի օգտագործման ենթադրվող ողջ ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և կոմիսիոն կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի ճանաչված արժեքը նվազել է արժեզրկման կորուստների արդյունքում, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ կիրառելով նոր հաշվեկշռային արժեքը:

***Կոմիսիոն եկամուտ.*** Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակած կոմիսիոն վճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

## 3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Խումբը ժամկետից շուտ չի ընդունել այդ հրապարակումներից որևիցե մեկը:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Խմբի հաշվապահական

հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ. դասակարգումը և չափումը» (փոփոխվել է 2014 թ. հուլիսին և ուժի մեջ է 2018 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** *Նոր ստանդարտի հիմնական հատկանիշներն են.*

- Պահանջվում է, որպեսզի ֆինանսական ակտիվները դասակարգվեն երեք չափման կատեգորիաների. ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ, այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ (FVOCI) և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ (FVPL):
- Պարտքային գործիքների դասակարգումը պայմանավորված է կազմակերպության՝ ֆինանսական ակտիվներ կառավարելու բիզնես մոդելով և նրանով, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարումներ են (ԲՀՏՎ): Եթե պարտքային գործիքը պահվում է հոսքերի ստացման նպատակով, ապա կարող է հաշվառվել ամորտիզացված արժեքով, եթե այն նույնպես բավարարում է ԲՀՏՎ պահանջը: ԲՀՏՎ պահանջը բավարարող պարտքային գործիքները, որոնք պահվում են այնպիսի պորտֆելում, որտեղ կազմակերպությունը պահում է ակտիվներ ինչպես դրամական հոսքերի հավաքագրման, այնպես էլ ակտիվները վաճառելու նպատակով, կարող են դասակարգվել որպես այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ (FVOCI): Ֆինանսական ակտիվները, որոնք չեն պարունակում ԲՀՏՎ դրամական հոսքեր, պետք է դասակարգվեն որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ (օրինակ՝ ածանցյալները): Պարունակվող ածանցյալ գործիքներն այլևս չեն առանձնացվում ֆինանսական ակտիվներից, սակայն ընդգրկվելու են ԲՀՏՎ պայմանը գնահատելու ժամանակ:
- Բաժնային գործիքներում ներդրումները միշտ չափվում են իրական արժեքով: Այնուամենայնիվ ղեկավարությունը կարող է անփոփոխ ընտրություն կատարել՝ իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ եկամտում, եթե գործիքը չի պահվում առևտրի նպատակով: Եթե բաժնային գործիքը պահվում է առևտրի նպատակով, ապա իրական արժեքի փոփոխությունները ներկայացվում են շահույթում կամ վնասում:
- Ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար նախատեսված ՀՀՄՍ 39 պահանջների մեծ մասը անփոփոխ է մնացել ՖՀՄՍ 9-ի նկատմամբ: Հիմնական փոփոխությունն այն է, որ պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը, որպես իրական արժեքով, շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախա-

տեսված ֆինանսական պարտավորությունների սեփական վարկային ռիսկերի հետ կապված փոփոխության արդյունքները ներկայացնի այլ համապարփակ եկամտում:

- ՖՀՄՍ 9-ը ներկայացնում է արժեզրկումից կորուստների ճանաչման նոր մոդել՝ ակնկալվող վարկային կորուստների (ԱԿՎ) մոդելը: Գոյություն ունի, այսպես կոչված՝ «երեք փուլ» մոտեցում, որը հիմնված է ֆինանսական ակտիվների վարկային որակի՝ սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած փոփոխության վրա: Գործնականում նոր կանոնները նշանակում են, որ կազմակերպությունները չարժեզրկված ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման պահին անմիջապես պետք է գրանցեն 12-ամսյա ԱԿՎ-ին հավասար կորուստ (կամ տևական ԱԿՎ՝ դեբիտորական պարտքերի գծով): Եթե գրանցվել է վարկային ռիսկի զգալի աճ, արժեզրկումը չափվում է տևական ԱԿՎ մոդելով՝ 12-ամսյա ԱԿՎ մոդելի փոխարեն: Այս մոդելը ներառում է գործառնական պարզեցումներ վարձակալության և դեբիտորական պարտքերի համար:
- Հեջավորման հաշվապահական պահանջները փոփոխվել են հաշվապահական հաշվառումը ռիսկերի կառավարմանն ավելի մոտեցնելու նպատակով: Ստանդարտը կազմակերպություններին հնարավորություն է տալիս ընտրություն կատարելու հաշվապահական հաշվառման քաղաքականությունների միջև՝ կիրառել ՖՀՄՍ 9-ի հեջավորման հաշվապահական պահանջները կամ շարունակել կիրառել ՀՀՄՍ 39-ը բոլոր հեջերի համար, քանի որ այս ստանդարտը ներկայումս մակրոհեջավորման հաշվապահական հաշվառմանը չի անդրադառնում:

Ներկայումս Խումբը գնահատում է նոր ստանդարտների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ» (հրապարակվել է 2014 թ. մայիսին և ուժի մեջ է 2017 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար).*** Ըստ նոր ստանդարտի ներկայացրած հիմնական սկզբունքի՝ հասույթը պետք է ճանաչվի գործարքի գնով՝ ապրանքների կամ ծառայությունների հաճախորդին փոխանցման պահին: Կապակցված ապրանքները կամ ծառայությունները, որոնք տարբերվում են իրարից, պետք է ճանաչվեն առանձին, և պայմանագրի գնի համար կիրառվող զեղչերը կամ նվազեցումները պետք է բաշխվեն ըստ առանձին տարրերի: Եթե հատուցումը ինչ-որ պատճառով տարբերվում է, ապա ճանաչումը պետք է լինի նվազագույն գումարով, եթե դրանք չեն պարունակում հակադարձման էական ռիսկ: Ծախսերը, որոնք կապված են հաճախորդների պայմանագրերի ապահովման հետ, պետք է կապիտալացվեն և ամորտիզացվեն այն ժամանակահատվածում, որի ընթացքում սպառվում են պայմանագրի օգուտները: Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» (հրապարակվել է 2016 թ. հունվարին և ուժի մեջ է 2019 թ. հունվարի 1-ից սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Նոր ստանդարտը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները: Բոլոր

վարձակալությունների արդյունքում վարձակալը ձեռք է բերում ակտիվի օգտագործման իրավունք հենց վարձակալության սկզբից, և եթե վարձակալության վճարները կատարվում են ժամանակի ընթացքում, նաև ձեռք է բերում ֆինանսավորում: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ը վերացնում է վարձակալության դասակարգումը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 17-ով, և ներկայացնում է վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման միասնական մոդել:

Վարձակալը պետք է ճանաչի՝ ա) ակտիվներ և պարտավորություններ բոլոր այն վարձակալությունների համար, որոնց ժամկետը 12 ամսից ավելի է՝ բացառությամբ, եթե հիմքում ընկած ակտիվն ունի փոքր արժեք, և բ) ֆինանսական արդյունքների հաշվետվությունում վարձակալած ակտիվի մաշվածությունը վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախսից առանձին: ՖՀՄՍ 16-ը հիմնականում պահպանում է վարձատուի հաշվապահական հաշվառման ՀՀՄՍ 17-ի պահանջները: Հետևաբար, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն, և հաշվառել այս երկու տեսակի վարձակալությունները տարբեր ձևով: Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Չիրացված վնասի գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչում - Փոփոխություն ՀՀՄՍ 12-ում (հրապարակվել է 2016 թ. հունվարին և ուժի մեջ է 2017 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխությունը պարզաբանում է պարտքային գործիքներից առաջացած չիրացված վնասի գծով հետաձգված հարկային ակտիվի ճանաչման պահանջները: Կազմակերպությունը պետք է ճանաչի հետաձգված հարկային ակտիվ չիրացված վնասի գծով, որն առաջանում է պարտքային գործիքից ակնկալվող դրամական հոսքերը շուկայական տոկոսադրույքներով զեղչելիս, նույնիսկ եթե կազմակերպությունն ակնկալում է պահել դրանք մինչև մարման ժամկետ, և մարման արդյունքում ոչ մի հարկ չի վճարվելու: Հետաձգված հարկային ակտիվում մարմնավորված տնտեսական օգուտներն առաջանում են պարտքային գործիքը տիրապետողի՝ հետագա օգուտներ (զեղչման ազդեցությունը չեզոքացնելու արդյունքում) ունենալու հնարավորությունից, որոնց համար հարկ չի վճարում: Ներկայումս Խմբի ղեկավարությունը գնահատում է փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Բացահայտման նախաձեռնություն – Փոփոխություն ՀՀՄՍ 7-ում (հրապարակվել է 2016 թ. հունվարի 29-ին և ուժի մեջ է 2017 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխված ՀՀՄՍ 7-ը պահանջելու է ֆինանսական գործունեությունից առաջացող պարտավորությունների շարժի համաձայնեցում: Ներկայումս Խմբի ղեկավարությունը գնահատում է փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Համատեղ գործառնություններում շահերի ձեռքբերման հաշվապահական հաշվառում - Փոփոխություններ ՖՀՄՍ 11-ում (հրապարակվել է 2014թ. մայիսին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխությունը

ներկայացնում է բիզնեսի բաղկացուցիչ կազմող համատեղ գործառնությունում շահի ձեռքբերման հաշվապահական հաշվառման վերաբերյալ նոր ուղեցույց: Ակնկալվում է, որ փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում (հրապարակվել է 2014 թ. մայիսին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Այս փոփոխությամբ ՀՀՄՍԽ-ն պարզաբանում է, որ ակտիվի մաշվածության՝ ըստ հասույթի հաշվարկման մեթոդները կիրառելի չեն, քանի որ ակտիվի օգտագործման արդյունքում ստեղծված հասույթը հիմնականում արտացոլում է այլ գործոններ, քան ակտիվում մարմնավորված տնտեսական օգուտների սպառումն է: Ակնկալվում է, որ փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Ներդրողի և Ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ տրամադրում – Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (հրապարակվել է 2014 թ. սեպտեմբերին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառքին կամ տրամադրմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների հիմնական արդյունքն այն է, որ ամբողջ օգուտը կամ վնասը ճանաչվում է, եթե գործարքը ներառում է բիզնես: Մասնակի օգուտ կամ վնաս ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ակտիվներ, որոնք չեն հանդիսանում բիզնես, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Ներկայումս Խմբի ղեկավարությունը գնահատում է փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ, 2014 (հրապարակվել է 2014 թ. սեպտեմբերին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխություններն ազդում են 4 ստանդարտների վրա:

ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ օտարման ձևի փոփոխությունը («վաճառքի համար մատչելի»-ից վերադասակարգում «բաշխման համար մատչելի»-ի կամ հակառակը) չի համարվում վաճառքի կամ բաշխման ծրագրի փոփոխություն և չպետք է հաշվառվի որպես այդպիսին:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունը ներկայացնում է ուղեցույց, որը օգնելու է ղեկավարությանը որոշելու, թե արդյոք փոխանցված ֆինանսական ակտիվի սպասարկման մասին պայմանագրի պայմանները ենթադրում են շարունակվող ներգրավվածություն՝ ելնելով ՖՀՄՍ 7-ի բացահայտումների պահանջներից: Փոփոխությունը պարզաբանում է նաև, որ ՖՀՄՍ 7-ի հաշվանցման բացահայտումները պարտադիր չեն բոլոր միջանկյալ ժամանակաշրջանների համար, եթե չի պահանջվում ՀՀՄՍ 34-ով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունը պարզաբանում է, որ հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների համար զեղչման դրույքի, բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերի զարգացած շուկայի առկայության կամ պետական պարտատոմսերի ընտրելու վերաբերյալ որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի այն արժույթը, որով սահմանված են պարտավորությունները, և ոչ թե այն երկիրը, որտեղ դրանք առաջանում են:

ՀՀՄՍ 34-ը պահանջում է միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում հղում կատարել դեպի «միջանկյալ ֆինանսական հաշվետվության որևէ տեղ բացահայտված տեղեկատվության»: Ակնկալվում է, որ փոփոխությունները որևէ էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Բացահայտման նախաձեռնության փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում (հրապարակվել է 2014 թ. դեկտեմբերին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Այս ստանդարտի փոփոխության նպատակն է՝ հստակեցնել էականության սկզբունքը: Այն պարզաբանում է, որ կազմակերպության համար պարտադիր չէ ներկայացնել ցանկացած ՖՀՄՍ-ի պահանջով կատարվող որևէ կոնկրետ բացահայտում, եթե այդ բացահայտման արդյունքում ստացված տեղեկությունն էական չէ, նույնիսկ եթե ՖՀՄՍ-ն պարունակում է կոնկրետ պահանջների ցանկ կամ դրանք ներկայացնում որպես նվազագույն պահանջներ:

Ստանդարտը ներկայացնում է նաև ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում օգտագործվող միջանկյալ արդյունքների վերաբերյալ: Մասնավորապես՝ այդ միջանկյալ արդյունքները պետք է. (ա) կազմված լինեն ՖՀՄՍ-ի համաձայն ճանաչված և չափված գումարներից կազմված հոդվածներից, (բ) ներկայացվեն և անվանվեն այնպես, որպեսզի միջանկյալ արդյունք կազմող հոդվածները լինեն հստակ և հասկանալի, (գ) հետևողականորեն ունենան նույն կառուցվածքը մեկ ժամանակաշրջանից մյուսը և (դ) չներկայացվեն ավելի շեշտադրված, քան ՖՀՄՍ ստանդարտներով պահանջվող միջանկյալ և վերջնական արդյունքները: Ներկայումս Խմբի ղեկավարությունը գնահատում է փոփոխությունների ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Ներդրումային կազմակերպություններ. Համախմբման բացառության կիրառման փոփոխություն ՖՀՄՍ 10-ի, ՖՀՄՍ 12-ի և ՀՀՄՍ 28-ի համար (հրապարակվել է 2014 թ. դեկտեմբերին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Ստանդարտի փոփոխությունը հստակեցնում է, որ ներդրումային կազմակերպությունը իր այն բոլոր դուստր կազմակերպությունները, որոնք ինքնին համարվում են ներդրումային կազմակերպություններ, պետք է չափի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բացի այդ, փոփոխությունը հստակեցնում է, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու բացառությունը այն դեպքում, երբ վերջնական կամ որևէ միջանկյալ մայր կազմակերպություն ներկայացնում է հանրության կողմից օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություն, կիրառվում է անկախ նրանից, թե այդպիսի վերջնական կամ որևէ միջանկյալ մայր կազմակերպության ֆինանսա-

կան հաշվետվություններում դրանք ներկայացվում են որպես համախմբված դուստր կազմակերպություններ, թե չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով՝ ՖՀՄՍ 10-ի պահանջով: Ակնկալվում է, որ փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետևյալ նոր ստանդարտները, ակնկալվում է, որ որևէ էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, երբ ուժի մեջ մտնեն.

- ՖՀՄՍ 14 - «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (հրապարակվել է 2014 թ. հունվարին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Գյուղատնտեսություն. Բերքատու բույսեր - Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 41-ում (հրապարակվել է 2014 թ. հունիսի 30-ին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բաժնեմասնակցության մեթոդն առանձին ֆինանսական հաշվետվություններում - Փոփոխություններ ՀՀՄՍ 27-ում (հրապարակվել է 2014 թ. օգոստոսին և ուժի մեջ է 2016 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների համար):

## 4. Տոկոսային եկամուտ

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով** | | |
| Մինչև մարումը պահվող ակտիվներ | 296,485 | 366,438 |
| Ժամկետային ավանդներ | 157,314 | 105,783 |
| Նոստրո հաշիվներ | 121,076 | 73,406 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 784 | 2,159 |
| Այլ | 49,582 | 48,103 |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով** | **625,241** | **595,889** |
| **Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով** | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ | 35,031,817 | 17,471,143 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 2,243,747 | 2,038,816 |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով** | **37,275,564** | **19,509,959** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **37,900,805** | **20,105,848** |

## 5. Տոկոսային ծախս

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | | |
| Այլ փոխառություններ | 1,362,662 | 751,284 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 1,137,224 | 1,199,188 |
| Այլ | 1,867 | 6,745 |
| **Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | **2,501,753** | **1,957,217** |
| **Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | | |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ (Ծնթգ. 27) | 10,008,453 | 8,217,776 |
| Թողարկված պարտատոմսեր | 357,806 | 336,209 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 240,398 | 448,993 |
| Այլ | 85,660 | 118,371 |
| **Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | **10,692,317** | **9,121,349** |
| **Ընդամենը տոկոսային ծախս** | **13,194,070** | **11,078,566** |

## 6. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Զուտ օգուտ արտարժույթի վերագնահատումից | 2,747,923 | 29,398,749 |
| Զուտ օգուտ սփոթ գործարքներից | 874,507 | 985,346 |
| **Ընդամենը զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից** | **3,622,430** | **30,384,095** |

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ օգուտի կազմում ներառված է 3,509,024 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2014 թ.՝ 40,908,776 հազար ՀՀ դրամի զուտ օգուտ):

## 7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Զուտ վնաս սեփական կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրերի գծով | (984,393) | (570,944) |
| Զուտ (վնաս)/օգուտ Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 27) | (978,171) | 5,881,610 |
| Զուտ (վնաս)/օգուտ սվոփ պայմանագրերից | (363,876) | 238,697 |
| **Ընդամենը զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից** | **(2,326,440)** | **5,549,363** |

2007 թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Որպես արտարժույթի առք ու վաճառքի նման գործառնությունների արդյունք՝ Բանկի վնասը կամ օգուտը հաշվառվում է որպես ածանցյալ ֆինանսական գործիքների հետևանք:

## 8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը*) | 1,406,599 | 1,588,806 |
| Զուտ օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը*) | 290,126 | 1,219,400 |
| Զուտ օգուտ ՀՀ պետական արժեթղթերից | 213,702 | 163,748 |
| Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը*) | (181,376) | (229,357) |
| **Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից** | **1,729,051** | **2,742,597** |

** Վերը նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (Ծնթգ. 6):*

## 9. Այլ եկամուտ

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Ֆինանսական գործակալության վճար | 1,379,925 | 1,674,456 |
| Դրամագիտական արժեքներ | 607,117 | 660,188 |
| Այլ | 2,310,962 | 1,919,619 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | **4,298,004** | **4,254,263** |

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին:

2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված է 1,764,297 հազար ՀՀ դրամ գումարը, որը ներկայացնում է Բանկի երկու դուստր կազմակերպությունների հասույթը, որոնք տրամադրում են կանխիկի հավաքագրման և պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2014 թ.՝ 1,736,373 հազար ՀՀ դրամ):

## 10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 1,773,953 | 433,376 |
| Տարվա ընթացքում վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր | 487,998 | 524,317 |
| **Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր** | **2,261,951** | **957,693** |

## 11. Այլ ծախսեր

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ | 8,115,218 | 7,546,770 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 4,798,352 | 4,575,453 |
| Վերանորոգում և տեխնիկական սպասարկում | 1,764,893 | 1,629,316 |
| Անվտանգության և ապահովագրական ծախսեր | 441,635 | 459,749 |
| Վճարահաշվարկային համակարգի ներդրման և սպասարկման ծախսեր | 399,446 | 313,617 |
| Բազելյան կոմիտեի պահանջների իրագործման ծախսեր | 306,682 | 286,855 |
| Կրթություն, հետազոտություն և նոր ծրագրերի մշակում | 204,030 | 1,642,560 |
| Մասնագիտական ծառայություններ | 192,686 | 165,872 |
| Այլ | 2,474,436 | 2,219,785 |
| **Ընդամենը այլ ծախսեր** | **18,697,378** | **18,839,977** |

2015 թ. դեկտեմբերի 31-ին և 2014 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ»-ում չկան պարտադիր սոցիալական ապահովագրության հատկացումների մասով ծախսեր՝ ՀՀ օրենսդրության փոփոխության հետևանքով:

2015 թ. դեկտեմբերի 31-ին և 2014 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված ծախսերը ներկայացնում են բաժանորդագրության վճարներ, ինչպես նաև ներկայացուցչական, տպագրման, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության և գրասենյակային ծախսեր: 2015 թ. և 2014 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են Խմբի դուստր ընկերությունների համապատասխան ծախսերի գումարները:

## 12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

*Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով*

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| **Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով** | | |
| Նոստրո հաշիվներ | 253,102,636 | 185,210,899 |
| Ժամկետային ավանդներ | 15,440,510 | 28,792,806 |
| Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ | 1,952,562 | 2,789,677 |
| Հետգնման պայմանագրեր | - | 21,378,513 |
| Տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժա | - | 124,081 |
| Այլ | - | 50,240 |
| **Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով** | **270,495,708** | **238,346,216** |

*Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում*

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 190,866,648 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բանկում մնացորդի ընդհանուր գումարը կազմում էր 143,387,405 հազար ՀՀ դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն մինչև 3 ամիս մարման ժամկետ և 0.51%-ից մինչև 0.52% տոկոսադրույք (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 0.02%-ից մինչև 0.5% տոկոսադրույք):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցների 1,952,562 հազար ՀՀ դրամի մնացորդը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցների 2,789,677 հազար ՀՀ դրամի մնացորդը և տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժայի 124,081 հազար ՀՀ դրամի մնացորդը) իրենից ներկայացնում է ներդրումային կառավարման պայմանագրի շրջանակում Բանկի կողմից արտերկրյա արժեթղթերով գործարքների ներքո հաշվանցումների համար պահպանվող մնացորդը և ֆյուչերսային գործարքների ներքո հաշվանցումների մարժային պահուստը:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի ֆյուչերսների հաշվանցումների համար պահվող մարժային պահուստի գումարը

ներառված է «Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված կանխիկ» տողում:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,452,060 հազար ՀՀ դրամ արտարժութային ժամկետային ավանդներ Խմբի կողմից գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար (Ծնթգ. 24) (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,425,753 հազար ՀՀ դրամ գրավադրված արտարժութային ժամկետային ավանդներ):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի հետգնման համաձայնագրերի գծով ստացվելիք միջոցներ չեն եղել (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման համաձայնագրերի գծով ստացվելիք միջոցներն ապահովված են օտարերկրյա պետական կամ պետական գործակալությունների պարտատոմսերով, որոնց իրական արժեքը կազմում էր 21,915,181 հազար ՀՀ դրամ):

### *Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով*

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| **Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով** | | |
| Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ | 122,365,066 | 227,566,937 |
| Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | 85,351,415 | 64,620,390 |
| Հիփոթեքային վերաֆինանսավորում | 49,183,495 | 39,868,360 |
| Առևտրային բանկերում ավանդներ և ընթացիկ հաշիվներ | 42,527,391 | 29,947,531 |
| Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր | 6,448,154 | - |
| Ստորադաս պայմաններով վարկեր | 3,079,245 | 12,618,347 |
| Այլ վարկեր | 7,821,877 | 7,233,785 |
| **Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով** | **316,776,643** | **381,855,350** |

### Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝երկու բանկ):

Հակադարձ հետգնման պայմանագրերով առևտրային բանկերին տրամադրված վարկերը ներառում են կարճաժամկետ վարկեր, որոնք տրամադրվել են առևտրային բանկերին կանոնավոր կերպով՝ մրցութային գործընթացի միջոցով: Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 16 տեղական բանկերի և 2 այլ ֆինանսական հաստատությունների հետ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18 տեղական բանկեր և 2 այլ ֆինանսական հաստատություններ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Կառավարության գանձապետական արժեթղթեր | 109,253,680 | 169,576,189 |
| Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր | 11,837,588 | 14,841,093 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | 4,761,830 | 4,189,454 |
| **Ընդամենը** | **125,853,098** | **188,606,736** |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,761,830 հազար ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերից 821,663 հազար ՀՀ դրամը ներկայացնում է Խմբի դուստր կազմակերպության պարտատոմսերը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,078,953 հազար ՀՀ դրամ 4,189,454 հազար ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերից):

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական առևտրային բանկերի հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW Բանկային Խմբի, ԵՆԲ, ԱԶԲ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* Համաշխարհային բանկի և KfW-ի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է՝ Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առավել արդյունավետ և շահութաբեր դարձնելու նպատակով: Սա իրականացվում է գործընկեր բանկերում նոր վարկային գործիքակազմի (տեխնոլոգիաների) ներդրման և բարձրակարգ վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: 2014 թ. նոր վարկային գիծ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար: 2015 թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԵՆԲ-ից՝ հիմնականում գյուղմշակման, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ՓՄՁ-ներին առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով փոխառություններ տրամադրելու նպատակով:

- *Վերականգնվող էներգիայի զարգացում.* Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել էներգամատակարարման բարելավմանը և Հայաստանում մասնավոր հատվածի հետագա զարգացմանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար վերականգնվող էներգիայի աղբյուրների ծախսարդյունավետ օգտագործումն ապահովելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է աջակցել վերականգնվող էներգիայի օգտագործմանը, մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայաններին (ՓՀԷԿ)՝ վարկեր տրամադրելով անհատ ձեռնարկատերերին և մասնավոր ձեռնարկություններին:
- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում.* Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տնային տնտեսություններին հատկացվող վարկավորումը:

Ծրագրերի պայմանների համաձայն՝ Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, սահմանում է համապատասխան հայաստանյան բանկեր և ֆինանսական հաստատություններ, որոնցում տեղաբաշխում է միջոցներ՝ այդ գործընկերների հետ ստորագրված պայմանագրերի համաձայն: Բանկերը և ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական փոխառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 15 բանկերի (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18 տեղական բանկերի) և 7 այլ ֆինանսական կազմակերպությունների (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5 այլ ֆինանսական կազմակերպությունների):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 14 տարի մարման ժամկետով (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 15 տարի):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված փոխատվական պայմանագրերի շրջանակներում՝ 49,059,324 հազար ՀՀ դրամի գումարով (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 39,555,684 հազար ՀՀ դրամ):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,287,045 հազար ՀՀ դրամ արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,229,074 հազար ՀՀ դրամ) գրավադրվել են՝ երաշխավորելու Խմբի՝ Կառավարությունից ստացված վարկերի (Ծնթգ. 23) և թողարկված պարտատոմսերի (Ծնթգ. 24) ապահովվածությունը:

Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդները և ընթացիկ հաշիվները ներառում են Խմբի դուստր ընկերությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 30,000 հազար ՀՀ դրամ առևտրային բանկերում ներդրված ավանդները և ընթացիկ հաշիվներ գրավադրվել են՝ երաշխավորելու Խմբի կողմից թողարկված պարտա-

տոմսերի ապահովվածությունը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30,000 հազար ՀՀ դրամ) (Ծնթգ. 24):

Խմբի ղեկավարությունը դասակարգել է 2015 թ. ավարտված տարվա ընթացքում ձեռք բերված 6,448,154 հազար ՀՀ դրամ ներդրումները, որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր: Խմբի ղեկավարությունը կայացրել է այդ որոշումը՝ ելնելով այն հանգամանքից, որ տվյալ ներդրումների համար իրացվելի շուկա առկա չէ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խումբն ունի այդ ներդրումները տեսանելի ապագայում պահելու հնարավորություն և մտադրություն:

Ստորադաս պայմաններով վարկերը ներառում են այն վարկերը, որոնք ստորադաս պայմաններով տրամադրվում են առևտրային բանկերին 2009 թ-ից սկսած նախնական 5 տարի ժամկետով՝ բանկային համակարգում հավանական ճգնաժամային ռիսկերը զսպելու բավարար կարողություն ստեղծելու նպատակով:

Այլ վարկերն ապահովված են 5,516,166 հազար ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքով (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,524,719 հազար ՀՀ դրամ) և 1,680,204 հազար ՀՀ դրամ արժեքով շարժական գույքով և այլ ակտիվներով (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,249,964 հազար ՀՀ դրամ):

## 13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| ***Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով - Գնանշված*** | | |
| Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր | 434,162,433 | 270,272,110 |
| Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր | 78,599,919 | 84,994,471 |
| **Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով - Գնանշված** | **512,762,352** | **355,266,581** |
| ***Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ տեղական արժույթով*** | | |
| ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | 1,665,748 | 2,117,870 |
| **Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ տեղական արժույթով** | **1,665,748** | **2,117,870** |
| **Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ** | **514,428,100** | **357,384,451** |

2015 թ. և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Պետական պարտատոմսեր | 248,812,939 | 125,188,957 |
| Պետական գործակալությունների պարտատոմսեր | 106,179,924 | 80,130,938 |
| Այլ արժեթղթեր | 79,169,570 | 64,952,215 |
| **Ընդամենը** | **434,162,433** | **270,272,110** |

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են եվրոպական երկրների կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր և ԱՄՆ գանձապետական մուրհակներ, պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր:

2015 թ. և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Պետական գործակալությունների պարտատոմսեր | 17,227,083 | 22,216,243 |
| Պետական պարտատոմսեր | 13,215,316 | 38,032,306 |
| Այլ արժեթղթեր | 48,157,520 | 24,745,922 |
| **Ընդամենը** | **78,599,919** | **84,994,471** |

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերն իրենցից ներկայացնում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո գտնվող ակտիվներ՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի:

2015 թ. և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով պետական արժեթղթերն իրենցից ներկայացնում են Կառավարության արժեկտրոնային գանձապետական արժեթղթեր:

## 14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| ***Ածանցյալ ֆինանսական ակտիվներ*** | | |
| Արտարժույթային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո | 103,306 | - |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | **103,306** | **-** |
| ***Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ (Ծնթգ. 27) | 30,727 | 245,189 |
| Սվոփ պայմանագրեր | - | 588,643 |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **30,727** | **833,832** |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 139 կարճ ֆյուչերսային պայմանագրեր՝ 19,304 հազար եվրո կամ 10,206,001 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ համաձայն ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի տարեվերջի պաշտոնական փոխարժեքի, որոնք եղել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի, տոկոսադրույքի ռիսկը կարգավորելու նպատակով: 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը հավատարմագրային կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրեր չի ունեցել:

*հազար ՀՀ դրամ*

| | Անվանական արժեք | | Իրական արժեք | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2015 թ. | | 2014 թ. | |
| | 2015 թ. | 2014 թ. | Ակտիվ | Պարտավորություն | Ակտիվ | Պարտավորություն |
| Տոկոսադրույքի ֆյուչերսներ | 10,206,001 | - | 103,306 | - | - | - |
| **Ընդամենը արտարժութային ֆյուչերսներ հավատարմագրային կառավարման ներքո** | **10,206,001** | **-** | **103,306** | **-** | **-** | **-** |
| Ֆորվարդ պայմանագրեր Կառավարության հետ | 1,226,884 | 1,801,947 | - | 30,727 | - | 245,189 |
| Արժութային սվոփ | - | 5,789,520 | - | - | - | 588,643 |
| **Ընդամենը** | **11,432,885** | **7,591,467** | **103,306** | **30,727** | **-** | **833,832** |

## 15. Ներդրումային արժեթղթեր

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| ***Վաճառքի համար մատչելի ակտիվներ արտարժույթով – Չգնանշվող*** | | |
| Արտերկրյա արժեթղթեր | 2,221,194 | 2,717,353 |
| ***Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով*** | | |
| SWIFT | 1,646 | 1,646 |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ արտարժույթով – Չգնանշվող** | **2,222,840** | **2,718,999** |
| ***Վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով*** | | |
| ***Պարտքային գործիքներ*** | | |
| ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | 13,770,172 | 14,722,231 |
| ՀՀ Կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ (Ծնթգ. 25) | 81,275,373 | 106,175,637 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | 5,629,794 | 5,561,948 |
| ***Ընդամենը պարտքային գործիքներ*** | ***100,675,339*** | ***126,459,816*** |
| ***Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով*** | | |
| Այլ ներդրումներ | 610,681 | 566,454 |
| ***Ընդամենը սեփական կապիտալի ներդրումներ*** | ***610,681*** | ***566,454*** |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով** | **101,286,020** | **127,026,270** |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ** | **103,508,860** | **129,745,269** |
| **Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով** | | |
| Արտերկրյա արժեթղթեր | 63,733,713 | 94,150,359 |
| **Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով** | **63,733,713** | **94,150,359** |

2015 թ. և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են Խմբի դուստր ընկերություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

Տեղական արժույթով և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերն իրենցից ներկայացնում են Կառավարության պետական արժեկտրոնային արժեթղթեր և տեղական ներդրումային և զարգացման հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթեր:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որն օգտագործում է ընթա-

ցիկ շուկայական տոկոսադրույքներն՝ այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

2015 թվականին Կառավարության կողմից վերաթողարկվել է 81,275,373 հազար ՀՀ դրամ (2014 թ.՝ 106,175,637 հազար ՀՀ դրամ) արժեքով անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակ:

Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրա իրական արժեքը:

Մինչև մարման ժամկետ պահվող դասակարգված արտերկրյա արժեթղթերը ներառում են եվրոպական երկրների և Ճապոնիայի կառավարությունների կողմից թողարկված զեղչատոկոսային և կտրոնային արժեթղթեր, ինչպես նաև պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների թողարկած արժեթղթեր:

## 16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

*ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| *ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ* | | |
| Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն) | 61,672,200 | 63,304,280 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 1,383,162 | 2,963,798 |
| Հաշվեգրված տոկոսներ | 312 | 162 |
| **Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ** | **63,055,674** | **66,268,240** |

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ի անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից և որոշվում են ԱՄՀ կառավարիչների խորհրդի կողմից: Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի համար վճարումը կատարվել է Բանկի կողմից ԱՄՀ-ին՝ թողարկված անտոկոս հասարակ մուրհակների տեսքով: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 92,000 հազար ՀՓԻ կամ

61,672,200 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 92,000 հազար ՀՓԻ կամ 63,304,280 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է:

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Ստորև ներկայացված են 2015 թ. դեկտեմբերի 31-ին և 2014 թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՓԻ հաշվում շարժերը.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **ՀՓԻ հաշվի մնացորդն առ 1 հունվարի** | **2,963,798** | **770,729** |
| ԱՄՀ-ից միջոցների ստացում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում. | | |
| Հօգուտ Բանկի | 4,658,010 | 15,289,937 |
| ՀՓԻ-ների գնում | 6,960,067 | 50,442,279 |
| Վարկերի հետվճարում ԱՄՀ-ին. | | |
| Բանկի անունից | | |
| (Poverty Reduction and Growth Trust (PRGT)) | (3,020,627) | (4,845,104) |
| Stand-By Arrangement (SBA) ծրագիր | (1,923,050) | (32,301,854) |
| Extended Fund Facility (EFF) | (4,862,374) | (1,003,464) |
| Կառավարության անունից | | |
| Stand-By Arrangement (SBA) ծրագիր | (2,035,810) | (24,426,872) |
| Վարկերին վերաբերող միջնորդավճարների վճարում | (62,663) | (99,966) |
| Այլ եկամուտ | 15,616 | 22,990 |
| Այլ վճարներ | (999) | (379) |
| ԱՄՀ-ի միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարների վճարում. | | |
| Բանկի անունից | (1,087,467) | (1,196,787) |
| Կառավարության անունից | (12,639) | (196,082) |
| ՀՓԻ-ի տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարի վճարում | (29,537) | (51,807) |
| ՀՓԻ միջոցներից եկամուտ | 633 | 3,216 |
| Փոխարժեքային տարբերություններ | (179,796) | 556,962 |
| **ՀՓԻ հաշվի մնացորդն առ 31 դեկտեմբերի** | **1,383,162** | **2,963,798** |

2015 թ. ընթացքում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում ստացվել են 11,740 հազար ՀՓԻ միջոցներ: 7,000 հազար ՀՓԻ մուտքագրվել է ՀՓԻ հաշվին: Մնացորդային մասը արտահայտված է եղել ԱՄՆ դոլարով և մուտքագրվել է ԱՄՆ դոլարով թղթակցային հաշիվներից մեկին: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից, իր անունից:

2014 թ. ընթացքում ստացվել և ՀՓԻ հաշվին մուտքագրվել է 23,480 հազար ՀՓԻ՝ «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից, իր անունից:

Վերը ներկայացված աղյուսակում ներառված գործարքների գումարները ՀՀ դրամի համարժեքով են՝ հիմք ընդունելով գործարքների տեղի ունենալու ամսաթվի դրությամբ ՀՓԻ/դրամ փոխարժեքը:

*Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Արժեթղթերի հաշիվ | 140,663,079 | 140,663,079 |
| ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշտման հաշիվ | 143,670 | 11,547,540 |
| Թիվ 1 հաշիվ | 27,929,924 | 19,987,383 |
| Թիվ 2 հաշիվ | 2,606 | 2,492 |
| ՀՓԻ տեղաբաշխում | 58,983,198 | 60,544,116 |
| ECF վարկ՝ | 25,021,484 | 28,803,447 |
| *Հաշվեկշռային արժեք* | *23,740,786* | *27,067,655* |
| *Հետաձգված եկամուտ* | *1,280,698* | *1,735,792* |
| Հաշվեգրված տոկոսներ | 195,170 | 189,788 |
| **Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ** | **252,939,131** | **261,737,845** |

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվը ներառում են Բանկի պարտավորությունները Stand-By վարկի, EFF վարկի և անդամակցության գումարների գծով: Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն օգտագործվում է ԱՄՀ-ի կողմից՝ վարչական նպատակների համար:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են թողարկած հասարակ մուրհակով՝ 140,663,079 հազար ՀՀ դրամի (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 140,663,079 հազար ՀՀ դրամի) չափով:

Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության՝ Բանկի պարտավորությունը ԱՄՀ-ի հանդեպ 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է պարտավորություններն ըստ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) և «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրերի (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) ծրագրի, «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի և Stand-By Arrangement (SBA) ծրագրի):

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի հետ կապված երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: ECF-ը ստեղծվել է նոր հաստատված «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» ծրագրի ներքո և մաս է կազմում առավել լայն շրջանակի բարեփոխումների, որոնք ուղղված են ԱՄՀ-ի ֆի-

նանսական աջակցությունն առավել ճկուն դարձնելուն և որոնք առավել հարմարեցված են ցածր եկամուտ ունեցող երկրների բազմազան կարիքներին՝ ներառյալ ճգնաժամային ժամանակաշրջաններում: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF-ն անտոկոս է (2014 թ.՝ 0%): 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2016 թ. մայիսին – 2023 թ. հունիսին (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2015 թ. մայիսին – 2023 թ. հունիսին):

EFF (Extended Fund Facility) վարկը երկրներին տրամադրվում է միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2020 թ. հունիսին – 2025 թ. նոյեմբերին (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2020 թ. հունիսին – 2024 թ. դեկտեմբերին):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից այդ վարկերի գծով օգտագործված գումարը կազմում է 159,870 հազար ՀՓԻ (107,168,855 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի պաշտոնական փոխարժեքը) (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 155,422 հազար ՀՓԻ (106,944,095 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի պաշտոնական փոխարժեքը)), որի հաշվեկշռային արժեքը կազմում 159,714 հազար ՀՓԻ (107,064,470 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի պաշտոնական փոխարժեքը) (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 155,311 հազար ՀՓԻ (106,867,985 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի պաշտոնական փոխարժեքը)):

Stand-By վարկը տրամադրվում է ԱՄՀ-ի անդամ երկրներին՝ ճգնաժամի պայմաններում վճարային խնդիրների հաղթահարման համար: SBA վարկերի մի մասը ստացվել է անմիջապես Բանկի կողմից, իսկ մյուս մասը՝ Բանկի կողմից՝ Կառավարության անունից: SBA վարկի տոկոսադրույքը լողացող է և ԱՄՀ-ի կողմից հրապարակվում է շաբաթական կտրվածքով: Մինչև 2012 թ. նոյեմբեր ԱՄՀ-ն տարեկան 2% հավելավճար էր հաշվարկում ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը գերազանցող Stand-By և EFF վարկերի ընդհանուր գումարի նկատմամբ, իսկ 2012 թ. նոյեմբերից մինչև 2013 թ. սեպտեմբերի 30-ը հաշվարկում էր 3% հավելավճար, քանի որ արդեն 3 տարի էր, ինչ Stand-By և EFF վարկերի գումարը շարունակում էր գերազանցել ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը:

2013 թ. հոկտեմբերից Stand-By և EFF վարկերի ընդհանուր գումարն ավելի փոքր է, քան ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը, հետևաբար ԱՄՀ-ի կողմից հավելավճար այլևս չի գանձվում:

2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ SBA վարկերի գծով Բանկի պարտավորությունը կազմել է 2,944 հազար ՀՓԻ (2,025,737 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի պաշտոնական փոխարժեքը): 2015 թ. մարտի 31-ին Բանկն ամբողջությամբ մարել է SBA վարկերը:

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

## 17. Հիմնական միջոցներ

*հազար ՀՀ դրամ*

| | Հող և շենքեր | Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ | Փոխադրամիջոցներ | Անավարտ շինարարություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2014 թ.** | **63,450,522** | **21,717,294** | **573,122** | **3,127,360** | **88,868,298** |
| Ավելացումներ | 11,406 | 1,245,139 | 52,367 | 3,643,424 | 4,952,336 |
| Օտարումներ | - | (234,601) | (7,351) | - | (241,952) |
| Տեղափոխում | 1,186,125 | 385,250 | - | (1,571,375) | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014 թ.** | **64,648,053** | **23,113,082** | **618,138** | **5,199,409** | **93,578,682** |
| Ավելացումներ | 24,450 | 450,098 | 77,184 | 2,524,907 | 3,076,639 |
| Օտարումներ | (150,508) | (311,133) | (25,668) | - | (487,309) |
| Տեղափոխում | 7,313,395 | 125,510 | - | (7,438,905) | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.** | **71,835,390** | **23,377,557** | **669,654** | **285,411** | **96,168,012** |
| *Մաշվածություն* | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2014 թ.** | **3,655,788** | **7,283,404** | **315,215** | **-** | **11,254,407** |
| Տարվա մաշվածության ծախս | 2,433,422 | 1,801,532 | 61,035 | - | 4,295,989 |
| Օտարումներ | - | (199,553) | (6,984) | - | (206,537) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014 թ.** | **6,089,210** | **8,885,383** | **369,266** | **-** | **15,343,859** |
| Տարվա մաշվածության ծախս | 2,528,036 | 1,820,554 | 68,340 | - | 4,416,930 |
| Օտարումներ | (149,001) | (302,736) | (23,614) | - | (475,351) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015 թ.** | **8,468,245** | **10,403,201** | **413,992** | **-** | **19,285,438** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| **2015 թ. դեկտեմբերի 31-ին** | **63,367,145** | **12,974,356** | **255,662** | **285,411** | **76,882,574** |
| **2014 թ. դեկտեմբերի 31-ին** | **58,558,843** | **14,227,699** | **248,872** | **5,199,409** | **78,234,823** |

Անավարտ շինարարությունը հիմնականում բաղկացած է շենքերի շինարարությունից: Ավարտից հետո ակտիվները վերադասակարգվում են համապատասխանաբար որպես շենքեր և սարքավորումներ:

## 18. Ոչ նյութական ակտիվներ

*հազար ՀՀ դրամ*

| | Համակարգչային ծրագրեր |
|---|---|
| *Սկզբնական արժեք* | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.** | **3,199,189** |
| Ավելացումներ | 310,484 |
| Օտարումներ | (746,557) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **2,763,116** |
| Ավելացումներ | 341,909 |
| Օտարումներ | (13,607) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **3,091,418** |
| *Ամորտիզացիա* | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.** | **1,438,019** |
| Տարվա ամորտիզացիոն ծախս | 279,464 |
| Օտարումներ | (736,136) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **981,347** |
| Տարվա ամորտիզացիոն ծախս | 381,422 |
| Օտարումներ | (10,735) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **1,352,034** |
| **Հաշվեկշռային արժեք** | |
| **2015 թ. դեկտեմբերի 31-ին** | **1,739,384** |
| **2014 թ. դեկտեմբերի 31-ին** | **1,781,769** |

## 19. Այլ ակտիվներ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Դրամագիտական արժեքներ | 7,168,991 | 7,366,813 |
| Կանխավճարներ | 2,141,070 | 2,371,944 |
| Այլ | 3,283,395 | 510,019 |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **12,593,456** | **10,248,776** |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,528,851 հազար ՀՀ դրամ արժեքով շենքեր «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ» հոդվածից վերադասակարգվել են «Այլ ակտիվներ» հոդված՝ կապված այն ժամանակաշրջանի սպասումների փոփոխության հետ, որի ընթացքում դրանք վաճառվելու են, և ներառված են «Այլ» տողում: Այս գործարքը չի պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործումը, ինչպես նաև այն բացառվել է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունից:

## 20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| *Պարտավորություններ արտարժույթով* | | |
| Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ | 184,852,856 | 135,944,337 |
| Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ | 1,850,415 | 2,021,254 |
| Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ | 289,645 | 755,214 |
| **Ընդամենը պարտավորություններ արտարժույթով** | **186,992,916** | **138,720,805** |
| *Պարտավորություններ տեղական արժույթով* | | |
| Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ | 324,424,899 | 334,596,232 |
| Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ | 271,271 | 844,580 |
| Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ | 117,737 | 3,381 |
| **Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով** | **324,813,907** | **335,444,193** |
| **Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ** | **511,806,823** | **474,164,998** |

### Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդ գերազանցել են Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 166,323,130 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք բանկ, 157,530,035 հազար ՀՀ դրամ):

## 21. Այլ փոխառություններ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Վարկեր KfW-ից | 41,396,010 | 44,158,097 |
| Վարկեր ԵՆԲ-ից | 30,320,617 | - |
| Վարկեր Համաշխարհային բանկից | 23,270,697 | 23,480,856 |
| Վարկեր ԱԶԲ -ից | 3,496,469 | 3,589,001 |
| Այլ | 1,456,671 | 1,430,303 |
| **Ընդամենը այլ փոխառություններ** | **99,940,464** | **72,658,257** |

KfW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2016 թ-ից մինչև 2048 թ. ընկած ժամանակաշրջանն է (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2015 թ-ից մինչև 2048 թ.): Վարկերի մարումը KfW-ին երաշխավորված է Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2016 թ-ից 2035 թ. ընկած ժամանակաշրջանն է (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2015 թ-ից 2035 թ.):

ԱԶԲ-ի կողմից տրամադրված փոխառությունը տրամադրվել է ԱԶԲ-ի կողմից՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով (Ծնթգ. 12): Վարկի մարման ժամկետայնությունը 2016 թ-ից մինչև 2044 թ. ընկած ժամանակաշրջանն է (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2015 թ-ից 2044 թ.):

2015 թ. ընթացքում Խումբը վարկեր է ստացել ԵՆԲ-ից, որը տրամադրվել է փոքր նախագծերի ֆինանսավորման համար: Վարկերը ուղղվելու են հիմնականում գյուղմշակման և գյուղատնտեսության ոլորտներին (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2030 թ. ընկած ժամանակաշրջանն է:

2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խմբի դուստր ընկերություններից մեկը փոխառություն է ստացել Ֆրանսիական զարգացման գործակալությունից՝ ներառված «Այլ» դասում: Վարկի մարման ժամկետայնությունը 2016 թ-ից մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածն է (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2015 թ-ից մինչև 2025 թ.): 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային ծրագրի գծով մնացորդը կազմում է 1,456,671 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,430,303 հազար ՀՀ դրամ):

## 22. Այլ պարտավորություններ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| *Այլ պարտավորություններ տեղական արժույթով* | | |
| Կրեդիտորական պարտքեր | 1,866,393 | 1,605,596 |
| Աշխատակիցների ցպահանջ ավանդներ | 676,635 | 674,466 |
| Այլ պարտավորություններ | 471,178 | 93,384 |
| **Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով** | **3,014,206** | **2,373,446** |

## 23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության հանդեպ

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| ***Պարտավորություններ արտարժույթով*** | | |
| Կառավարության ընթացիկ հաշիվներ | 1,061,467 | 2,839,117 |
| Կրեդիտորական պարտք | 248,105 | 145,652 |
| **Ընդամենը պարտավորություններ արտարժույթով** | **1,309,572** | **2,984,769** |
| ***Պարտավորություններ տեղական արժույթով*** | | |
| Ժամկետային ավանդներ | 86,130,956 | 35,191,972 |
| Կառավարության ընթացիկ հաշիվներ | 46,845,662 | 78,741,063 |
| Կառավարությունից ստացված վարկեր | 2,253,561 | 2,897,476 |
| **Ընդամենը պարտավորություններ տեղական արտարժույթով** | **135,230,179** | **116,830,511** |
| **Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ** | **136,539,751** | **119,815,280** |

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև մեկ տարի է, և տոկոսադրույքը կազմում է 10.1%-ից մինչև 11.2% (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6.4%-ից մինչև 7.6%):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված՝ Կառավարությունից ստացված վարկերում ներառված են 2009 թ. հունիսի 13-ին ստորագրված ընդհանուր համաձայնագրի հիման վրա՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում Խմբի դուստր ընկերություններից մեկի կողմից Կառավարությունից ստացված վարկերը: Վարկերի անվանական տոկոսադրույքը տարեկան 7% է: Վարկերի մարումը կատարվում է հավասար մասերով՝ կիսամյակային կտրվածքով, մինչև 2012 թ. դեկտեմբերի 16-ը սահմանված արտոնյալ ժամանակաշրջանով:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,902,052 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը հանդիսանում են Կառավարությունից ստացված վարկի դիմաց գրավ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,306,675 հազար ՀՀ դրամ):

## 24. Թողարկված պարտատոմսեր

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր ընկերությունը թողարկել էր 2,000,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 805,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, մեկ տարի ժամկետայնությամբ զեղչատոկոսային պարտատոմսեր, 2,000,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր):

Պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 9.8%-ից 11.82% (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,68%-ից մինչև 11.82%): 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 3,244,388 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,040,952 հազար ՀՀ դրամ):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,384,993 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,922,399 հազար ՀՀ դրամ) արժեքով բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված հիփոթեքային վերաֆինանսավորման վարկեր և 1,482,060 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,455,753 հազար ՀՀ դրամ) տեղական արժույթով և արտարժույթով ժամկետային ավանդներ գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար:

## 25. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալը ներառում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո:

Բանկի (որպես կենտրոնական բանկի) նկատմամբ չկան արտաքին կապիտալի պահանջներ, բացառությամբ Օրենքով կանոնադրական կապիտալի չափի նկատմամբ սահմանված պահանջի:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունն ու իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակներն ու քաղաքականությունը սահմանված են Բանկի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Լրացուցիչ կապիտալը ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով Կառավարության ներդրումն է, որը կատարվում է Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասի՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

2015 թ. դեկտեմբերին Բանկը բաշխել է 2014 թ. դեկտեմբերի դրությամբ առաջացած շահույթի 80%-ը՝ նախկինում Կառավարության կողմից թողարկված մուրհակի գումարը ծածկելու նպատակով: 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի մնացորդային մասը փոխանցվել է գլխավոր պահուստ: Կառավարությունը վերաթողարկել է 81,275,373 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով անտոկոս հասարակ մուրհակ (Ծնթգ. 15):

Հասարակ մուրհակի գումարը վերականգնելուն ուղղված շահույթի բաշխումը և շահույթի փոխանցումը գլխավոր պահուստ չեն պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում, ինչպես նաև վերջիններս բացառվել են դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունից:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լրացուցիչ կապիտալի գումարի (136,194,821 հազար ՀՀ դրամ) և Կառավարության կողմից տրամադրված անտոկոս հասարակ մուրհակի անվանական արժեքի (81,275,373 հազար ՀՀ դրամ) միջև տարբերությունը Խմբի կողմից ճանաչվում է տեղական արժույթով արտահայտված՝ վաճառքի համար մատչելի ակտիվների կազմում և ներկայացնում է Խմբի նախորդ տարիների շահույթի փոխանցվող գումարը՝ ուղղված Կառավարության կողմից թողարկված մուրհակի մարմանը:

Հաշվի առնելով, որ Բանկի՝ 2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար պետական բյուջե բաշխման ենթակա շահույթի գումարը (համաձայն Օրենքի՝ հաշվարկի մեջ չի մտնում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով) բացասական է, 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ճանաչել որևէ պարտավորություն՝ պետական բյուջե շահույթի բաշխման հետ կապված:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստը, որը կազմում է 1,131,000 հա-

զար ՀՀ դրամ (բացասական ազդեցություն) (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 223,258 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)), ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի՝ վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքի և դրանք սկզբնապես ճանաչելիս որոշվող արժեքի միջև տարբերությունը:

## 26. Պայմանական պարտավորություններ

*Կապիտալ բնույթի պարտավորություններ*

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Խմբի շենքերի կապիտալ շինարարությանը (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ Խմբի շենքերի կապիտալ շինարարությանը և համակարգչային ծրագրի մշակմանը), կազմում են 231,336 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 554,025 հազար ՀՀ դրամ):

*Իրավական պարտավորություններ*

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

*Երաշխիքներ*

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի տրված երաշխիքների գծով 745,732 հազար ՀՀ դրամի (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 732,196 հազար ՀՀ դրամ) պարտավորություններ: Երաշխիքները տրվել էին 1994 թ-ից 1995 թ. ընկած ժամանակաշրջանում՝ շինարարական ընկերությունների անունից երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքները չեղյալ չհամարվող հաստատումներ են առ այն, որ Խումբը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտավորությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի: Երաշխիքների տրման ամսաթվից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Խումբը չի կատարել որևէ վճարում և չի ստացել այդ երաշխիքների գծով որևէ պահանջ:

## 27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

*Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ*

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (Ծնթգ. 11):

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| Ղեկավար անձնակազմ, ներառյալ Խորհրդի անդամները | 273,310 | 266,218 |
| **Ընդամենը** | **273,310** | **266,218** |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 127,030 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 145,334 հազար ՀՀ դրամ): 2015 թ. ավարտված ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված և նրանց կողմից մարված վարկերի ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 6,624 հազար ՀՀ դրամ և 24,928 հազար ՀՀ դրամ (2014 թ.՝ 129,940 հազար ՀՀ դրամ և 48,430 հազար ՀՀ դրամ):

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների կողմից Բանկում տեղաբաշխված ավանդների մնացորդը կազմել է 71,636 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 56,908 հազար ՀՀ դրամ): 2015 թ. ավարտված ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամների կողմից տեղաբաշխված և մարված ավանդների ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 79,109 հազար ՀՀ դրամ և 64,381 հազար ՀՀ դրամ (2014 թ.՝ 55,704 հազար ՀՀ դրամ և 105,704 հազար ՀՀ դրամ): Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ վարկեր չեն կարող տրամադրվել Բանկի այն աշխատակիցներին, ովքեր ունեն Բանկում տեղաբաշխված ավանդներ:

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | |
| Տոկոսային ծախս | (7,856) | (10,216) |
| Տոկոսային եկամուտ | 4,662 | 4,108 |

*Գործարքներ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ*

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | 31 դեկտեմբերի 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Մնացորդ | Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք | Մնացորդ | Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք |
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| **Ակտիվներ** | | | | |
| ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (Ծնթգ.13) | 1,665,748 | 12.1% | 2,117,870 | 8.7% |
| ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր պահվող վաճառքի համար (Ծնթգ. 15) | 13,770,172 | 10.5% | 14,722,231 | 11.0% |
| Որպես լրացուցիչ վճարված կապիտալ ՀՀ կառավարության մուրհակի տրամադրում (Ծնթգ. 15). | | | | |
| Մնացորդ հունվարի 1-ին | 106,175,637 | | 98,166,328 | |
| Ավելացում | - | | 8,009,309 | |
| Նվազեցում՝ շահույթի բաշխման արդյունքում | (24,900,264) | | - | |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **96,711,293** | | **123,015,738** | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ (տեղական արժույթով) (Ծնթգ. 23) | 135,230,179 | 7.3% | 116,830,511 | 2.4% |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ (արտարժույթով) (Ծնթգ. 23) | 1,309,572 | 0.0% | 2,984,769 | 0.0% |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **136,539,751** | | **119,815,280** | |

Տեղական արժույթով Կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված ավանդների շարժը.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Մնացորդ հունվարի 1-ին** | **35,191,972** | **146,045,773** |
| Ավելացում | 701,219,056 | 568,727,822 |
| Տոկոսային ծախս | 9,599,967 | 7,806,486 |
| Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը) | (659,880,039) | (687,388,109) |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **86,130,956** | **35,191,972** |

Տեղական արժույթով Կառավարությունից ստացված վարկերի շարժը.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Մնացորդ հունվարի 1-ին** | **2,897,476** | **3,541,341** |
| Տոկոսային ծախս | 117,325 | 143,908 |
| Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը) | (761,240) | (787,773) |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **2,253,561** | **2,897,476** |

Կառավարության հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| ***Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն*** | | |
| Տոկոսային եկամուտ | 2,243,747 | 2,038,816 |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 420,023 | (1,601,422) |
| Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից | (978,171) | 5,881,610 |
| Տոկոսային ծախս | (10,008,453) | (8,217,776) |

2007 թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Որպես արտարժույթի առք ու վաճառքի նման գործառնությունների արդյունք՝ Բանկի վնասը կամ օգուտը հաշվառվում է որպես ածանցյալ ֆինանսական գործիքների հետևանք:

*Գործարքներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ*

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կառավարման մարմնում Բանկն ունի ներկայացուցիչներ:

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | 31 դեկտեմբերի 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Մնացորդ | Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք | Մնացորդ | Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք |
| ***Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն*** | | | | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (տեղական արժույթով, Ծնթգ. 20) | 117,737 | 8.75% | 3,381 | 0.0% |
| Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, Ծնթգ. 20) | 1,850,415 | 0.0% | 2,021,254 | 0.27% |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,968,152** | | **2,024,635** | |

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը հետևյալն է.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| **Մնացորդ հունվարի 1-ին** | **2,024,635** | **2,162,934** |
| Ավելացում | 49,791,783 | 36,112,264 |
| Տոկոսային ծախս | 11,637 | 12,125 |
| Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը) | (49,859,903) | (36,262,688) |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **1,968,152** | **2,024,635** |

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2015 թ. | 2014 թ. |
|---|---|---|
| ***Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն*** | | |
| Տոկոսային ծախս | 11,637 | 12,125 |

## 28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | 31 դեկտեմբերի 2014 թ. |
|---|---|---|
| Կանխիկ դրամ | 12,117,804 | 18,230,986 |
| Նոստրո հաշիվներ (Ծնթգ. 12) | 253,102,636 | 185,210,899 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում (Ծնթգ. 16) | 1,383,162 | 2,963,798 |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **266,603,602** | **206,405,683** |

## 29. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ. (i) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով. (ii) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են. (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ): Ղեկավարությունը ֆինանսական գործիքները դասակարգելիս օգտագործում է իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համադրությամբ:

*(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ*

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք, ըստ հաշվապահական հաշվառման ստանդարտների, պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի ներկայացված է ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | | | 31 դեկտեմբերի 2014 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մակար-դակ 1 | Մակար-դակ 2 | Մակար-դակ 3 | Ընդամենը | Մակար-դակ 1 | Մակար-դակ 2 | Մակար-դակ 3 | Ընդամենը |
| **Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ** | | | | | | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | | | |
| ***Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ*** | | | | | | | | |
| - Պետական պարտատոմսեր | 262,028,255 | - | - | **262,028,255** | 163,221,263 | - | - | **163,221,263** |
| - Պետական գործակալությունների պարտատոմսեր | 123,407,007 | - | - | **123,407,007** | 102,347,181 | - | - | **102,347,181** |
| - Այլ արժեթղթեր | 127,327,090 | - | - | **127,327,090** | 89,698,137 | - | - | **89,698,137** |
| - ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | - | 1,665,748 | - | **1,665,748** | - | 2,117,870 | - | **2,117,870** |
| ***Ածանցյալ ակտիվներ*** | 103,306 | - | - | **103,306** | - | - | - | **-** |
| ***Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր*** | | | | | | | | |
| - Արտերկրյա արժեթղթեր | - | 2,221,194 | - | **2,221,194** | - | 2,717,353 | - | **2,717,353** |
| - ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | - | 13,770,172 | - | **13,770,172** | - | 14,722,231 | - | **14,722,231** |
| - Կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ | - | 81,275,373 | - | **81,275,373** | - | 106,175,637 | - | **106,175,637** |
| - Կորպորատիվ պարտատոմսեր | - | - | 5,629,794 | **5,629,794** | - | - | 5,561,948 | **5,561,948** |
| **Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ** | **512,865,658** | **98,932,487** | **5,629,794** | **617,427,939** | **355,266,581** | **125,733,091** | **5,561,948** | **486,561,620** |

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբեր 2015 թ. | | 31 դեկտեմբեր 2014 թ. | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 3 | Ընդամենը | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| **Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ** | | | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| ***Ածանցյալ պարտավորություններ*** | 30,727 | **30,727** | 588,643 | 245,189 | **833,832** |
| **Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ** | **30,727** | **30,727** | **588,643** | **245,189** | **833,832** |

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2015 թ. ներկայացված է ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Օգտագործված ելակետային տվյալներ |
|---|---|---|---|
| **Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ** | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| ***Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ*** | | | |
| – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | 1,665,748 | Ձեղչված դրամական միջոցների հոսքեր («ԶՊՄՀ») | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| ***Վաճառքի համար պահվող ներդրումային արժեթղթեր*** | | | |
| – Արտերկրյա արժեթղթեր | 2,221,194 | ԶՊՄՀ | Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո |
| – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | 13,770,172 | ԶՊՄՀ | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| – Կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ | 81,275,373 | ԶՊՄՀ | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| **Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ** | **98,932,487** | | |

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2014 թ. ներկայացված է ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Օգտագործված ելակետային տվյալներ |
|---|---|---|---|
| **Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ** | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| ***Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ*** | | | |
| – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | 2,117,870 | ԶՊՄՀ | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| ***Վաճառքի համար պահվող ներդրումային արժեթղթեր*** | | | |
| – Արտերկրյա արժեթղթեր | 2,717,353 | ԶՊՄՀ | Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո |
| – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | 14,722,231 | ԶՊՄՀ | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| – Կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ | 106,175,637 | ԶՊՄՀ | Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր |
| **Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ** | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| ***Ածանցյալ պարտավորություններ*** | | | |
| – Սվոփ պայմանագրեր | 588,643 | ԶՊՄՀ | ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին |
| **Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ** | **126,321,734** | | |

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2015 թ. ներկայացված է ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Օգտագործված էական չդիտարկվող ելակետային տվյալներ | Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված) | Ողջամիտ փոփոխություն | Իրական արժեքի զգայունության վերլուծություն |
|---|---|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ** | | | | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | |
| ***Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր*** | | | | | | |
| - Կորպորատիվ պարտատոմսեր | 5,629,794 | ԶՊՄՀ | 1) Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր | 1) 14% | 1) ± 150 բ.կ. | 1) (89,041)/ 91,164 |
| | | | 2) Վարկային ռիսկ | 2) 3% | 2) ± 200 բ.կ. | 2) (139,685)/ 122,035 |
| | | | 3) Վերադարձելիության գործակից | 3) 50% | 3) ± 20% | 3) 60,536/ (89,041) |
| **Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ** | | | | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| ***Ածանցյալ պարտավորություններ*** | 30,727 | ԶՊՄՀ | 1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ | 1) 10.64% | 1) ± 150 բ.կ. | 1) 1,399/(1,419) |
| | | | 2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար | 2) 5.43% | 2) ± 75 բ.կ. | 2) (723)/728 |
| | | | 3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո | 3) 4.79% | 3) ± 75 բ.կ. | 3) (33)/33 |
| | | | 4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին | 4) 483.75 | 4) առկա չէ | 4) առկա չէ |
| | | | 5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին | 5) 528.69 | 5) առկա չէ | 5) առկա չէ |
| | | | 6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար – ԱՄՆ դոլար | 6) 2,416 հազար ԱՄՆ դոլար | 6) ±10% | 6) 2,970/(2,970) |
| | | | 7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար- եվրո | 7) 100 հազար եվրո | 7) ± 10% | 7) 103/(103) |

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2014 թ. ներկայացված է ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Օգտագործված սկզբնական տվյալներ | Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված) | Ողջամիտ փոփոխություն | Իրական արժեքի գնահատման զգայունություն |
|---|---|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ** | | | | | | |
| **Ֆինանսական ակտիվներ Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր** | | | | | | |
| -Կորպորատիվ պարտատոմսեր | 5,561,948 | ԶԴՄՀ | 1) Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր | 1) 10.406% | 1) ± 150 բ.կ. | 1) (153,665)/ 159,488 |
| | | | 2) Վարկային ռիսկ | 2) 3% | 2) ± 200 բ.կ. | 2) (253,000)/ 213,990 |
| | | | 3) Վերադարձելիության գործակից | 3) 50% | 3) ± 20% | 3) 105,662/ (153,665) |
| **Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ** | | | | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| ***Ածանցյալ պարտավորություններ*** | 245,189 | ԶԴՄՀ | 1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ | 1) 8.635% | 1) ± 150 բ.կ. | 1) 1,855/(1,883) |
| | | | 2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար | 2) 4.670% | 2) ± 75 բ.կ. | 2) (1,119)/1,128 |
| | | | 3) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին | 3) 474.97 | 3) առկա չէ | 3) առկա չէ |
| | | | 4) Արտաքին պարտքի ակնկալվող զուտ գումար | 4) 3,781 հազ. ԱՄՆ դոլար | 4) ±10% | 4) 24,519/ (24,519) |

Ներկայացված աղյուսակները բացահայտում են ածանցյալ պարտավորությունների գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այն դեպքում, երբ խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու համար ոչ դիտարկելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը հանգեցնում է իրական արժեքի էական փոփոխության: Այդ նպատակով էականությունը որոշվել է՝ նկատի առնելով շահույթը կամ վնասը, ընդամենը ակտիվները կամ ընդամենը պարտավորությունները (կամ ընդամենը սեփական կապիտալը՝ երբ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համա-

պարփակ ֆինանսական արդյունքում): Ներկայացված աղյուսակում բացահայտված իրական արժեքի գնահատման զգայունությունը ցույց է տալիս գնահատման արդյունքի փոփոխության ուղղությունը համապատասխան ելակետային փոփոխականների ավելացման կամ նվազեցման դեպքում:

***(բ) Մակարդակ 3-ի իրական արժեքի պարբերական գնահատումների գործընթացներ***

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում իրական արժեքի գնահատումները պարբերաբար դիտարկվում են Խմբի հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչությունների կողմից՝ որոշում կայացնելով գնահատման մեթոդի ելակետային տվյալների վերլուծության և օգտագործվող գնահատման մեթոդի համապատասխանության վերաբերյալ:

Մակարդակ 3-ում գործիքները գնահատվում են գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի զուտ բերված արժեքով՝ օգտագործելով յուրաքանչյուր ֆինանսական գործիքի առանձնահատկությունների հիման վրա որոշված զեղչման դրույքները: Անհրաժեշտության դեպքում Խմբի կողմից կիրառվում է հետադարձ թեստավորում:

***(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում***

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող ակտիվների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | | | 31 դեկտեմբերի 2014 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Մակար-դակ 1 | Մակար-դակ 2 | Մակար-դակ 3 | Հաշվե-կշռային արժեք | Մակար-դակ 1 | Մակար-դակ 2 | Հաշվե-կշռային արժեք |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | | |
| ***Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով*** | | | | | | | |
| - Նոստրո հաշիվներ | - | 253,102,636 | - | **253,102,636** | - | 185,210,899 | **185,210,899** |
| - ժամկետային ավանդներ | - | 15,493,099 | - | **15,440,510** | - | 28,792,806 | **28,792,806** |
| - Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ | - | 1,952,562 | - | **1,952,562** | - | 2,789,677 | **2,789,677** |
| - Հետգնման պայմանագրեր | - | - | - | **-** | - | 21,378,513 | **21,378,513** |
| - Տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժա | - | - | - | **-** | - | 124,081 | **124,081** |
| - Այլ | - | - | - | **-** | - | 50,240 | **50,240** |
| ***Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով*** | | | | | | | |
| - Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ | - | 122,365,066 | - | **122,365,066** | - | 227,566,937 | **227,566,937** |
| - Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | - | 85,653,331 | - | **85,351,415** | - | 64,631,779 | **64,620,390** |
| - Հիփոթեքային վերաֆինանսավորում | - | 49,183,495 | - | **49,183,495** | - | 38,119,840 | **39,868,360** |
| - Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ | - | 42,431,842 | - | **42,527,391** | - | 29,772,716 | **29,947,531** |
| - Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր | - | - | 3,610,240 | **6,448,154** | - | - | **-** |
| - Ստորադաս պայմաններով վարկեր | - | 3,068,234 | - | **3,079,245** | - | 12,539,067 | **12,618,347** |
| - Այլ վարկեր | - | 7,536,402 | - | **7,821,877** | - | 6,899,204 | **7,233,785** |
| ***Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթեր*** | | | | | | | |
| - Պետական պարտատոմսեր | 16,232,891 | - | - | **16,232,827** | 52,171,940 | - | **52,160,613** |
| - Պետական գործակալությունների պարտատոմսեր | 29,834,116 | - | - | **29,810,650** | 23,702,517 | - | **23,692,490** |
| - Այլ արժեթղթեր | 17,695,047 | - | - | **17,690,236** | 18,322,541 | - | **18,297,256** |
| **Ընդամենը** | **63,762,054** | **580,786,667** | **3,610,240** | **651,006,064** | **94,196,998** | **617,875,759** | **714,351,925** |

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական և այլ կազմակերպություններում արտերկրյա և տեղական արժույթով հաշիվների և ավանդների, ԱՄՀ-ին վճարվելիք գումարների և այլ փոխառու միջոցների հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրանց իրական արժեքին: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | 31 դեկտեմբերի 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 2 | Հաշվեկշռային արժեք | Մակարդակ 2 | Հաշվեկշռային արժեք |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| ***Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ*** | | | | |
| ***Պարտավորություններ արտարժույթով*** | | | | |
| - Կառավարության ընթացիկ հաշիվներ | 1,061,467 | **1,061,467** | 2,839,117 | **2,839,117** |
| - Կրեդիտորական պարտք | 248,105 | **248,105** | 145,652 | **145,652** |
| ***Պարտավորություններ տեղական արժույթով*** | | | | |
| - Կառավարության ընթացիկ հաշիվներ | 46,845,662 | **46,845,662** | 78,741,063 | **78,741,063** |
| - Ժամկետային ավանդներ | 86,173,942 | **86,130,956** | 35,157,816 | **35,191,972** |
| - Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 2,253,561 | **2,253,561** | 2,897,476 | **2,897,476** |
| ***- Թողարկված պարտատոմսեր*** | 3,054,691 | **3,244,388** | 3,973,086 | **4,040,952** |
| **Ընդամենը** | **139,637,428** | **139,784,139** | **123,754,210** | **123,856,232** |

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում և մակարդակ 3-ում իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մեթոդը՝ կիրառելով համանման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքներ:

## 30. Ռիսկերի կառավարում

### *Ներածություն*

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ հաշվետու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային,

իրացվելիության և շուկայական ռիսկերի. Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ վերահսկման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Ռիսկերի բացահայտման և վերահսկման վերջնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

### *Խորհուրդը*

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

### *Ինստիտուցիոնալ հիմքերը*

ՀՀ միջազգային պահուստները ոչ ռեզիդենտների նկատմամբ Բանկի պահանջներն են՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Բանկի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված գործիքներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

2007 թվականից սկսած որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերի լավագույն փորձը՝ Բանկը սահմանել է միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Խմբի կողմից ներդրվել է որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշների ընտրության իրավասությունը պատվիրակվել է Բանկի ներդրումային հանձնաժողովին: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշների և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

### *Կառավարում և վերահսկողություն*

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական վարչությունը: Ֆինանսական վարչության բաժիններից մեկը՝ Արտաքին շուկաներում գործառնությունների բաժինը, իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Նույն վարչության Միջազգային ռիսկերի կառավարման բաժինը պատասխանատու է ռիսկերի գնահատման, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշների մշակման, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալը: Հանձնաժողովը նախկինում բացառապես խորհրդատվական մարմին էր, սակայն պահուստների կառավարման եռամակարդակ համակարգի ներդրումից հետո վերջինիս շնորհվել է որոշումներ կայացնելու իրավասություն:

Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ֆինանսական վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ Կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

### *Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը*

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման պայմաններում եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով: Այս նպատակով Բանկի Ֆինանսական վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշների նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար Բանկի խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշները ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

### *Վարկային ռիսկ*

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբն իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու համար գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և վերազգային կազմակերպությունների թողարկած արժեթղթերի համար: Այդ վարկանիշները չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Վարկային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս հնարավորություն է տալիս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա գնահատելու ընկերության անվճարունակության հավանականությունը: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող վարկանիշների բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և վարկային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

### *Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Վարկային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

### *Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ այլ վարկային ապահովման*

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընդհանուր ենթարկվածությունը վարկային ռիսկին՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու:

*հազար ՀՀ դրամ*

| | Ծնթգ. | Համախառն առավելագույն ռիսկի չափ 2015 թ. դեկտեմբերի 31-ին | Համախառն առավելագույն ռիսկի չափ 2014 թ. դեկտեմբերի 31-ին |
|---|---|---|---|
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 12 | 270,495,708 | 238,346,216 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 12 | 316,776,643 | 381,855,350 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 13 | 514,428,100 | 357,384,451 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 14 | 103,306 | - |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 15 | 100,675,339 | 126,459,816 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 15 | 63,733,713 | 94,150,359 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 16 | 1,383,162 | 2,963,798 |
| | | | |
| **Ընդամենը վարկային ռիսկ** | | **1,267,595,971** | **1,201,159,990** |

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, վերը ներկայացված գումարները ցույց են տալիս ընթացիկ ռիսկը, բայց ոչ առավելագույնը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

### *Վարկային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի*

Բանկի ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ Բանկի գործընկերներին Fitch IBCA, Moody's և Standard & Poor's վարկանշային գործակալությունների կողմից նշանակված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ Moody's վարկանշային գործակալության կոդերի՝ օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համապատասխանության աղյուսակը: AAA+ վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի ֆինանսական հաստատությունների, ինչպիսին է Միջազգային հաշվարկների բանկը (BIS), նույնականացման համար:

*հազար ՀՀ դրամ*

| | Վարկային վարկանիշ | 31 դեկտեմբերի 2015 թ. | | 31 դեկտեմբերի 2014 թ. | |
|---|---|---|---|---|---|
| | | Գումար | %-ը ֆինանսական ակտիվներում | Գումար | %-ը ֆինանսական ակտիվներում |
| **Ֆինանսական ակտիվներ՝ ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված** | | | | | |
| ***Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով*** | | | | | |
| - Նոստրո հաշիվներ | P-1 | 251,353,280 | 92.9 | 183,871,754 | 77.1 |
| | P-2 | 969,674 | 0.4 | 213,764 | 0.1 |
| | Վարկանիշ առկա չէ | 379,357 | 0.1 | 250,917 | 0.1 |
| | NP | 400,325 | 0.2 | 874,464 | 0.4 |
| - ժամկետային ավանդներ | P-1 | 13,988,450 | 5.2 | 27,367,053 | 11.5 |
| | Վարկանիշ առկա չէ | 1,452,060 | 0.5 | 1,425,753 | 0.6 |
| - Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և տոկոսադրույքի ֆյուչերսի պարտադիր մարժա | P-1 | 1,952,562 | 0.7 | 2,913,758 | 1.2 |
| - Հետգնման պայմանագրեր | P-1 | - | - | 21,378,513 | 9.0 |
| - Այլ | P-1 | - | - | 50,240 | 0.0 |
| **Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով** | | **270,495,708** | **100.0** | **238,346,216** | **100.0** |
| ***Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ*** | | | | | |
| - Պետական պարտատոմսեր | Aaa | 3,207,670 | 0.6 | 12,344,939 | 3.5 |
| | Aa1-Aa3 | 255,403,079 | 49.6 | 150,876,324 | 42.2 |
| | A1 | 3,417,506 | 0.7 | - | - |
| – Պետական գործակալությունների պարտատոմսեր և այլ արժեթղթեր | Aaa | 45,814,452 | 8.9 | 52,287,214 | 14.6 |
| | Aa1-Aa3 | 55,344,888 | 10.8 | 40,422,297 | 11.3 |
| | A1-A3 | 22,247,667 | 4.3 | 9,637,670 | 2.7 |
| - Այլ արժեթղթեր | Aaa | 28,822,144 | 5.6 | 37,318,878 | 10.4 |
| | Aa1-Aa3 | 90,992,039 | 17.7 | 52,379,259 | 14.7 |
| | A1-A3 | 7,512,907 | 1.5 | - | - |
| - ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | Ba2 | 1,665,748 | 0.3 | 2,117,870 | 0.6 |
| **Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ** | | **514,428,100** | **100.0** | **357,384,451** | **100.0** |
| ***Վաճառքի համար մատչելի ակտիվներ*** | | | | | |
| - ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր | Ba2 | 13,770,172 | 13.7 | 14,722,231 | 11.6 |
| - ՀՀ կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ | Ba2 | 81,275,373 | 80.7 | 106,175,637 | 84.0 |
| - Կորպորատիվ պարտատոմսեր | Վարկանիշ առկա չէ | 5,629,794 | 5.6 | 5,561,948 | 4.4 |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ** | | **100,675,339** | **100.0** | **126,459,816** | **100.0** |
| ***Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ*** | | | | | |
| - Պետական պարտատոմսեր | Aa1-Aa3 | 5,386,249 | 8.4 | 1,514,720 | 1.6 |
| | A1-A2 | 10,846,578 | 17.0 | 50,645,893 | 53.8 |
| - Պետական գործակալությունների պարտատոմսեր | Aaa | 7,429,017 | 11.7 | 9,866,385 | 10.4 |
| | Aa1-Aa2 | 7,209,037 | 11.3 | 13,826,105 | 14.7 |
| | A1-A3 | 15,172,596 | 23.8 | - | - |
| - Այլ արժեթղթեր | Aaa | 11,524,205 | 18.1 | 14,376,835 | 15.3 |
| | Aa1 | 6,166,031 | 9.7 | 3,920,421 | 4.2 |
| **Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ** | | **63,733,713** | **100.0** | **94,150,359** | **100.0** |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ հաշիվներն ու ժամկետային ավանդները՝ ներառված վարկանիշ չունեցող վարկային խմբում, կազմել են համապատասխանաբար 372,798 հազար ՀՀ դրամ և 1,452,060 հազար ՀՀ դրամ (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 137,539 հազար ՀՀ դրամ և 1,425,753 հազար ՀՀ դրամ), հանդիսանում են Խմբի դուստր ընկերությունների՝ տեղական առևտրային բանկում ընթացիկ հաշիվներ և ներդրված ավանդներ:

5,629,794 հազար ՀՀ դրամ արժեքով չվարկանշված կորպորատիվ պարտատոմսերը հանդիսանում են Խմբի դուստր ընկերություններից մեկի ներդրումները տեղական ներդրումային և զարգացման հիմնադրամներում (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,561,948 հազար ՀՀ դրամ):

*հազար ՀՀ դրամ*

| | Վարկային վարկանիշ | 31 դեկտեմբերի 2015 թ. | | 31 դեկտեմբերի 2014 թ. | |
|---|---|---|---|---|---|
| | | Գումար | %-ը ֆինանսական ակտիվներում | Գումար | %-ը ֆինանսական ակտիվներում |
| ***Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով*** | | | | | |
| - Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 122,365,066 | 100.0 | 227,566,937 | 100.0 |
| **Ընդամենը** | | **122,365,066** | **100.0** | **227,566,937** | **100.0** |
| - Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 4,122,009 | 4.8 | 2,989,021 | 4.6 |
| | Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ | 81,229,406 | 95.2 | 61,631,369 | 95.4 |
| **Ընդամենը** | | **85,351,415** | **100.0** | **64,620,390** | **100.0** |
| - Հիփոթեքային վերաֆինանսավորում | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 2,108,231 | 4.3 | 1,830,026 | 4.6 |
| | Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ | 47,075,264 | 95.7 | 38,038,334 | 95.4 |
| **Ընդամենը** | | **49,183,495** | **100.0** | **39,868,360** | **100.0** |
| - Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 9,048,048 | 21.3 | 7,390,657 | 24.7 |
| | Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ | 33,479,343 | 78.7 | 22,556,874 | 75.3 |
| **Ընդամենը** | | **42,527,391** | **100.0** | **29,947,531** | **100.0** |
| - Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 148,154 | 2.3 | - | - |
| | Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ | 6,300,000 | 97.7 | - | - |
| **Ընդամենը** | | **6,448,154** | **100.0** | **-** | **-** |
| - Ստորադաս պայմաններով վարկեր | Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո | 1,295,790 | 42.1 | 3,231,176 | 25.6 |
| | Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ | 1,783,455 | 57.9 | 9,387,171 | 74.4 |
| **Ընդամենը** | | **3,079,245** | **100.0** | **12,618,347** | **100.0** |
| - Այլ վարկեր | | 7,821,877 | 100.0 | 7,233,785 | 100.0 |
| **Ընդամենը** | | **7,821,877** | **100.0** | **7,233,785** | **100.0** |
| **Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով** | | **316,776,643** | **-** | **381,855,350** | **-** |

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերակատարումը և, հետևաբար, չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Այսպիսով, տվյալ ակտիվների վարկային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

### *Արժեզրկման գնահատում*

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. Արդյո՞ք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օր, արդյո՞ք հայտնի են գործընկերների ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբն արժեզրկման գնահատումն իրականացնում է երկու պահուստների մակարդակով. անհատական և խմբային հիմունքներով գնահատվող պահուստներ:

### *Անհատապես գնահատվող պահուստներ*

Խումբը սահմանում է Խմբի ֆինանսական ակտիվներում յուրաքանչյուր անհատապես նշանակալի ակտիվի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման իրացման արժեքը, ինչպես նաև ակնկալվող դրամական միջոցների ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

### *Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ*

Անհատապես էական չհանդիսացող վարկերի, ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշներ չունեցող ֆինանսական ակտիվների գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր վարկային պայուսակ դիտարկվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պայուսակի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշների բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պայուսակի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական

պայմանները, համապատասխան մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի, որ պահանջվում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծումը, ինչպես նաև ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

### *Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում*

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր (2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ օտարերկրյա ֆինանսական հաստատությունների և առևտրային բանկերի հետ), որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և որոնք էլ դեֆոլտի դեպքում ենթական են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ, որոնք գրավ են հանդիսանում իր չհատուցված ածանցյալ գործիքների համար: Դեֆոլտի դեպքում հավատարմագրային կառավարիչը կարող է մարժային ավանդի հետ հաշվանցել Խմբի պարտավորությունները:

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորություններն ըստ աշխարհագրական կենտրոնացման.

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | | | 31 դեկտեմբերի 2014 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հայաստան | ՏՀՋԿ | ԱՊՀ և այլ երկրների բանկեր | Ընդամենը | Հայաստան | ՏՀՋԿ | ԱՊՀ և այլ երկրների բանկեր | Ընդամենը |
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Կանխիկ դրամ | 12,117,804 | - | - | **12,117,804** | 18,230,986 | - | - | **18,230,986** |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 1,824,858 | 268,228,226 | 442,624 | **270,495,708** | 1,563,292 | 235,795,132 | 987,792 | **238,346,216** |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 316,776,643 | - | - | **316,776,643** | 381,855,350 | - | - | **381,855,350** |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 1,665,748 | 512,762,352 | - | **514,428,100** | 2,117,870 | 355,266,581 | - | **357,384,451** |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | - | 103,306 | - | **103,306** | - | - | - | **-** |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 101,286,020 | 2,222,840 | - | **103,508,860** | 127,026,270 | 2,718,999 | - | **129,745,269** |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | 63,733,713 | - | **63,733,713** | - | 94,150,359 | - | **94,150,359** |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | - | 63,055,674 | - | **63,055,674** | - | 66,268,240 | - | **66,268,240** |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | - | - | - | **-** | 2,757,046 | - | - | **2,757,046** |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 78,621,958 | - | - | **78,621,958** | 80,016,592 | - | - | **80,016,592** |
| Այլ ակտիվներ | 12,594,907 | 97,231 | - | **12,692,138** | 10,489,194 | - | - | **10,489,194** |
| **Ընդամենը ակտիվներ** | **524,887,938** | **910,203,342** | **442,624** | **1,435,533,904** | **624,056,600** | **754,199,311** | **987,792** | **1,379,243,703** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 413,613,757 | - | - | **413,613,757** | 412,344,941 | - | - | **412,344,941** |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 511,557,358 | 10,116 | 239,349 | **511,806,823** | 474,081,734 | 12,967 | 70,297 | **474,164,998** |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 30,727 | - | - | **30,727** | 833,832 | - | - | **833,832** |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 136,539,751 | - | - | **136,539,751** | 119,815,280 | - | - | **119,815,280** |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | - | 252,939,131 | - | **252,939,131** | - | 261,737,845 | - | **261,737,845** |
| Այլ փոխառություններ | - | 96,443,995 | 3,496,469 | **99,940,464** | - | 69,069,256 | 3,589,001 | **72,658,257** |
| Թողարկված պարտատոմսեր | 3,244,388 | - | - | **3,244,388** | 4,040,952 | - | - | **4,040,952** |
| Այլ պարտավորություններ | 3,168,021 | 236,945 | 2,701 | **3,407,667** | 2,515,982 | 214,097 | - | **2,730,079** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,068,154,002** | **349,630,187** | **3,738,519** | **1,421,522,708** | **1,013,632,721** | **331,034,165** | **3,659,298** | **1,348,326,184** |
| **Զուտ ակտիվներ** | **(543,266,064)** | **560,573,155** | **(3,295,895)** | **14,011,196** | **(389,576,121)** | **423,165,146** | **(2,671,506)** | **30,917,519** |

*Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման, Կառավարության արտաքին վճարումների սպասարկման, ինչպես նաև ներքին շուկայում ազգային արժույթի կտրուկ տատանումների հարթեցման համար: Այս տեսանկյունից կարևորվում է կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները՝ ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշների ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն*

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ մնացորդային պայմանագրային ժամկետայնության: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ածանցյալները ներառված են վճարվելիք կամ ստացվելիք պայմանագրային գումարներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն ակնկալում է մինչև մարման ժամկետը փակել ածանցյալի դիրքը, որի դեպքում ածանցյալները ներառվում են՝ ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա:

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ և 1 ամսից քիչ | 1-ից մինչև 3 ամիս | 3 ամսից մինչև 1 տարի | 1-ից մինչև 5 տարի | 5 տարուց ավելի | Առանց մարման ժամկետի | Ընդամենը |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 413,613,757 | - | - | - | - | - | **413,613,757** |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 511,807,135 | - | - | - | - | - | **511,807,135** |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 30,727 | - | - | - | - | - | **30,727** |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 53,464,719 | 51,939,121 | 31,308,835 | 1,773,122 | - | - | **138,485,797** |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | - | 290,480 | 11,785,539 | 77,758,565 | 47,518,545 | 120,655,398 | **258,008,527** |
| Այլ փոխառություններ | 399,207 | - | 5,963,948 | 33,546,794 | 73,919,379 | - | **113,829,328** |
| Թողարկված պարտատոմսեր | - | - | 344,000 | 3,754,389 | - | - | **4,098,389** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **979,315,545** | **52,229,601** | **49,402,322** | **116,832,870** | **121,437,924** | **120,655,398** | **1,439,873,660** |

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2014 թ. | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ և 1 ամսից քիչ | 1-ից մինչև 3 ամիս | 3 ամսից մինչև 1 տարի | 1-ից մինչև 5 տարի | 5 տարուց ավելի | Առանց մարման ժամկետի | Ընդամենը |
| ***Ֆինանսական պարտավորություններ*** | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 412,344,941 | - | - | - | - | - | **412,344,941** |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 472,143,743 | 2,023,364 | - | - | - | - | **474,167,107** |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 245,189 | - | 588,643 | - | - | - | **833,832** |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 86,917,347 | 30,010,248 | 832,849 | 2,561,132 | - | - | **120,321,576** |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | - | 2,312,116 | 7,958,641 | 91,445,414 | 41,848,174 | 123,848,396 | **267,412,741** |
| Այլ փոխառություններ | 372,481 | - | 4,402,785 | 23,691,905 | 50,271,069 | - | **78,738,240** |
| Թողարկված պարտատոմսեր | 799,412 | - | 365,078 | 3,906,462 | - | - | **5,070,952** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **972,823,113** | **34,345,728** | **14,147,996** | **121,604,913** | **92,119,243** | **123,848,396** | **1,358,889,389** |

### *Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի, տոկոսադրույքների և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների: Բացի արտարժույթի կենտրոնացման ռիսկից, Խումբը շուկայական ռիսկի զգալի կենտրոնացում չունի:

*Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: Այն նաև սահմանում է պայուսակի օպտիմալացման սկզբունքները: Բանկի Խորհրդի՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս՝ երեք տարի) և 95% հավանականությամբ ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով՝ ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշների ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշների սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդների վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Բլեք-Լիթերմանի և Մարկովիցի մոդելների միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ինչ վերաբերում է ռիսկի մոնիթորինգին, ապա Ֆինանսական վարչության ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

| Արժույթ | 2015 թ. | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ. | Ազդեցությունը սեփական կապիտալի վրա | Եկամտաբերության կորի փոփոխությունը բ.կ. | Ազդեցությունը սեփական կապիտալի վրա |
| ՀՀ դրամ | +150 | (557,815) | +150 | (699,012) |
| ՀՀ դրամ | -150 | 611,395 | -150 | 771,920 |

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է 2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Ներկայացված գումարներն արտահայտված են աղյուսակում նշված արժույթներին համապատասխան:

| Արժույթ | 2015 թ. | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Բազիսային կետերի փոփոխություն | Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում) | Բազիսային կետերի փոփոխություն | Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում) |
| ԱՄՆ դոլար | +/-25 | (975,175)/975,175 | +/-25 | (884,287)/884,287 |
| Եվրո | +/-25 | (773,723)/773,723 | +/-25 | (982,279)/982,279 |

2015 թ. դեկտեմբերի 31-ի և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի նաև լողացող տոկոսադրույքով չմարված պարտավորություններ:

Ստորև աղյուսակը ներկայացնում է 2015 թ. դեկտեմբերի 31-ի և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

| Արժույթ | 2015 թ. | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Բազիսային կետերի փոփոխություն | Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ) | Բազիսային կետերի փոփոխություն | Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ) |
| ԱՄՆ դոլար | +/- 20 | 46,799/(46,799) | +/- 40 | 94,413/(94,413) |
| ՀՓԻ | +/- 10 | 104,282/(104,282) | +/- 10 | 115,967/(115,967) |

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը լողացող տոկոսադրույքով ներգրավված ավանդներ չունի: Աղյուսակը ներկայացնում է 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից լողացող տոկոսադրույքով ներգրավված և 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ավանդների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

| Արժույթ | | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | | | Բազիսային կետերի փոփոխություն | Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ) |
| Եվրո | | | +/- 10 | 2,021/(2,021) |

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում ներառված իրական արժեքի գնահատման մեթոդի համար օգտագործված ելակետային տվյալների զգայունությունը բացահայտված է Ծնթգ. 29-ում:

*Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով կանոնակարգերի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ՀՀ դրամի նկատմամբ կիրառված փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

| Արժույթ | 2015 թ. | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Փոխարժեքի աճ (%) | Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում) | Փոխարժեքի աճ (%) | Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում) |
| ԱՄՆ դոլար | 16.83% | 69,391,445 | 16.83% | 47,422,901 |
| Եվրո | 20.84% | 17,805,986 | 20.84% | 24,490,301 |
| Բրիտանական ֆունտ | 21.10% | 9,386,843 | 21.10% | 9,733,686 |
| Ճապոնական իեն | 0.16% | 56,262 | 0.18% | 103,700 |
| Ռուսական ռուբլի | 1.22% | 1,493 | 1.22% | 11,039 |
| ՀՓԻ | 39.24% | (75,886,027) | 39.24% | (78,114,450) |

| Արժույթ | 2015 թ. | | 2014 թ. | |
|---|---|---|---|---|
| | Փոխարժեքի նվազում (%) | Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում) | Փոխարժեքի նվազում (%) | Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում) |
| ԱՄՆ դոլար | -16.83% | (69,391,445) | -16.83% | (47,422,901) |
| Եվրո | -20.84% | (17,805,986) | -20.84% | (24,490,301) |
| Բրիտանական ֆունտ | -21.10% | (9,386,843) | -21.10% | (9,733,686) |
| Ճապոնական իեն | -0.16% | (56,262) | -0.18% | (103,700) |
| Ռուսական ռուբլի | -1.22% | (1,493) | -1.22% | (11,039) |
| ՀՓԻ | -39.24% | 75,886,027 | -39.24% | 78,114,450 |

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը որոշվել է Խմբի կողմից՝ հիմք ընդունելով երեք տարիների ընթացքում համապատասխան փոխարժեքների տատանման գրանցված տվյալները: Նշված երեք տարիների

ընթացքում գրանցված առավելագույն տատանման տվյալներն օգտագործվել են զգայունության վերլուծության համար:

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին՝ յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է և արտարժույթի պահանջարկի խթանման հիմնական գործոնը: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

### *Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր ընկերությունների նկատմամբ*

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի կապիտալ ներդրումներ մի քանի դուստր ընկերություններում, որոնք ներգրավված են ֆինանսական հատվածի զարգացման և ենթակառուցվածքների գործունեության մեջ: Նման ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածի զարգացմանը, ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի նպատակներից մեկն է:

Բանկը դուստր ընկերությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն:
- Դուստր ընկերությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր ընկերության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր ընկերության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրեններ):
- Առնվազն յուրաքանչյուր տարի Դուստր ընկերությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության վերանայման միջոցով, ներառյալ դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների վերանայումը:
- Դուստր ընկերությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարություն մշակում:
- Ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա դուստր ընկերությունների գործունեության վերանայում Բանկի ներքին աուդիտի աշխատանքների շրջանակում:

2015 թվականին Բանկը որդեգրել է քաղաքականություն՝ ակտիվացնելու բանակցությունները հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ՝ դուստր ընկերություններում Բանկի ներդրումների օտարման ուղղությամբ:

## 31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակներում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2015 թ. | | |
|---|---|---|---|
| | Ընթացիկ | Ոչ ընթացիկ | Ընդամենը |
| ***Ակտիվներ*** | | | |
| Կանխիկ դրամ | 12,117,804 | - | 12,117,804 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 269,043,647 | 1,452,061 | 270,495,708 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 514,428,100 | - | 514,428,100 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 103,306 | - | 103,306 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 188,842,395 | 127,934,248 | 316,776,643 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 83,539,824 | 19,969,036 | 103,508,860 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 52,948,339 | 10,785,374 | 63,733,713 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 1,383,474 | 61,672,200 | 63,055,674 |
| Հիմնական միջոցներ | - | 76,882,574 | 76,882,574 |
| Ոչ նյութական ակտիվներ | - | 1,739,384 | 1,739,384 |
| Այլ ակտիվներ | 11,944,342 | 747,796 | 12,692,138 |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,134,351,231** | **301,182,673** | **1,435,533,904** |
| ***Պարտավորություններ*** | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 413,613,757 | - | 413,613,757 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 511,806,823 | - | 511,806,823 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 30,727 | - | 30,727 |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 134,935,032 | 1,604,719 | 136,539,751 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 11,153,380 | 241,785,751 | 252,939,131 |
| Այլ փոխառություններ | 4,913,593 | 95,026,871 | 99,940,464 |
| Թողարկված պարտատոմսեր | 44,389 | 3,199,999 | 3,244,388 |
| Այլ պարտավորություններ | 3,375,479 | 32,188 | 3,407,667 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,079,873,180** | **341,649,528** | **1,421,522,708** |
| **Զուտ դիրք 2015թ. դեկտեմբերի 31-ին** | **54,478,051** | **(40,466,855)** | **14,011,196** |

*հազար ՀՀ դրամ*

| | 31 դեկտեմբերի 2014 թ. | | |
|---|---|---|---|
| | **Ընթացիկ** | **Ոչ ընթացիկ** | **Ընդամենը** |
| ***Ակտիվներ*** | | | |
| Կանխիկ դրամ | 18,230,986 | - | 18,230,986 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 236,921,306 | 1,424,910 | 238,346,216 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 357,384,451 | - | 357,384,451 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 284,417,772 | 97,437,578 | 381,855,350 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 107,899,919 | 21,845,350 | 129,745,269 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 93,404,632 | 745,727 | 94,150,359 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 2,963,960 | 63,304,280 | 66,268,240 |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | 2,757,046 | - | 2,757,046 |
| Հիմնական միջոցներ | - | 78,234,823 | 78,234,823 |
| Ոչ նյութական ակտիվներ | - | 1,781,769 | 1,781,769 |
| Այլ ակտիվներ | 9,736,762 | 752,432 | 10,489,194 |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,113,716,834** | **265,526,869** | **1,379,243,703** |
| ***Պարտավորություններ*** | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 412,344,941 | - | 412,344,941 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 474,164,998 | - | 474,164,998 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | 833,832 | - | 833,832 |
| Պարտավորություններ Կառավարության հանդեպ | 117,568,673 | 2,246,607 | 119,815,280 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 9,349,181 | 252,388,664 | 261,737,845 |
| Այլ փոխառություններ | 4,101,030 | 68,557,227 | 72,658,257 |
| Թողարկված պարտատոմսեր | 844,489 | 3,196,463 | 4,040,952 |
| Այլ պարտավորություններ | 2,657,964 | 72,115 | 2,730,079 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,021,865,108** | **326,461,076** | **1,348,326,184** |
| **Զուտ դիրք 2014. դեկտեմբերի 31-ին** | **91,851,726** | **(60,934,207)** | **30,917,519** |

## 32. Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների

Չափման նպատակների համար ՀՀՄՍ 39-ը «*Ֆինանսական գործիքներ. չափումը և ճանաչումը*» դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) փոխառություններ և դեբիտորական պարտքեր. (բ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. (գ) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և (դ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ (ii) և ակտիվներ, որոնք դասակարգվել են որպես առևտրային նպատակով պահվող: Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների դասակարգումն ըստ նշված չափման կատեգորիաների, առ 31 դեկտեմբերի 2015 թ.

*հազար ՀՀ դրամ*

| | Փոխառություններ և դեբիտորական պարտքեր | Վաճառքի համար մատչելի ակտիվներ | Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ | Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Կանխիկ դրամ | 12,117,804 | - | - | - | 12,117,804 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 270,495,708 | - | - | - | 270,495,708 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 316,776,643 | - | - | - | 316,776,643 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | - | - | 514,428,100 | - | 514,428,100 |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | - | - | 103,306 | - | 103,306 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | 103,508,860 | - | - | 103,508,860 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | - | - | 63,733,713 | 63,733,713 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 1,383,474 | 61,672,200 | - | - | 63,055,674 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **600,773,629** | **165,181,060** | **514,531,406** | **63,733,713** | **1,344,219,808** |

Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների դասակարգումն ըստ նշված չափման կատեգորիաների, առ 31 դեկտեմբերի 2014 թ.:

*հազար ՀՀ դրամ*

| | Փոխառություններ և դեբիտորական պարտքեր | Վաճառքի համար մատչելի ակտիվներ | Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ | Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Կանխիկ դրամ | 18,230,986 | - | - | - | 18,230,986 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 238,346,216 | - | - | - | 238,346,216 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 381,855,350 | - | - | - | 381,855,350 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | - | - | 357,384,451 | - | 357,384,451 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | 129,745,269 | - | - | 129,745,269 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | - | - | 94,150,359 | 94,150,359 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 2,963,960 | 63,304,280 | - | - | 66,268,240 |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **641,396,512** | **193,049,549** | **357,384,451** | **94,150,359** | **1,285,980,871** |

Խմբի բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ածանցյալ գործիքներից, հաշվառված են ամորտիզացված արժեքով առ 31 դեկտեմբերի 2015 թ. և 31 դեկտեմբերի 2014 թ.: Ածանցյալները հաշվառված են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կատեգորիայում: